

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԲԵՐՏ ԴԱԶԱՐՅԱՆ

**Գիտական
հետազոտության
մեթոդաբանական
առանձնահատկությունները**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 001.891
ԳՄԴ 72
Ղ 158

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և
հոգեբանության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

ԱԼԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Ղ 158 Գիտական հետազոտության մեթոդաբանական առանձնահատկությունները/Ա. Ղազարյան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 112 էջ:

Աշխատությունում դիտարկված են գիտական հետազոտության գործընթացը, նրա կառուցվածքը և ձևերը: Առանձնապես ուշադրություն է դարձվել բնագիտական և պատմական գիտելիքների փոխհարաբերության մեթոդաբանական հարցերին:

Նախատեսված է ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են ժամանակակից «Գիտության փիլիսոփայության» հիմնահարցերով:

ՀՏԴ 001.891
ԳՄԴ 72

ISBN 978-5-8084-1978-0

© ԵՊՀ հրատ., 2015
© Ա. Ղազարյան, 2015

Նախաբան

Գիտական հետազոտությունը բարդ գործընթաց է: Այդուամենայնիվ, գիտության մեթոդաբանության մեջ առանձնացվում են գիտելիքի ձևեր ու մեթոդներ, որոնց ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս ավելի լավ պատկերացնելու այդ գործընթացը: Այսինքն այն, թե ինչպես հետազոտողները հիմնահարցեր (պրոբլեմներ) ձևակերպելով, դիտարկումներ, գիտափորձեր կատարելով, պատմական աղբյուրներ ուսումնասիրելով, փաստեր հավաքելով, վարկածներ առաջադրելով ու հիմնավորելով, անցում են կատարում գիտելիքի առավել հասուն, հավաստի, ընդունելի, ճշմարիտ ձևի՝ տեսության ստեղծմանը: Անշուշտ, գիտության տարբեր բնագավառներում այդ ձևերն ունեն իրենց առանձնահատկությունները: Ուստի, համադրելով փորձնական բնագիտության վերը բերված ձևերը պատմական գիտության ձևերի հետ, մեզ ավելի ակնհայտ են դառնում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, այսինքն՝ մարդկային ճանաչողության գործընթացի յուրահատկությունները:

Հիմնահարց

Հիմնահարցը, այլ կերպ՝ պրոբլեմը (probleme), հունարեն բառ է, որը նշանակում է «հարց», «խնդիր», «դժվարություն»:

Ցանկացած բնագավառի գիտական հետազոտություն սկսվում է հիմնահարցի ձևակերպմամբ, ապա առաջադրվում են վարկած կամ վարկածներ, կատարվում է նախնական կռահում, որի ստուգումից, հիմնավորումից հետո ձևակերպվում է տեսությունը:

Նշենք, որ վարկածի միջոցով հիմնահարցից տեսության անցումը գիտական հետազոտության հիմնական նպատակն է:

Հիմնահարցն այնպիսի հարց է, որի պատասխանն առկա չէ հասարակական գիտելիքում: Հիմնահարցն անցում է չիմացությունից իմացության: Գիտելիքի առաջընթացը կարելի է դիտել որպես հիմնահարցերի առաջադրման և լուծման գործընթաց: Յուրաքանչյուր հիմնահարցի լուծում առաջ է բերում բազմաթիվ նոր հիմնահարցեր: Սակայն յուրաքանչյուր հետազոտող գիտի, որ առանց նախնական գիտելիքի, դատարկ տեղում չեն կարող առաջանալ ոչ որևէ հարց, խնդիր, ոչ էլ՝ հիմնահարց: Որպեսզի որևէ հիմնահարց հասկանալի, ըմբռնելի լինի, այն պետք է ձևակերպվի հստակ ու որոշակի՝ ինչպես փաստական, այնպես էլ տեսական գիտելիքների միջոցով: Նկատենք, որ էմպիրիկ, փաստական գիտելիքները ենթադրում են որոշակի տեսական գիտելիքների առկայություն, որոնք փոխալայմանավորում են միմյանց: Ըստ հետազոտողների՝ հիմնահարցերը լինում են էմպիրիկ և տեսական, ընդհանուր և մասնավոր, հիմնարար և կիրառական:

Հիմնահարցը գիտական է համարվում այն դեպքում, եթե այն անհակասական է, ոչ տավտալոգիկ և ունի ինֆորմատիվության բարձր աստիճան:

Հիմնահարցերի առաջացումը կապված է գիտական հետազոտության գործընթացում որոշակի դժվարությունների առաջացման և դրանց լուծման ուղիների որոնումների հետ: Ինչպես

Ա. Էնշտեյնն է նկատել. «Չաճախ հիմնահարցի ձևակերպումն ավելի էական է, քան դրա լուծումը»¹:

Գիտական հետազոտությունը ոչ միայն սկսվում է հիմնահարցի առաջադրմամբ, այլև մշտապես գործ ունի հիմնահարցերի հետ, քանի որ դրանց որոշ մասի լուծումը հանգեցնում է ուրիշ՝ բազմաթիվ նոր հիմնահարցերի առաջացմանը: Գիտական հետազոտության մակարդակն էապես պայմանավորված է նրանով, թե որքան նոր ու արդիական են այն հիմնահարցերը, որոնք հետազոտում են գիտնականները:

Ցանկացած հիմնահարց տարբերվում է հարցից նրանով, որ դրա պատասխանը չի կարելի գտնել գոյություն ունեցող հայտնի միջոցներով: Սովորաբար պրոբլեմային իրավիճակի առաջացումը վկայում է հարցերի, խնդիրների լուծման մեթոդների և միջոցների բացակայության կամ անբավարար լինելու մասին: Չակասություններ են առաջանում եղած գիտական գիտելիքների ծավալների և մակարդակների միջև: Գիտության մեջ այդպիսի իրավիճակ հաճախ առաջանում է նոր փաստեր բացահայտելիս, երբ դրանք ակնհայտորեն չեն տեղավորվում նախկին տեսական պատկերացումների շրջանակներում, երբ ընդունված վարկածները, օրենքները, տեսությունները չեն կարող բացատրել նոր բացահայտված փաստերը: Այդպիսի իրավիճակն ակնհայտորեն դրսևորվում է հատկապես գիտության զարգացման շրջադարձային ժամանակներում, երբ նոր գիտափորձնական արդյունքները, փաստերը ստիպում են նորից վերանայելու գոյություն ունեցող տեսական պատկերացումներն ու մեթոդները:

Այսպես, XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ հայտնագործվեցին ռադիոակտիվությունը, ճառագայթման քվանտային բնույթը, մի քիմիական տարրի վերափոխումը մյուսով, էլեկտրոնների դիֆրակցիան և բազմաթիվ այլ երևույթներ, սկզբնական շրջանում բնագետները փորձեցին դրանք բացատրել այն ժամանակ գոյություն ունեցող պատկերացումներով: Սակայն այդ փոր-

¹ Эйнштейн А., Инфельд Л., Эволюция физики, М., 1965, с. 86.

ծերի անհնարինությունն աստիճանաբար նրանց համոզեց իրա-
ժարվել տեսական հին պատկերացումներից և փնտրել բացատ-
րության նոր սկզբունքներ և մեթոդներ:

Այդ հիմնահարցային իրավիճակն ուղեկցվեց գիտնականնե-
րի կողմից գոյություն ունեցած հին պատկերացումների վերա-
զնահատմամբ:

Մաթեմատիկայում երբեմն հիմնահարցային իրավիճակներ
առաջանում են դրա տարբեր դիսցիպլինների ավելի խորը և
խիստ հիմնավորմամբ: Այսպիսով, գիտության մեջ հիմնահարցա-
յին իրավիճակներն առաջանում են կա՛մ հին տեսությունների և
նոր բացահայտված փաստերի միջև առաջացած հակասություն-
ների, կա՛մ տեսության ոչ բավարար կոռեկտության ու մշակվա-
ծության, կա՛մ ինչպես առաջինի, այդպես էլ երկրորդի միաժամա-
նակյա առկայության պարագայում:

Նախկինում մեթոդաբանական գրականության մեջ այն տե-
սակետն էր իշխում, որ գիտական հետազոտությունը սկսվում է
փաստերի կուտակումից, դրանց ընդհանրացումից և օրինաչա-
փություններ գտնելուց: Սակայն այժմ տիրապետող է դարձել այն
մոտեցումը, որ գիտական հետազոտության ելակետը հիմնա-
հարցն է (պրոբլեմը): Դրա յուրահատկությամբ է պայմանավոր-
ված ցանկացած ուսումնասիրության ինքնատիպությունը: Ավե-
լին, նոր հիմնահարցերի ձևակերպումը, ընկալումը, դրանց լուծ-
ման համար մեթոդների և եղանակների առաջադրումը խոսում
են տվյալ հետազոտողի տաղանդի մասին: Հիմնահարցի ճիշտ
առաջադրումն ու ճշգրիտ, պարզ, կոռեկտ ձևակերպումն այդ
հիմնահարցը լուծելու կարևոր օղակ են :

Ու. Ռ. Էշբին մշել է. «Երբ մենք կկարողանանք հիմնահարցը
ձևակերպել որոշակիությամբ, ապա հեռու չենք լինի դրա լուծու-
մից»²:

² Эшби У. Р., Конструкция мозга, Происхождение адаптивного поведения, М., 1962, с. 20.

Պետք է ասել, որ հիմնահարցերի ճիշտ առաջադրման ու լուծման ոչ մի մշակված եղանակ չկա: Այդ ամենը պայմանավորված է տվյալ գիտնականի տաղանդով, փորձով, գիտելիքներով: Պատահական չէ, որ ամեն մի բնագավառի կարևորագույն հիմնահարցերն առաջադրում են մեծ փորձ ունեցող տաղանդավոր գիտնականները:

Հիմնահարցը ձևակերպելու համար անհրաժեշտ է գնահատել դրա դերը, նշանակությունը գիտության զարգացման մեջ: Վերջին հաշվով, գիտական պրոբլեմների ընտրությունը կախված է գիտության զարգացման ներքին տրամաբանությունից, միտումներից, գիտելիքի այս կամ այն բնագավառի մակարդակից, վիճակից, հասարակական պահանջմունքներից: Առանձնապես մեծ ուշադրության են արժանանում այն հիմնահարցերը, որոնք արդիական են տվյալ ժամանակաշրջանի գիտության համար:

Հիմնահարցերի առաջադրումը վկայում է գիտության մեջ գոյություն ունեցող թերությունների մասին, ուստի հետազոտողների կարևոր խնդիրն է գոյություն ունեցող վարկածներում և տեսություններում քննադատաբար վերլուծել, վեր հանել այդ թերությունները:

Հասում գիտություններում ցանկացած հիմնահարց առաջանում է որոշակի տեսության շրջանակներում, ուստի հիմնահարցի ընտրությունն էապես պատճառաբանվում է եղած տեսական գիտելիքների մակարդակով: Կարելի է ասել, որ յուրաքանչյուր տեսություն լիիրավ պայմանավորում է այն հիմնահարցերի համախումբը, որը կարող է առաջադրվել հետազոտողի կողմից:

Գիտական հետազոտությունում հաճախ հիմնահարցի ընտրությունը կախված է հետազոտության համար անհրաժեշտ տեխնիկայի ու մեթոդների առկայությունից: Դրանցից բացի, գոյություն ունեն նաև սուբյեկտիվ գործոններ, որոնք ոչ պակաս ազդեցություն են թողնում հետազոտության առաջադրման և ընտրության վրա: Դրանց թվում են՝ գիտական հետաքրքրությունը հետազոտվող հարցի շուրջ, դրա մտքի ինքնատիպությունը, գեղագիտությունը, բարոյական բավարարվածությունը:

Հաճախ հիմնարար գիտական շատ հիմնահարցերի լուծումները պահանջում են ավելի նեղ ու մասնավոր հարցերի լուծումներ: Եվ այդ մասնավոր հարցերի լուծումները կարող են հանգեցնել մինչ այդ անլուծելի թվացող ավելի ընդհանուր հիմնահարցի լուծմանը:

Որպեսզի հետազոտությունը լինի արդյունավետ ու նպատակադիր, անհրաժեշտ է, որ գոյություն ունենան հիմնահարցերի առաջադրման և լուծման որոշակի կարգ, մարտավարություն, ուղղվածություն: Միաժամանակ ակնհայտ է, որ գիտական որոնումները չեն կարող իրականացվել անփոփոխ եղանակներով, քանի որ հետազոտության ընթացքում կարող են բացահայտվել նոր, անսպասելի հետազոտական իրավիճակներ: Սակայն դա չի նշանակում, որ պետք է նսեմացնել հետազոտական գործընթացի պլանավորման և կազմակերպման դերը:

Ինչպես նկատեցինք, գիտական գործունեության նպատակը հիմնահարցերի բացահայտումն է, ձևակերպումը և լուծումը: Այն անցնում է որոշակի փուլերի միջով: Նախ առաջադրվում է հիմնահարցի լուծման նախնական վարկածը, որը գնահատվում, անցնում է էմպիրիկ և տեսական հիմնավորումների միջով, և բազմաթիվ այլընտրանքային լուծումներից ընտրվում է ամենահիմնավորն ու արդյունավետը:

Առանց հիմնահարցերի առկայության գիտական հետազոտությունը կորցնում է իր հետաքրքրությունը: Նույնիսկ որոշ փիլիսոփաների կարծիքով, գիտության պատմությունը հիմնահարցերի առաջադրման պատմություն է (Ռ. Գարոտտի, Կ. Պոպեր)³:

Նկատենք, որ հիմնահարցերը առաջադրվում են որոշակի տեսությունների, տեսական համակարգերի շրջանակներում, կրում են դրանց ծանրաբեռնվածությունը: Այսպես օրինակ՝ հիմնահարցը, որից առաջացավ հարաբերականության ընդհանուր տեսությունը, այն է՝ իներտ և գրավիտացիոն մասսաների համեմատականությունը, անիմաստ էր Գալիլեյի ժամանակներում: Այդ

³ Տե՛ս **Poper K.**, Objektive Knowledge. An Evolutionary Approach, Oxford, 1972:

հիմնահարցի առաջադրման համար անհրաժեշտ էր ձգողականության նյութական տեսության առաջացումը:

Հիմնահարցերը պետք է առաջադրվեն այնպես, որ երևան դրանց լուծման եղանակները: Դրա համար անհրաժեշտ են ոչ միայն համապատասխան տեսական ընթերցումներ ու մեթոդներ, այլև բավարար էնպիրիկ ու ոչ էնպիրիկ փաստեր: Բացի այդ, հիմնահարցը պետք է ձևակերպվի ճշգրիտ, որոշակի, պարզ, կոռեկտ, ստուգելի, ազատ ավելորդ ինֆորմացիայից: Դրա նախադրյալները չպետք է լինեն կեղծ և չափազանց ընդգրկուն:

Գիտական հիմնահարցերը համակարգային բնույթի են: Յուրաքանչյուր հիմնահարցի լուծումը հանգեցնում է նոր հիմնահարցերի առաջադրմանը: Ընդ որում, որքան ավելի շատ նոր հիմնահարցեր են առաջանում, այնքան ավելի ինֆորմատիվ, արդյունավետ է համարվում լուծված հիմնահարցը:

Ավելին, գիտության մեթոդաբանության մեջ կարծիք կա, որ գիտական ընթերցումներն «ապրում են» այնքան ժամանակ, քանի դեռ ծնունդ են հիմնահարցեր: Այսպես՝ Արիստոտելի մեխանիկական համարում են «մահացած» տեսություն, քանի որ հիմնահարցեր չի ծնում, իսկ նյութական մեխանիկական «կենդանի» տեսություն, որովհետև մինչ օրս երեք և ավելի մարմինների հիմնահարցը նոր չլուծված հիմնահարցերի աղբյուր է: Նման ձևով և՛ մարդիկ: Քանի դեռ գիտնականը հիմնահարցեր է ձևակերպում և լուծում, գործող գիտնական է: Բավական է՝ հիմնահարցեր չառաջադրի և չլուծի, կղաղարի այդպիսին լինելուց⁴:

⁴ См Кун Т., Структура научных революций, М., 1977. Режабек Е. Я., Научный поиск и его этапы, Ростов на-Дону, 1972. Копнин П. В., Гносеологические и логические основы науки, М., 1974. Ракитов А. И., Философские проблемы науки, М., 1977. Берков В. Ф., Научная проблема, Минск, 1979. Кахановский В. Л., Лешкевич Т. Г., Матяш Т. П., Фатхи Г. Б., Основы философии науки, Ростов-на -Дону, 2004:

Դիտարկում, գիտափորձ

Էմպիրիկ գիտություններում գիտական հետազոտության բաղկացուցիչ տարրերից են դիտարկման և գիտափորձի իրականացումը: Այդ միջոցների օգնությամբ ստեղծվում են էմպիրիկ գիտելիքները: Ժամանակակից մեթոդաբանությունը գտնում է, որ գիտական դիտարկումը շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների նպատակադիր, կազմակերպված ընկալումն է: Ընդ որում, ընկալման ցանկացած գործընթաց կապված է ճանաչող սուբյեկտի պատկերացումների մշակման, համադրման հետ: Երբեմն իրականացվում է սուբյեկտի ապրումների, հոգեկան վիճակի դիտարկում, որը ստացել է ինտրոսպեկցիա անվանումը: Այն կիրառվում է գիտակցության, մտածողության մարդկային վարքի գործընթացներն ուսումնասիրելիս:

Փիլիսոփայության մեջ էմպիրիզմի կողմնակիցները կարծում են, որ դիտարկման ընթացքում հավաքված տվյալների մաքրությունն ու հուսալիությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ այդ տվյալները հավաքվեն առանց նախնական վարկածի կամ դեկլարար գաղափարի: Սակայն ժամանակակից գրականության մեջ տիրապետող է այն մոտեցումը, որ նույնիսկ առօրեական ճանաչողությունում դիտարկումները հիմնվում են մարդկանց նախկին փորձի և վարկածների վրա:

Գիտական դիտարկումները հիմնականում իրականացվում են որոշակի վարկածների և տեսությունների ստուգման, հիմնավորման համար, ուստի դիտարկման արդյունքներն էապես կախված են այդ գիտելիքներից:

Բացի այդ, դիտարկմանը բնորոշ է նաև այն, որ դրա արդյունքները պահանջում են մեկնաբանություն: Այն իրականացվում է որոշակի վարկածների և տեսությունների միջոցով: Դիտարկման տվյալների մեկնաբանությունը գիտնականներին թույլ է տալիս էականն առանձնացնել ոչ էականից, նկատել այն, ինչին ոչ մասնագետը կարող է և ուշադրություն չդարձնել, նույնիսկ բո-

լորովին չբացահայտել: Գիտական դիտարկումը, ի տարբերություն առօրեական դիտարկման, ավելի նպատակադիր է, ուղղորդվում, վերահսկվում է որոշակի գաղափարով: Մինչդեռ առօրեական դիտարկումը հիմնականում հենվում է պրակտիկ փորձի, գիտելիքների վրա:

Ցանկացած դիտարկում ոչ միայն ենթադրում է որոշակի օբյեկտի և այն ընկալող սուբյեկտի առկայություն, այլև իրականացվում է ամրագրված տեղի և ժամանակի պայմաններում: Գիտական դիտարկման առանձնահատուկ տարրեր են նաև այլ սարքեր (մանրադիտակները, հեռադիտակները և այլն), որոնք նվազեցնում են մարդկանց զգայական օրգանների սահմանափակությունը, բարձրացնում են դիտարկման ճշգրտությունը:

Հայտնի է, որ դիտարկումը հենվում է ընկալման վրա, որն աշխարհի պասիվ արտացոլում չէ: Հոգեկանը ոչ միայն արտացոլում է աշխարհը, այլև այն կերտում է: Իրականության այդպիսի ակտիվ յուրացման դեպքում հնարավոր են սխալներ, մոլորություններ, զգայական օրգանների պատրանքներ: Առանձնապես բարդ վիճակ է ստեղծվում դիտարկման այն սխալների դեպքում, որոնք առաջանում են կանխակալ հակումների, պատկերացումների և սուբյեկտիվ այլ գործոնների հետևանքով: Իրավիճակն ավելի է բարդանում, երբ դիմում են միջնորդավորված դիտարկումների, այսինքն՝ եզրակացություններ են արվում անմիջականորեն չընկալվող օբյեկտների բնութագրերի և հատկությունների վերաբերյալ: Գիտության մեջ դիտարկումները պետք է հանգեցնեն այնպիսի արդյունքների, որոնք անկախ են սուբյեկտի ցանկություններից, կամքից, զգայություններից: Այդպիսի արդյունքներ ստանալու համար նույն օբյեկտների, երևույթների դիտարկման արդյունքները պետք է լինեն արտասուբյեկտիվ, վեր լինեն անհատական դիտարկման արդյունքներից: Դրանք պետք է վերլուծվեն ու ճշգրտվեն գոյություն ունեցող տեսական պատկերացումների, գրանցող սարքերի օգնությամբ: Սակայն այն տվյալները, որոնք գրանցվում են սարքերի օգնությամբ, ինքնին դեռ ո-

չինչ չեն ասում: Դրանք պահանջում են որոշակի գնահատականներ, մեկնաբանություններ, որոնք նույնպես իրականացվում են մարդու կողմից: Օբյեկտիվության և ճշգրտության հասնելու ճանապարհներից մեկը դիտարկման արդյունքների վերարտադրությունը, կրկնելիությունն է, դրանց հսկողության ուժեղացումը դիտարկման նյութական և հայեցակարգային միջոցների օգնությամբ:

Հատկապես բարդ են այն դիտարկումները, որոնց օբյեկտներ են ոչ թե որևէ առարկա կամ գործընթաց, այլ ուրիշ առարկաների և երևույթների հետ դրանց ունեցած փոխազդեցության արդյունքները: Այդ դիտարկումները մեթոդաբանական գրականության մեջ ստացել են *միջնորդավորված դիսարկում* անվանումը: Այսպես, ժամանակակից միջուկային և ատոմային ֆիզիկայի, քվանտային քիմիայի, մոլեկուլյար կենսաբանության օբյեկտներն անմիջականորեն դիտարկելի չեն ոչ զգայությունների և ոչ էլ սարքերի միջոցով: Դրանք կարող են դիտարկելի դառնալ, եթե ուսումնասիրենք դրանց փոխազդեցությունը այլ օբյեկտների և գործընթացների հետ: Այդ դեպքում մենք փաստորեն անմիջականորեն կդիտարկենք ոչ թե միկրոօբյեկտներն ու գործընթացները, այլև այլ օբյեկտների հետ դրանց ունեցած փոխազդեցության հետքերը, օրինակ՝ Վիլսոնի խցում լիցքավորված մասնիկների հատկությունների ուսումնասիրությունները: Այդպիսի միջանկյալ դիտարկման արդյունքների մեկնաբանությունները անհրաժեշտաբար ենթադրում են որոշակի վարկածների և տեսությունների գոյություն, որոնք պետք է քննադատաբար ստուգվեն:

Դիտարկման էական տարբերությունը գիտափորձից այն է, որ իրականացվում է առանց ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների որևէ փոփոխության: Դիտարկողը չի միջամտում իրերի բնականոն ընթացքին: Այն իրականացվում է բնական պայմաններում, սակայն ոչ պասիվ ձևով: Գիտական դիտարկումը նպատակադիր, անկողմնակալ, կազմակերպված, սիստեմատիկ, ընտրողաբար, տեսական պատկերացումների հսկողությամբ ի-

րականացվող գործունեություն է: Այն գործունեություն է, որը չի ազդում հետազոտվող օբյեկտի վրա, չի փոփոխում այն: Երբեմն գիտնականները ստիպված են դիմում դիտարկմանը, որովհետև հետազոտվող օբյեկտները հասանելի չեն մարդկային պրակտիկ գործունեության ոլորտին: Օրինակ՝ տիեզերական օբյեկտները՝ աստղերը, միգամածությունները և այլն, գիտնականները ուսումնասիրում են դիտարկման ճշգրտությունն ու հնարավորությունները մեծացնող սարքերի միջոցով:

Գիտական հետազոտությունում դիտարկումն ունի երկու գործառույթ: Առաջին՝ այն ապահովում է էմպիրիկ ինֆորմացիան եւ անհրաժեշտ է ինչպես նոր հիմնահարցերի, այդպես էլ նոր վարկածների առաջադրման ու ստուգման համար: Դա, իհարկե, չի նշանակում, որ դիտարկման և գիտափորձի ժամանակ գիտնականները չեն ղեկավարվում որոշակի գաղափարներով, վարկածով կամ տեսությամբ: Իրականում տեսությունն ու փորձը ոչ միայն փոխազդում են միմյանց վրա, այլև ներթափանցում են միմյանց մեջ:

Դիտարկման երկրորդ գործառույթն այնպիսի վարկածների ու տեսությունների ստուգումն է, որը հնարավոր չէ կատարել գիտափորձնական եղանակով: Անշուշտ, վարկածի գիտափորձնական հաստատումը կամ հերքումը նախընտրելի է: Սակայն այնտեղ, որտեղ անհնար է գիտափորձ իրականացնել, վկայություններ կարող են լինել դիտարկման այն տվյալները, որոնք ուղեկցվում են ճշգրիտ չափումներով: Ասվածը հաստատում է աստղագիտության զարգացման պատմությունը:

Դիտարկման արդյունքների հավաստիությունը որոշվում է այն բանով, թե որքանով են միմյանցից անկախ, տարբեր վայրերում օբյեկտների նկատմամբ կատարված չեզոք դիտարկման արդյունքները համընկնում միմյանց:

Գիտափորձ

Գիտափորձի՝ որպես էմպիրիկ հետազոտության տարրի առանձնահատկությունն այն է, որ դրանում հետազոտողը չի սահմանափակվում երևույթների պասիվ դիտարկմամբ, այլ գիտակցաբար մտնում է դրա բնական ընթացքի մեջ: Նման ձևով նա կարող է անմիջականորեն ազդել հետազոտվող գործընթացի վրա, փոփոխել այն պայմանները, որոնցում տեղի են ունենում այդ գործընթացները: Ասպիսով, ի տարբերություն դիտարկման, գիտափորձի ժամանակ ակտիվորեն ազդում են գործընթացի վրա, և գիտափորձը վերածվում է էմպիրիկ հետազոտության արդյունավետ մեթոդի: Այդ արդյունավետությունը պայմանավորված է այն բանով, որ գիտափորձը ամրագրվում և վերահսկվում է, իսկ նրա արդյունքները մեկնաբանվում են տեսական դրույթների կողմից: Այժմ էմպիրիկ բնագիտության հսկայական առաջընթացը կապում են գիտափորձնական մեթոդի հետ, որը զուգակցվում է ճշգրիտ չափումներով տվյալների մաթեմատիկական մշակմամբ:

Գիտափորձի ընդհանուր կառուցվածքը տարբերվում է դիտարկումից այն բանով, որ դրանում, բացի ուսումնասիրվող օբյեկտից և հետազոտողից, անհրաժեշտաբար ներառվում են նաև նյութական այն միջոցները (օրինակ՝ գիտափորձնական սարքերը, չափողական տեխնիկան և այլն), որոնք ուսումնասիրվող օբյեկտներն ավելի լավ ճանաչելու, դրանցից ճշգրիտ, մաքուր ինֆորմացիա ստանալու համար ազդում, ձևափոխում են ճանաչվող օբյեկտներն ու գործընթացները: Գիտափորձը կառուցվում է այնպես, որ ապահովի այն բոլոր էական գործոնների ճշգրիտ չափումը, որոնք ազդում են հետազոտվող օբյեկտների և գործընթացների վրա: Այդպիսի գիտափորձի իրականացումը պահանջում է լրջագույն արձանագրող սարքեր և բարդ մաթեմատիկական մշակումներ:

Նկատենք, որ գիտնականը նախքան գիտափորձ դնելը պետք է ունենա ոչ միայն դրա իրականացման ընդհանուր գաղափարը, այլև մտածի դրա պլանը և հնարավոր արդյունքների մասին: Այս կամ այն տիպի գիտափորձի, ինչպես նաև դրա իրականացման կոնկրետ պլանի ընտրությունն էապես կախված է այն գիտական հիմնահարցից, որը գիտնականը մտադրված է լուծելու փորձով:

Ինչպես նշեցինք, ցանկացած գիտափորձ սկսվում է այնպիսի հիմնահարցից, որը պահանջում է գիտափորձնական լուծում: Երբ գիտական հիմնահարցը ճշգրիտ ձևակերպված է, անհրաժեշտություն է զգացվում առանձնացնելու գիտափորձի վրա էական ազդեցություն թողնող գործոնները այն գործոններից, որոնք կարելի է հաշվի չառնել: Եթե ուսումնասիրվող երևույթների մասին ունենք բավականին լավ մշակված տեսություն, ապա էական գործոնները կարելի է ավելի հեշտ առանձնացնել, իսկ եթե ուսումնասիրությունը նոր է սկսվել կամ ուսումնասիրվող բնագավառը նոր է, ապա ուսումնասիրվող գործընթացների վրա ազդող գործոններն առանձնացնելը բավականին դժվար է: Ընդ որում, էական գործոն հասկացությունը հարաբերական է և կախված է գիտափորձի խնդիրներից, պայմաններից, գիտական գիտելիքի զարգացածության մակարդակից:

Գիտափորձի տվյալների մշակումից հետո հետազոտվող երևույթների կախվածությունները կարող են ընդհանրացվել և ներկայացվել քանակական հարաբերությունների, մաթեմատիկական ձևակերպումների, բանաձևերի, էմպիրիկական օրինաչափությունների տեսքով:

Միաժամանակ, այն սարքերը, տեխնիկան, որոնք օգտագործվում են գիտափորձի ժամանակ, պետք է ոչ միայն գործնականում ստուգվեն, այլև ձևականորեն հիմնավորվեն: Ընդ որում՝ նաև այլ մեթոդներով:

Գիտափորձի արդյունքները ենթարկվում են վիճակագրական վերլուծության, որպեսզի բացառվեն հնարավոր սխեմատիկ

սխալները: Նույնիսկ անհատական գիտափորձերի դեպքում դրանք իրականացվում են բազմաթիվ անգամներ: Նկատենք, որ գիտափորձը տեսությունից կախված է ոչ միայն գիտափորձի ծրագրելիս, այլև դրա արդյունքները մեկնաբանելիս: Գիտափորձի արդյունքները կարող են բացատրվել արդեն գոյություն ունեցող վարկածների և տեսությունների շրջանակներում: Դրանք կարող են դուրս գալ հայտնի գիտելիքների շրջանակներից և մեկնաբանվել նոր վարկածների տեսանկյունից, կամ այդ արդյունքները կարող են ձևափոխել հայտնի տեսությունների տարրերը, կամ առաջադրել բոլորովին նոր վարկածներ: Դրանք կարող են ստուգել ու ճշգրտել նախնական կռահումներն ու վարկածները:

Գիտափորձի առավելությունը դիտարկումից այն է, որ հետազոտողը հնարավորություն է ստանում արհեստական միջոցներ, պայմաններ ստեղծելու, ակտիվորեն, նպատակադիր ձևով ազդելու, ձևափոխելու հետազոտվող օբյեկտներն ու երևույթները, զատելու էական գործոնները ոչ էականից: Ինչպես նաև հնարավոր է դառնում դրանք հետազոտել տարբեր պայմաններում, պարզեցնել կամ բարդացնել, վերահսկել այդ գործընթացները, ուսումնասիրել դրանք «մաքուր» վիճակում: Սակայն գիտության ոչ բոլոր բնագավառներում է հնարավոր գիտափորձեր իրականացնել, օրինակ՝ աստղագիտության, երկրաբանության և այլ ոլորտներում, ուստի այդ բնագավառներում սահմանափակվում են դիտարկումներով⁵: Այժմ տեսնենք, թե ինչպես է ընթանում գիտական հետազոտությունը պատմական գիտելիքներում:

⁵ Տե՛ս **Рузавин Г. И.**, Методы научного исследования, М., 1974, էջ 53-84. **Лебедев С. А.**, Философия науки, М., 2011, էջ 130-132:

Պատմական աղբյուր

Պատմական գիտություններում գիտական հետազոտության տարրերը և դրանց ինֆորմացիա քաղելու եղանակները էապես տարբերվում են բնագիտական գիտելիքների տարրերից և եղանակներից: Պատմության հիմնական ոլորտն անցյալն է՝ այն ինչն արդեն գոյություն չունի, իջել է ժամանակի թատերաբեմից: Պատմաբանն իր հետազոտության գործընթացում վերականգնում է անցյալը, այն տեղափոխում ներկա: Որպես կանոն՝ պատմաբանը զրկված է անցյալն անմիջականորեն դիտարկելու, դրա վերաբերյալ գիտափորձ իրականացնելու հնարավորությունից: Պատմաբանը հետազոտում է այնպիսի դեպքեր և իրադարձություններ, որոնք անշրջելի են, քանի որ անշրջելի է պատմական ժամանակը: Պատմաբան-հետազոտողը հնարավորություն չունի անմիջականորեն ստուգելու պատմական իրադարձությունները և ստիպված է դիմել միջնորդավորված միջոցների՝ անցյալի «հետքերի», «մնացորդների», պատմական «աղբյուրների» օգնությամբ:

Պատմական գիտելիքում հետազոտության և գիտելիքի օբյեկտները որակապես տարբեր են: Հետազոտության օբյեկտները անցյալի վկայություններ, պատկերներ, «հետքեր», «մնացորդներ» են, որոնց ուսումնասիրության շնորհիվ պատմաբանը փորձում է վերականգնել, վերստեղծել գիտելիքի օբյեկտների պատկերները, այսինքն՝ վերականգնել պատմական իրականությունը: Դրա շնորհիվ ստեղծվում են պատմագիտական աշխատություններ, հոդվածներ, դասընթացներ, որոնք անվանվում են երկրորդային պատմական տեքստեր: Պատմագիտական հետազոտություններում միշտ երկրորդային տեքստերը հիմնվում են առաջնային տեքստերի վրա՝ որպես վերինների քննական վերլուծության, ընդհանրացման, լայն իմաստով՝ հետազոտության արդյունք: Այսպիսով, պատմագիտական հետազոտությունների վերջնական նպատակը անցյալի դեպքերի, իրադարձությունների, անձանց կերպարների և այլ իրողությունների վերաստեղծումն է, վերակերտումը մարդկային գործունեության արդյունք-

ների, անցյալից մնացած «հետքերի», վկայությունների (պատմագիտական գրավոր և հնագիտական աղբյուրների), նյութական մշակույթի հուշարձանների և այլ առարկաների ու երևույթների ուսումնասիրության միջոցով: Պատմաբանը անցյալը վերականգնում, նկարագրում է այնպես, կարծես թե ինքը գտնվում է անցյալում: Պատմաբանի գլխավոր նպատակը պատմական իրողությունների բացահայտումը, դրանց նկարագրությունն ու բացատրությունն է:

Պատմական գիտելիքի օբյեկտիվ հիմքերը պատմագիտական աղբյուրներն են:

Պատմական աղբյուրները այն հետքերն են, որոնց միջոցով կարելի է թափանցել անցյալի խորքը: Պատմագիտական աղբյուրները ներկայացնում են պատմական իրականությունը, ուստի տեղեկատվության անսպառ զետեղարաններն են: Դրանց միջոցով անցյալը ներկայանում է որպես անցյալ սերնդի խտացված, կարծրացված փորձի և հոգեբանության, հոգու արտահայտություն: Պատմական աղբյուրները՝ որպես օբյեկտիվ իրողություններ, մարդկային կրքերի, մտադրությունների, ցանկությունների, նպատակադիր գործունեության արդյունք են: Ցանկացած պատմագիտական հետազոտություն սկսվում է աղբյուրների քննական վերլուծությունից: Առանց նման վերլուծության պատմագիտական հետազոտությունը կվերածվի վաղուց հայտնի տեղեկությունների ժողովածուի, պատմական փորձով չհիմնավորված սխեմաների: Պատմագիտական աղբյուրն այն տեղեկությունների կրողն է, որոնց միջոցով պատմաբանը վերականգնում է իր հետազոտած հասարակական-պատմական իրականությունը: Պատմագիտական աղբյուրը, անցնելով հեղինակի հոգեկան ուսանյակի միջով, ներկայացնում է խնդրո առարկա պատմական ռեալությունը՝ բնորոշելով իրականության այդ հատվածն ընկալողի նպատակներն ու մեթոդները⁶:

⁶ Տե՛ս «Источниковедение», М., 1969, **Пронштейн А. И.**, Методика исторического источниковедения, Ростов-на-Дону, 1976:

Նկատենք, որ դասական աղբյուրագիտությունը մշակվել է XIX դարի առաջին կեսին գերմանացի պատմաբաններ Բ. Գ. Նիբուրի, Լ. Ռանկեի և նրանց հետևորդների կողմից: Լ. Ռանկեն պատմական աղբյուրը դիտարկել է որպես «անցած կյանքի մնացորդներ»: Նա բոլորովին չի կասկածել պատմական աղբյուրների բովանդակության օբյեկտիվ բնույթին: Այդ մոտեցումը այս կամ այն չափով իրենց ազդեցությունը թողեց Ի. Գ. Դրոյզենի, Է. Բերնգեյմի, Է. Ֆրիմանի, Շ. Վ. Լանգլուայի, Շ. Սենոբոսի հայացքների վրա⁷: Նրանք այն կարծիքին էին, որ պատմական աղբյուրը պատմական ճանաչողության հուսալի օբյեկտիվ հիմքն է: (Այս տեսակետը համարվում է նաև ռեալիստական մոտեցում):

XIX դարի վերջին և XX դարի սկզբին պատմաբանները սկսեցին քննադատաբար վերանայել պատմական աղբյուրների մասին եղած նախկին պատկերացումները: Նրանք հանգեցին այն եզրակացությանը, որ յուրաքանչյուր առանձին աղբյուրը չի կարող դիտվել որպես փաստի զետեղարան: Աղբյուրը դեռևս փաստ կամ կիսապատրաստի փաստ չէ: Առանձին պատմական աղբյուրը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս սոցիալ, մշակութային համակարգի մասին:

Փաստը կարելի է ձևակերպել մեծ թվով պատմական աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության, վիճակագրական վերլուծության, տեղեկությունների համադրման, ընդհանրացման միջոցով:

Պատմական փաստերը կապված են միմյանց հետ, ուստի անհրաժեշտ է տարբեր աղբյուրների համակարգված վերլուծություն: Միաժամանակ հնագիտության հաջողությունները, ճշգրիտ և արդյունավետ մեթոդների մշակումը ընդլայնեցին անցյալի մեջ ներթափանցելու հնարավորությունները:

XIX դարի վերջին առաջացավ «պատմության փիլիսոփայության քննադատական» ուղղությունը: Անգլիայում՝ Ֆ. Գ. Բրեդ-

⁷ Տե՛ս **Фриман Э.**, Методы изучения истории, М., 1893, **Ланглюа Ш. В., Сеньобос Ш.**, Введение в изучение истории, СПб., 1899:

լիի, Գերմանիայում՝ Վ. Դիլտեյի գլխավորությամբ: Այդ ուղղության ներկայացուցիչներն այն կարծիքին էին, որ պատմաբանը, նրա մտածողությունը ակտիվորեն մասնակցում է պատմական ճանաչողության գործընթացին: Պատմությունը պատմաբանի ակտիվ ստեղծագործության արդյունքն է:

XX դարի 20-ական թվականներին տարածված էր Բ. Կրոչեի ուսմունքը: Նրա համոզմամբ՝ պատմությունը ինքնազարգացող «մարդկային հոգու» կենսական ակտիվություն է, իսկ մարդկային հոգու պատմությունը աշխարհի պատմությունն է: Եթե պատմությունը զրկված է «հոգու» ստեղծագործական ակտիվությունից, ապա այն քրոնիկա է (ժամանակագրություն)՝ մահացած պատմություն: Պատմությունը կենդանի քրոնիկա է, քրոնիկան՝ մահացած պատմություն⁸:

Պատմական աղբյուրը ունի երկակի նշանակություն՝ ճանաչողական և արժեքային: Ճանաչվող օբյեկտը պարունակում է որոշակի արժեք ներկայացնող գիտելիք և տեղեկություն:

Երբեմն պատմագիտական աղբյուրների վերլուծությունը նմանեցնում են քվանտային ֆիզիկայի օբյեկտների ուսումնասիրությանը:

Հայտնի է, որ սարքերի միջոցով միկրոօբյեկտների դիտարկման դեպքում սարքերն էապես ազդում են ճանաչվող օբյեկտների վրա: Ընդ որում, միկրոօբյեկտների վրա սարքերի ազդեցությունն ուղիղ համեմատական է հետազոտվող օբյեկտների չափերին: «Եթե դասական ֆիզիկայում օբյեկտի և սարքի միջև գոյություն ունեցող փոխազդեցությունը կարելի է հաշվի չառնել, կամ, եթե պետք է, այն կարելի է հավասարակշռել, ապա քվանտային ֆիզիկայում այդ փոխազդեցությունը երևույթի անքակտելի մասն է: Ուստի քվանտային երևույթների նկարագրությունը սկզբունքորեն պետք է ներառի փորձարարական սարքի բոլոր էական մասերի նկարագրությունը»⁹:

⁸ Տե՛ս **Бенедетто Кроче**, Теория и история историографии, М., 1998:

⁹ **Бор Н.**, Атомная физика и человеческое познание, М., 1961, с. 143.

Հայտնի ֆիզիկոս Վ. Հայզենբերգը քվանտային ֆիզիկայում ծագած այդ խնդիրը մեկնաբանել է որպես սարքի և միկրոօբյեկտի միջև փոխազդեցության «անվերահսկելիություն», երբ անհնար է սահման գծել ատոմային ֆիզիկայի օբյեկտի և նրա գիտական ճանաչողության միջոցների միջև: Քվանտային ֆիզիկան բացահայտեց սարքի նոր դերը. օբյեկտի գիտական հետազոտությունն անհնար է առանց այն դիտարկվող միջոցների նկարագրության, այն միջոցների, որոնք օբյեկտի հատկանիշների արտաքին պայմաններն են: Համանման իրավիճակ գոյություն ունի պատմական ճանաչողության ոլորտում: Այստեղ ևս անցյալի պատմական նկարագրությունները ոչ միայն անբաժանելի են այն աղբյուրներից, որոնց վրա հիմնվում է դրանց նկարագրությունը, այլև այդ աղբյուրների հեղինակների սուբյեկտիվ հակումներից:

Չենք կարող համաձայնել այն պատմաբանների հետ, որոնք աղբյուրները դիտարկում են միայն որպես փաստեր ներկայացնող տեքստեր՝ անտեսելով դրանց մեկնաբանությունները: Ցանկացած պատմագիտական աղբյուր կարող է փաստական և արժեքային, անձնական և հասարակական մեկնաբանման:

Ժամանակի ընթացքում պատմական գիտությունը լրացվում է նոր փաստերով, որի շնորհիվ իրականության վերաբերյալ հին պատկերացումները կա՛մ ճշգրտվում են, կա՛մ լրիվ վերանայվում: Վերջին հարցը առնչվում է աղբյուրների վերլուծությանը: Նկատենք, որ պատմաբանը փաստաթղթերի պասիվ ստեղծող չէ: Նա կարգավորում, ղեկավարում է պատմական աղբյուրների ստեղծման գործընթացը: Այնպես, ինչպես սոցիոլոգը ստեղծում է իր աղբյուրների բազան՝ բաժանելով անկետաներ, հարցման թերթիկներ, այդպես էլ պատմաբանն է աղբյուրները դասակարգում, կուտակում արխիվներում: Ավելին, որպես գիտական գիտելիք պատմական գիտելիքը սոսկ տեղեկությունների, փաստերի հավաքածու չէ: Նրան բնորոշ է համակարգայնությունը: Դա նշանակում է, որ տարանջատ մի քանի նախադասությունից

կազմված տեղեկությունները, անկախ այն բանից, թե դրանք որքան տարողունակ են ու հուսալի, գիտություն չեն: Օրինակ՝ հեռախոսի գրքերը, խոհարարական գրքերը, քաղաքի փողոցների մասին պատմող տեղեկագրերը թեև կարող են ճշգրիտ ու մատչելի ձևով դասակարգված լինել, սակայն դրանք չի կարելի համարել գիտական, քանի որ դրանցում նախադասությունները ձևակերպված չեն տրամաբանական համակարգի տեսքով: Հենց այդ համակարգային ըմբռնումն է բնորոշ պատմական գիտելիքին, որով այն տարբերվում է տեղեկատվական բազմազան այլ ձևերից:

Պատմաբանի համար շատ վտանգավոր է, այսպես կոչված, «Ֆրոուդի հիվանդությունը»: Ասում են՝ Ֆրոուդը եղել տաղանդավոր պատմաբան, սակայն ունեցել է մի թուլություն՝ երբեք չգրել ճշմարտությունը¹⁰:

Առհասարակ, պատմագիտական աշխատություններում ճշգրտության բացակայությունը պայմանավորվում են նաև մասնագիտական ոչ բավարար պատրաստականությամբ, շտապողականությամբ, անուշադրությամբ, սեփական հիշողության նկատմամբ չափից ավելի մեծ վստահությամբ, երևակայության խաղի անվերահսկելիությամբ:

Պատմական գիտության մեջ չափազանց կարևոր է պատմական աղբյուրների հավաստիության՝ աղբյուրի բովանդակության և նրան համապատասխանող իրականության փոխհարաբերության հարցը: Չէ՞ որ պատմական աղբյուրները և՛ անկրկնելի են, և՛ պատմական գիտելիքների ձևավորման հիմնական միջոցներն են: Պատմաբանները դրանցից են տեղեկատվություն քաղում պատմության համապատասխան բաժինները շարադրելիս: Սա գիտական գիտելիքի մեթոդաբանության ամենաչմշակված թեմաներից է:

Պատմական տեղեկությունը իրականության առնվազն կրկնակի բեկման արդյունք է: *Առաջին* բեկումը տեղի է ունենում

¹⁰ Տե՛ս **Ланглюа Ш. В., Сеньобос Ш.**, Введение в изучение истории, էջ 99:

այն ձևավորող սկզբնաղբյուրի հեղինակի կողմից, որի նպատակները, շահերը, նորմերը, արժեքները, իդեալները, աշխարհայացքը, իրենց ազդեցությունն են թողնում սկզբնաղբյուրի ձևավորման վրա, քանզի նա որոշակի մշակույթի, աշխարհայացքի տեսանկյունից է շարադրում պատմական այդ իրողությունը: *Երկրորդ* բեկումը տեղի է ունենում այն պատմաբանի կամ պատմաբանների կողմից, որոնք, հենվելով սկզբնաղբյուրի կամ սկզբնաղբյուրների վրա, շարադրում են պատմական դեպքերը, իրադարձությունները, ներկայացնում են պատմական դեմքերին: Պատմաբանը, եթե, իհարկե, ազնիվ է և հավատարիմ իր կոչմանը և եթե չի կատարում քաղաքական պատվեր, շահագրգռված է իր ձեռքի տակ ունենալու առավելագույնս հավաստի տեղեկություններ: Էմպիրիկ բնագիտության մեջ գիտելիք ձեռք բերելու հիմքերը՝ էմպիրիկ արդյունքները, ինչպես նշել ենք, կրկնելի, վերարտադրելի են: Ուստի, եթե բնագետը միտումնավոր կամ ոչ միտումնավոր կեղծի դիտարկման կամ գիտափորձի արդյունքները, ապա դա շուտով կբացահայտվի այլ բնագետների կողմից: Պատմական գիտություններում դա շատ դժվար է անել: Այստեղից էլ հարց է ծագում՝ պատմությունը գիտություն է, թե՞ ոչ:

Որոշ մեթոդաբաններ կարծում են, որ այն գիտելիքը, որի հիմքերը կրկնելի, վերարտադրելի չեն, չի կարելի համարել գիտական¹¹:

Մենք համամիտ չենք այդ տեսակետին: Մեր կարծիքով, պետք է ոչ թե նեղացնել գիտության շրջանակները, այլ ընդլայնել: Եվ պատմականորեն այդպես էլ եղել է:

Այժմ փորձենք պարզաբանել, թե սկզբունքորեն հնարավոր է արդյոք հավաստի տեղեկություններ քաղել պատմական աղբյուրներից: Կան պատմաբաններ և մեթոդաբաններ, որոնք պատմությունը համարում են երևակայության ազատ գործունեության ոլորտ, այնպիսին, ինչպիսին գեղարվեստական գրականությունն

¹¹ Տե՛ս **Кахановский В. П., Лешкевич Т. Г., Матяш Т. И., Фатхи Т. Б., Основы философии науки, Ростов на-Дону, 2007, էջ 30:**

է: Պատահական չէ, որ պատմական հնագույն աղբյուրների առաջին հայ ուսումնասիրողները եղել են գրականագետները: Սակայն գեղարվեստական գործերի և պատմական աշխատությունների, մինչև պատմական աղբյուրի գեղարվեստական և պատմական արժեքների միջև տարբերություններն էական են: Ասվածը թույլ է տալիս պնդել, որ պատմաբանները բավարար հիմքեր ունեն ասելու, որ իրենք ի վիճակի են հավաստի տեղեկություններ քաղել պատմական աղբյուրներից՝ նույնիսկ միտումնավոր կեղծված պատմական գործերից: Այսպիսի եզրակացության ընդհանուր հիմքն այն է, որ մարդը և մարդկությունը, ելնելով իրենց գործունեության, ստեղծագործության արդյունքներից, ի վիճակի են վերժանել, ճանաչել, դատել, եզրակացություններ անել ինչպես այդ արդյունքների ստացման եղանակի, այնպես էլ դրանց հիմքերի, էության, հասարակական-քաղաքական վիճակի մասին, կողմնորոշվել դրանց մեջ: Բացի այդ, մարդն իր հոգեկանի ինքնագիտակցման, ինքնաճանաչման միջոցով կարող է ներթափանցել, զգալ, ապրել ուրիշների հոգեկան ապրումները և այդ ամենը շարադրել գրավոր: Սակայն պետք է ասել, որ պատմական աղբյուրները, մանավանդ հին ձեռագրերը, միշտ չէ, որ մեզ են հասել ամբողջական և նախնական տեսքով: Բացի այդ, միջնադարում ընդունված է եղել լրացնել և խմբագրել նախկին տեքստերը՝ առանց անձը, ժամանակը, տեղը նշելու: Ընդ որում, տարբեր ժամանակներում թույլ են տրվել միտումնավոր կամ ոչ միտումնավոր շտկումներ, սխալներ և աղճատումներ: Ուստի ժամանակակից պատմաբանները ստիպված են տիտանական աշխատանք կատարել բնագիրը վերականգնելու, ավելացված, խմբագրված մասերը զանազանելու համար՝ մեզ հասած պատմական աղբյուրների բառամթերքը, լեզուն, ոճը, քերականությունը, դրանց պատմական, իմաստային, ներքին տրամաբանական շերտերը համեմատելով, քննադատորեն վերլուծելով, ուսումնասիրելով, երբեմն ոչ բարվոք մասերը վերակառուցելով և լրացնելով: Երբեմն հարկ է լինում պատմական աղբյուրները մաքրել ի-

մաստային հակասություններից, անհարթություններից, անախրոնիզմներից, ընդ որում, դա պետք է արվի մեծագույն զգուշությամբ, որպեսզի չխախտվի տեքստի նախնական ձևը, լրիվությունը, ամբողջական բովանդակությունն ու ոճը:

Տեքստերի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է լինում հայտնաբերել դրանցում թաքնված իմաստները, այլաբանությունները, սիմվոլիկ պատկերները այնպես, ինչպես հասկացել է հեղինակը: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է ծագում բացահայտելու պատմական աղբյուրը գրելու ժամանակը, տեղը, պայմանները, հեղինակի անձն ու կենսագրությունը: Եթե դասական էմպիրիկ բնագիտության գիտափորձի արդյունքները հասկանալու համար էական չեն ո՛չ գիտափորձը կատարողի ինքնությունը, ո՛չ տեղը, ո՛չ ժամանակը, ապա պատմական աղբյուրների հավաստիությունը պարզելու համար չափազանց կարևոր է այդ ամենի պարզաբանումը: Դա հնարավորություն է ընձեռնում դարաշրջանի պատմական այլ աղբյուրների, մշակութային այլ ձևերի, տվյալ հեղինակի այլ գործերի հետ համեմատելով՝ լրացնելու այդ աղբյուրի ինֆորմացիոն բովանդակությունը՝ ավելի հավաստի, հասկանալի դարձնելով վերջինս:

Հայոց պատմագրության մեջ այդպիսի օրինակներից մեկը պատմահայր Մովսես Խորենացու ծննդյան տեղի, թվի, ժամանակի, գրած աշխատությունների պարզաբանման հարցերն են: Ժամանակի ընթացքում այդ խնդիրները ուսումնասիրել են բազմաթիվ հայագետներ ու պատմաբաններ: Մանրամասն հետազոտելով Մ. Խորենացու աշխատությունների առանձին մասերը, կառուցվածքը, բառամթերքը, պատմաիմաստային շերտերը և այլ առանձնահատկություններ, հենվելով տարբեր հիմքերի վրա՝ հետազոտողները առաջ են քաշել բազմաթիվ վարկածներ, և, ի վերջո, կարծես սպառելով հնարավոր տարբերակների ուսումնասիրությունը, հանգել են **միասնական**, ընդունելի տեսակետի¹²:

¹² Տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Եր., 2001, **Մուշեղյան Ա.**, Մովսես Խորենացու դարը, Եր., 2007:

Անշուշտ, չի կարելի բացառել, որ հետագայում, երբ գիտամեթոդաբանական, լեզվաբանական միջոցները ավելի զարգանան, մշված հարցերի վերաբերյալ կկատարվեն նորանոր ուսումնասիրություններ: Ընդհանրապես, գիտության զարգացումը, նոր փաստերի ու հետազոտության մեթոդների հայտնագործումը, հասարակական-քաղաքական և այլ գործոններն ու փոփոխությունները կարող են հանգեցնել պատմական աղբյուրների հավաստիության աստիճանի փոփոխմանն ու մեծացմանը: Եվ դա անընդհատ գործընթաց է: Յուրաքանչյուր նոր ժամանակաշրջանում պատմաբանները կարծես արդեն ուսումնասիրված աղբյուրներում բացահայտում են տեղեկատվության անհայտ շերտեր:

Պատմական աղբյուրների բովանդակությունից հավաստի տեղեկություններ քաղելու համար կարևոր է նաև դրանց անաչառ վերլուծությունը, քննադատական մոտեցումը և անհատական-հասարակական ապաստրեկտայնացումը: Հայտնի է, որ յուրաքանչյուր պատմական աղբյուրի հեղինակ որոշակի հոգեկերտվածքի, մշակույթի, հասարակական խմբի, դասի, ազգի, առհասարակ ժամանակաշրջանի արդյունք է: Այդ ամենը ոչ միայն նրա հոգեկերտվածքի բաղադրամասերն են, այլև դաջվում, արտահայտվում են նրա աշխատությունների մեջ: Բացի այդ, պատմական աշխատությունները գրվում են որոշակի նպատակներով, որոշակի շահերի, նորմերի, արժեքների, իդեալների տեսանկյունից: Բնականաբար, այդ շերտերի գիտակցումը, բացահայտումը, պատմական աղբյուրները նստվածքներից ազատելը որակյալ պատմաբանի կարևոր հատկանիշներից են: Անշուշտ, պատմական աղբյուրներն ուսումնասիրողները ևս ունեն որոշակի հոգեկերտվածք՝ նպատակներ, շահեր, նորմեր, արժեքներ և այլն, որոնք իրենց հետքն են թողնում պատմական տեղեկությունների ընտրության, դրա անհատական և հասարակական բնույթի ապաստրեկտայնացման վրա: Այդ է պատճառը, որ մտածողներից ոմանք կարծիք են հայտնում, թե պատմական գիտության մեջ այնպիսի ապաստրեկտայնացում, ինչպիսին առկա է բնագիտության մեջ, հնարավոր չէ:

Արձանագրենք, որ մենք գործ ունենք առանձնահատուկ գիտության հետ: Ավելին, բնագիտական գիտելիքում ևս էմպիրիկ մակարդակը ծանրաբեռնված է տեսական մակարդակով, իսկ տեսական մակարդակը՝ հարացույցով, աշխարհայացքով, մշակույթի որոշակի ձևերով, վիճակով: Նույնիսկ մաթեմատիկական աշխատությունները կրում են հեղինակների անհատական կնիքը: Ուստի կարելի է եզրակացնել, որ գիտության և ոչ մի բնագավառում բացարձակ ապաստելկոտայնացում հնարավոր չէ: Պարզապես պատմական գիտելիքում գործ ունենք գիտելիքի ապաստելկոտայնացման առանձնահատուկ տեսակի հետ, որը պատմական հավաստի գիտելիք ձեռք բերելու համար չափազանց գործնական նշանակություն ունի:

Պատմական աղբյուրներից հավաստի տեղեկություն քաղելու համար կարևոր է նաև տվյալ աղբյուրի տեղեկությունը համադրել նույն ժամանակաշրջանին վերաբերող այլ, առանձնապես չեզոք, անկողմնակալ աղբյուրների տեղեկության բովանդակությունների հետ: Ընդ որում, պատմական աղբյուրները պետք է դիտարկել, համադրել իրենց ամբողջականության, համաձայնեցվածության, ներդաշնակության, լրիվության տեսանկյունից: Սակայն դա չի նշանակում, որ պատմական իրականությունը բացահայտելիս պետք է հիմք ընդունել այդ հարցի վերաբերյալ գոյություն ունեցող բոլոր պատմական աղբյուրների տեղեկատվական բովանդակությունների միջին վիճակագրականը: Պատմական գիտելիքի հավաստիության շերտը բացահայտելու համար մեծ է նաև պատմաբանի անձնական, սուբյեկտիվ որակների նշանակությունը՝ ազնվությունը, համարձակությունը, բարոյականությունը, անկողմնակալությունը, երևակայությունը, ինտուիցիան, բարձր կուլտուրան, բազմակողմանի կրթվածությունը, սեփական և հասրակական հոգեկանի նկատմամբ ռեֆլեքսիան, քննադատական վերլուծություն կատարելու միջոցով ուրիշների հոգեկան կերտվածքը, պատմական դեպքերն ու դեմքերն ինտուիտիվ զգալու, հասկանալու և գնահատելու կարողությունը:

Պատմական փաստ

Պատմական փաստը պատմական գիտելիքի կառուցվածքի անհրաժեշտ, բաղկացուցիչ տարրն է: Դրա բնույթն ըմբռնելը սերտորեն կապված է պատմական գիտելիքի կառուցման, ընդունման հարցերի հետ: Պատմական փաստն ինչպես անցյալում, այդպես էլ ներկայումս տարբեր կերպ է քննարկվում, մեկնաբանվում և գնահատվում պատմաբանների և գիտելիքի մեթոդաբանների կողմից: Այսպես, դեռևս XIX դ. 60-80-ական թվականներին պատմագրության մեջ այն կարծիքն էր իշխում, որ պատմական փաստն օբյեկտիվ, ճանաչող սուբյեկտից անկախ գոյություն ունեցող ռեալություն, պատմական իրականություն է: Այն պատմական աղբյուրներում արտապատկերվել, կուտակվել է ուղղակիորեն, անմիջականորեն: Պատմական փաստերը տարրական են, անբաժանելի, որոշակի տարածության և ժամանակի մեջ միմյանցից բաժանված են, ունեն մեկընդմիշտ ձևավորված, անփոփոխ բովանդակություն:

Պատմական աղբյուրները պարունակում են որոշակի քանակի պատմական փաստեր, որոնք, լինելով պատմական իրականության աղյուսներ, ճշմարտություններ, կարող են պատրաստի տեսքով տեղափոխվել պատմագիտական աշխատանքների մեջ:

Դրանց միջոցով ստեղծվում է պատմական գիտության շենքը: Եվ որքան ավելի շատ աղյուսներ են հավաքված, այնքան ավելի մեծ է գումարային ճշմարտությունը: Ըստ այս մոտեցման՝ պատմական փաստերը պետք է հնարավորին չափ անկախ լինեն հետազոտողից, նրա համոզմունքներից, կախվածություններից, համակրանքներից ու հակակրանքներից, կրքերից, հակումներից և այլն:

Ըստ այդմ՝ լավագույնն այն պատմաբանն է, որն ընթերցողին միայնակ է թողնում փաստերի հետ: Փաստերն իրենք են խոսում իրենց մասին: Այստեղից Լ. Ռանկեի այն արտահայտությունը, որ անցյալն անհրաժեշտ է տեսնել այնպես, ինչպես իրականում այն

եղել է: Իսկ դա կարելի է անել միայն մի դեպքում, հնարավորինս մոտ լինել, ավելի ճշգրիտ հետևել փաստերին: Համանման տեսակետ է արտահայտել նաև Ֆյուստել դե Կուլանժը: Նա կարծում էր, որ անհրաժեշտ է ուսումնասիրել բացառապես տեքստերը՝ իրենց ամենափոքր մանրամասներով, հավատալ այն բանին, ինչ դրանցում արտապատկերված է: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է անցյալի պատմությունից վճռականորեն հեռացնել ժամանակակից գաղափարները: Այդպիսի մոտեցում են ունեցել նաև Շ. Սենոբոսը և Շ. Լանգլուան: Նրանց կարծիքով, ինչպես փաստը, պատմական գիտությունը ևս ոչինչ չի «ենթադրում», «հնարում» և «ընդհանրացնում»¹³:

Այն միայն պատմում է այն մասին, ինչը նրան հաղորդում են վստահության արժանի աղբյուրները: Այդպիսի մոտեցումները, ըստ էության, լրիվ նույնացնում են պատմական և բնագիտական գիտելիքները: Պատմական և բնագիտական փաստերը հավասարապես համասեռ են, օբյեկտիվ և հավաստի: Դրանք կուռ գիտական ճշմարտություններ են: Պոզիտիվիստական պատմագրությունն ըստ էության տարբերություն չի դրել պատմական իրականության և պատմական գիտության միջև: Ըստ նատուրալիստական այս մոտեցման՝ պատմական գիտությունն ի վիճակի է մարդկային անցյալի օբյեկտիվ պատկերը վերարտադրել այնպես, ինչպես այն եղել է¹⁴:

Սակայն հենց XIX դարի վերջին Վ. Դիլտեյը առաջ քաշեց պատմական փաստի վերաբերյալ մեկ այլ տեսակետ, որի համաձայն՝ պատմական փաստերը էապես տարբերվում են բնագիտական փաստերից: Հայտնի է, որ բնագիտական փաստերը հիմնականում անկախ են մարդկանց կյանքից: Դրանց հիմքում ընկած երևույթները կարելի է դիտարկել, վերարտադրել, ստուգել բազմիցս: Բնագիտական փաստերի վրա հիմնված օրենքներն արտահայտում են ինչ-որ ընդհանուրը, կրկնվողը, կանոնավորը:

¹³ Տե՛ս **Ланглюа и Сеньобос**, Введение в изучение истории, էջ 88:

¹⁴ Տե՛ս **Степин В. С.**, Современный позитивизм и частные науки, Минск, 1963:

Մինչդեռ պատմական փաստերում արտացոլված են մարդկանց և հասարակության գործունեության արդյունքները: Պատմաբանի խնդիրն է բացահայտել այդ գործունեության իմաստը, նպատակները, հետաքրքրությունները, ձգտումները, վարքի շարժառիթները, հասկանալ ու մեկնաբանել դրանք: Քանի որ պատմական դեպքերն անմիջականորեն դիտարկելի չեն, անկրկնելի ու անվերարտադրելի են, ապա պատմաբանները ստիպված են դրանց մասին դատել միջնորդավորված վկայությունների, պատմական աղբյուրների՝ պատմական ժամանակագրությունների, տարեգրությունների, անցած սերունդների ու պետությունների տնտեսական կյանքի, քաղաքական կառուցվածքի, իրավաբանական օրենքների, կենցաղի և բարոյական նորմերի մասին մեզ հասած փաստաթղթերի և նյութական հուշարձանների միջոցով:

Բնական է, որ հիշատակված վկայություններն ու փաստաթղթերը գրված են որոշակի տեսանկյունից, դրանց հեղինակների պատկերացումներին ու ժամանակի պահանջներին համահունչ, դրանց քննադատության, ընտրության, գնահատականների և այլնի միջոցով: Սրա հիման վրա Վ. Դիլտեյը պատմական փաստի առաջադրման և գնահատման հիմնական միջոցներ համարեց պատմաբանի «ներքին փորձը», ապրումները, ինտուիցիան, իռացիոնալ հոգեբանական մոտիվները:

Վ. Վինդելբանդն ու Գ. Ռիկերտը էապես սահմանազատեցին բնական գիտություններն ու «հոգու մասին գիտությունները»¹⁵: Նրանք կասկածի տակ առան մինչև այդ ընդունված այն տեսակետը, որ պատմական փաստը և պատմական իրականությունը նույնական են: Ելնելով իրականության և «արժեքների» (պիտոյականության) ոլորտների տարբերությունից՝ Գ. Ռիկերտը մերժեց պատմական փաստերին հետազոտողից անկախ բովանդակություն վերագրելու մոտեցումը: Ըստ այդմ՝ պատմական համարվում են այն փաստերը, որոնք միայն մեզ համար ունեն նշանակու-

¹⁵ Տե՛ս **Риккерт Г.**, Границы естественно-научного образования понятий, СПб., 1903, **Риккерт Г.**, Философия истории, М., 1998:

յուն: Դրանք մշակութային փաստերն են, որոնք ձեռք են բերվում բացարձակ նշանակություն ունեցող արժեքների հետ հարաբերակցվելով: Պատմական փաստերի պատմամշակութային արժեքը դրանց անկրկնելիությունը, եզակիությունն է: Այսինքն՝ ստացվում է, որ պատմական իրականություն կերտողը, արժեքներ կրողը պատմաբանն է:

Հետագայում այդ մոտեցումը մի փոքր ձևափոխվեց և դարձավ բավականին ընդունելի տեսակետ, որի համաձայն՝ պատմական հիմնական փաստերն առանձնացվում են ոչ թե ինքնին այդ փաստերին բնորոշ ինչ-որ առանձնահատուկ հատկությունների, այլ պատմաբանի ապրիորի վճիռների, նրա կողմից ընդունված «նշանակությունների», «տեսանկյան», «ավանդույթի» և այլնի հիման վրա: Ամերիկացի սոցիոլոգ և մեթոդաբան Կ. Բեքերը¹⁶ ևս, ելնելով պատմական գիտելիքի այն առանձնահատկություններից, որ պատմաբանը ուսումնասիրում է մի այնպիսի իրականություն, որը գոյություն չունի, անկրկնելի է, գիտափորձով վերարտադրելի չէ, հանգել է այն եզրակացությանը, որ պատմությունը պատրանք է, որն ինքնին զուրկ է իմաստից, նշանակությունից: Ըստ նրա՝ պատմական փաստերը վկայում են ոչ թե անցյալի, այլ ներկայի մասին: Այդ մոտեցումը լայն արձագանք է գտել փիլիսոփաների և մեթոդաբանների աշխատանքներում: Շատերն են այն կարծիքին, որ պատմությունը միշտ «ժամանակակից պատմություն է», որ «պատմությունն այն է, ինչ ստեղծում է պատմաբանը», որ ամեն նոր ժամանակաշրջանում նախկին պատմագիտական աշխատությունները դեն են նետվում որպես հնոտի, որ պատմությունն անընդմեջ գրվում է նորովի: Անցյալի վերարտադրությունն այնպիսի «մեկնաբանման տեսակ է», որը կապված է ոչ թե անցյալի, այլ ներկայի հետ, այն իմաստավորվում է ներկայի միջոցով:

¹⁶ Տե՛ս **Becker C. L.**, What are Historical Facts? – The Western Political Quarterly, 1955, vol. 8, N 3:

Մարքսիստական փիլիսոփայությունը պատմական ճանաչողության մեջ առաջնային է համարում պատմական իրականությունը, որն ինչ-որ առումով նույնացնում է պատմական փաստերի հետ, որոնք այդպիսին դառնում են պատմական օրինաչափությունների միջոցով, դրանց օգնությամբ: Ըստ այդմ, բավական է պատմական աղբյուրների հետազոտության միջոցով բացահայտել պատմական փաստերը, որպեսզի հնարավոր լինի համարժեք, լրիվ ներկայացնել ոչ միայն պատմական անցյալի իրողությունները, այլև դրանց փոփոխման օրինաչափ կարգը: Միաժամանակ, մարքսիզմի դասականների կարծիքով, պատմության մատերիալիստական ըմբռնման միջոցով բացահայտվել են հասարակական պատմության իրական հիմքը, սոցիալական ճանաչողության օբյեկտիվ պատմական հենքը¹⁷:

Դժվար չէ նկատել, որ պատմական փաստի ըմբռնման հարցում պոզիտիվիստական և մարքսիստական մոտեցումներն ունեն որոշակի ընդհանրություններ: Երկուսն էլ պնդում են, որ ճանաչողության գործընթացում մերժելով, բացառելով սուբյեկտի դերը, կարելի է հասնել բացարձակ օբյեկտիվության, պատմական իրականությունը ներկայացնել այնպես, ինչպես եղել է՝ իր բոլոր մանրամասներով ու լրիվությամբ: Հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք մարդկային ճանաչողության մեջ հասնել մարդուց և մարդկությունից գերանկախ իրողությունների: Անշուշտ, հնարավոր չէ: Իհարկե, պետք է ձգտել այդպիսի իրավիճակի՝ անձնական և հասարակական ապասուբյեկտիվացման, սակայն անվերջության միտված այդպիսի իդեալի հասնելն անհասանելի գործընթաց է:

Ինչպես նկատեցինք, Վ. Դիլտեյը, Վ. Վինդելբանդը, Գ. Ռիկերտը և այլ տեսաբաններ, իրենց հետազոտություններում բացահայտելով պատմական գիտելիքի որոշ առանձնահատկություններ, դրանով հակադրվեցին պատմական գիտելիքի և, մասնա-

¹⁷ Տե՛ս **Гуревич А. Я.**, Что такое исторический факт // Источниковедение. Теоретические и методологические проблемы, М., 1969, **Ракитов А. И.**, Историческое познание, М., 1982, с. 185-225:

վորապես, պատմական փաստի պոզիտիվիստական և մարքսիստական ուսմունքներին, դրա նատուրալիստական մեկնաբանությամբ: Իհարկե, պետք է գնահատել այն դրականը, որ կատարել են նշված մտածողները պատմական գիտելիքի առանձնահատկությունները բացահայտելիս: Մասնավորապես, նրանք ցույց տվեցին, որ պատմական փաստը, գիտելիքը ձևակերպվում է պատմաբանի ակտիվ, ստեղծագործական, կառուցողական գործունեության շնորհիվ, որ այն անկրկնելի է, յուրահատուկ:

Սակայն դրականի հետ միասին չի կարելի չնկատել բացասականը: Վ. Դիլտեյը, Վ. Վինդեխմանը, Գ. Ռիկերտը և ուրիշներ ծայրահեղության հասցրեցին պատմական և բնագիտական գիտելիքների տարբերությունները, առանձնահատկությունները: Պատմական գիտելիքի և պատմական փաստի ըմբռնումները դարձան հարաբերական: Կասկածի տակ դրվեց պատմական գիտության, պատմական ճանաչողության հնարավորության հարցը:

Անշուշտ, պատմական գիտելիքը, պատմական փաստը և պատմական իրականությունը տարբեր են: Պատմական փաստը որևէ լեզվով ամրագրված, տվյալ սոցիալ-մշակութային համակարգի համար նշանակություն ունեցող մտային վերացարկում, կոնստրուկցիա, գիտելիք է: Այն ոչ թե «աղյուս» է, «ատոմ», այլ եզակի է, անկրկնելի, անվերարտադրելի:

Պատմական փաստը ձեռք է բերվում հեղինակի արժեքային համակարգով, տեսանկյունով, ընտրողաբար ստեղծված պատմական աղբյուրների միջոցով: Ավելին, պատմական փաստերը պատմաբանները հասկանում, օգտագործում, շարադրում են իրենց ժամանակաշրջանի, մշակույթի, աշխարհայացքի, հասարակական, մասնագիտական, անհատական փորձի, գիտելիքների և այլ գործոնների ազդեցությամբ: Այն ընդհանրացված գիտելիք է, որը կարող է հանդես գալ որպես զանգվածային պատահական երևույթների համախումբ, վիճակագրական մոդել, մարդու կամ հասարակության գործունեության բարդ համակարգ: Այն առանձնահատուկ, նշանակալի գիտելիք է, որն օժտված է հուսա-

լիությամբ և փակ է: Ինչպես ասում են՝ պատմական փաստը «կարծր միջուկ է», որը շրջապատված է «փափուկ մեկնաբանություններով»: Իր կոմունիկատիվ գործառնությամբ, այսինքն՝ որպես որոշակի տեղեկության պահպանման և փոխանցման միջոց, այն ներառված է մարդկանց փոխազդեցության համակարգում:

Պատմական փաստը իմաստ, նշանակություն է ստանում միայն պատմական ճանաչողության ընդհանուր կառուցվածքում՝ սոցիոնշակութային ամբողջականության մեջ: Այն պատմական տեքստի ամբողջական շարադրման անբախտելի մասն է: Պատմական փաստերը գտնվում են որոշակի հարաբերությունների, պատճառակցական կապի մեջ: Դրանք տարածության և ժամանակի մեջ փոխապայմանավորող հաջորդափոխություն են:

Պատմական փաստը պատմական գիտելիքին հաղորդում է կոնկրետություն, որոշակի պատկերայնություն, զգացմունքայնություն: Պատմական շարադրանքներում փաստերը ոչ թե իլյուստրատիվ դեր ունեն, այլ բացահայտում են պատմական իրողությունները: Այս կամ այն շրջանի կամ դեպքերի նկատմամբ արհամարհական վերաբերմունքը կարող է պատճառ դառնալ ժամանակագրությունը խախտելուն, նրանց այս կամ այն հանգույցը դուրս գցելուն, որը հանգեցնում է պատմական բարդ գործընթացի պարզեցմանը, սխեմատիզացմանը: Առանձնակի կարևորություն ունեն հանգուցային փաստերը: Ասենք, որ պատմական յուրաքանչյուր ամբողջական նկարագրություն ունի իր հանգուցային փաստերը, փաստերի խումբը, որոնք կարող են կազմված լինել բազմաթիվ այլ փաստերից: Դրանք ընդհանրացված, իդեալականացված փաստեր են, որոնք պատմական շարադրանքներին տալիս են բազմակողմանիություն, ծավալային խորություն՝ ստեղծելով ամբողջական, տնտեսվար, սեղմ, բովանդակային, բազմաշերտ, տարածության և ժամանակի մեջ ամրագրված պատմական նկարագրություններ¹⁸:

¹⁸ Տե՛ս **Жуков Е. М.**, Исторический факт // Очерки методологии истории, М., 1980, էջ 199-209, **Гуревич А. Я.**, նշվ. աշխ.:

Մեթոդաբանական գրականությունում ընդունված է պատմական փաստի առանձնահատկությունները շարադրել՝ դրանք հակադրելով բնագիտական փաստի առանձնահատկություններին.

1) պատմական փաստերը դիտարկելի չեն, մինչդեռ բնագիտական և հատկապես ֆիզիկայի փաստերը հիմնականում դիտարկելի են,

2) պատմական փաստերը գիտափորձերի միջոցով վերարտադրելի չեն, մինչդեռ բնագիտության մեջ ուսումնասիրվող փաստերը գիտափորձի օգնությամբ մեծ մասամբ վերարտադրելի են,

3) պատմական փաստերը չափազանց կցկտուր և ընտրողական են (առանձնապես պատմության հին շրջանների համար), մինչդեռ բնագիտությունում փաստերի քանակը գործնականում սահմանափակված չէ, նրանց միջև կարելի է բացահայտել կայուն կախվածություններ,

4) պատմական փաստերը ծանրաբեռնված են արժեքային դատողություններով: Դրանք վերջին հաշվով կախված են հաշվարկման համակարգերից, հայեցակարգային սխեմաներից և այլն: Բնագիտական փաստերը հիմնականում ազատ են նման ծանրաբեռնվածությունից¹⁹:

Բնականաբար հարց է ծագում. արդյո՞ք պատմական փաստերը այդքան հարաբերական, «անըմբռնելի», սուբյեկտիվ են, որքան առաջին հայացքից թվում է: Բավական է համեմատել հայոց պատմության տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների, նույնիսկ օտարազգի հեղինակների գրած ամբողջական գործերը, որպեսզի նկատենք, որ թեև դրանք միմյանցից տարբերվում են ժամանակաշրջաններով, լեզվով, ոճով, արժեքային, աշխարհայացքային, մեթոդաբանական կողմնորոշումներով, սակայն գոյություն ունեն տարածության և ժամանակի մեջ փաստերի որոշակի կայուն, հետևողական շարադրանքներ, որոնք անկախ են դրանց հեղինակներից և գրելու ժամանակաշրջանից:

¹⁹ Տե՛ս **Ракитов А. И.**, նշվ. աշխ., **Жуков Е. М.**, նշվ. աշխ.:

ճիշտ է, հայոց պատմության նորագույն շարադրանքներում հնագույն շրջաններին վերաբերող բաժինների շարադրանքներն ավելի կայուն տեսք ունեն, քան նոր և նորագույն ժամանակաշրջանների բաժինները: Եվ դա բնական է: Հնագույն շրջանի գրավոր աղբյուրները, փաստերը, ըստ էության, հիմնականում հայտնի են, դրանք միմյանց հետ համադրվել են, արժանացել տարբեր ժամանակաշրջանների պատմաբանների քննախույզ «հայացքներին», առաջադրված վարկածները բախվել, հիմնավորվել և ընդունվել են: Իհարկե, կան նաև առանձին վիճելի հարցեր, ճշգրտումներ, մեկնաբանություններ, բայց այդ ամենը չի վերաբերում տարածության ու ժամանակի մեջ հիմնական փաստերի շարադրմանը, կառուցվածքին: Իսկ պատմական փաստերն այդպիսին դառնում են, որովհետև դրանք պատմական իրողություններ են, ունեն բավարար հիմքեր, հիմնավորվածություն, համոզականություն, նշանակալից են եղել ոչ միայն իրենց ժամանակաշրջանում, այլև ավելի ուշ ժամանակաշրջաններում, արձանագրված են պատմական աղբյուրներում, համատեղելի, համահունչ են իրենց ժամանակաշրջանի սոցիոմշակութային մթնոլորտին, համատեքստին և հարակից այլ փաստերին, փաստերի ամբողջականությանը:

Կան օբյեկտիվ իրողություններ, որոնցից չի կարող խույս տալ մասնագետը: Բարեխիղճ, ազնիվ, բարոյական պատմաբանը առանց բավարար հիմքերի երբեք իրեն թույլ չի տա առաջադրել կամայական վարկածներ, կատարել ոչ տեղին մեկնաբանություններ և սրբագրումներ: Թեպետ քիչ չեն եղել և կան «վայ» պատմաբաններ և քաղաքական գործիչներ, որոնք, ելնելով ինչ-ինչ նկատառումներից, անձնական, ազգային, գաղափարական, քաղաքական և այլ շահերից, կեղծում, միտումնավոր ոչ ճիշտ են ներկայացնում պատմական փաստերը, իրողությունները: Սակայն հիմա ո՞վ է հիշում և կարդում խորհրդային «պալատական» գաղափարախոսների և պատմաբանների հաստատվոր աշխատությունները: Ժամանակն իր հերթական սրբագրումը, ապա-

սուբյեկտայնացումը կատարեց, և դա անընդհատ գործընթաց է: Դրանում պետք է մեղադրել ու թերագնահատել ոչ թե փիլիսոփայությանը, պատմությանը, և, ընդհանրապես, հասարակագիտությանն ու հումանիտար գիտություններին, այլ այն մարդկանց, որոնք գիտությունն օգտագործում են ոչ ազնիվ նպատակներով: Բնագիտության մեջ ևս քիչ չեն այն դեպքերը, երբ միտումնավոր կամ ոչ միտումնավոր բացարձակացվել է առանձին մարդկանց, դպրոցների, գաղափարների դերը: Ժամանակի ընթացքում գիտությունը, անկախ այն բանից՝ հումանիտար գիտություն է, թե բնագիտություն, կատարում է իր սրբագրումը: Դեն են նետվում հնացած գաղափարները, ճշգրտվում ու հաստատվում են ժամանակի ընթացքում քննություն բռնած փաստերը, գաղափարները, վարկածները, տեսությունները: Դա մարդկային ճանաչողության առանձնահատկությունն է: Իհարկե, գիտության յուրաքանչյուր բնագավառ ունի իր ճանաչողական յուրահատկությունները, որոնց բացահայտումն անհրաժեշտ է, սակայն դրանք պետք չէ հակադրել միմյանց: Գիտությունը, մշակույթը, մեր ճանաչողական կարողություններն ու հնարավորություններն ամբողջական են:

Հարց է առաջանում, գոյություն ունե՞ն արդյոք պատմական փաստերի հավաստիությունը գնահատող չափանիշներ: Մեր կարծիքով, այո՝ Այնպես, ինչպես նշել ենք վերևում, պատմական փաստերն անպայմանորեն պետք է արձանագրված լինեն պատմական աղբյուրներում կամ վկայություններում: Փաստերը պետք է ճշգրիտ ձևակերպվեն՝ հատկապես նկատի ունենալով չեզոք աղբյուրները: Պետք է համահունչ լինեն իրենց ժամանակի սոցիոմշակութային համատեքստին, աշխարհի պատկերին, հարացույցին: Պատմական փաստերը պետք է քննադատաբար վերլուծվեն, ընտրվեն, գնահատվեն իրենց ժամանակների իրողությունների և, ընդհանրապես, համամարդկային արժեքների տեսանկյունից: Պետք է համադրելի, փոխապայմանավորվածության, ամբողջականության մեջ լինեն հարակից փաստերի հետ, ունենան բովանդակային ամբողջականություն: Ամեն մի պատմական

հետազոտությունն պետք է ընդգրկի հնարավորինս շատ փաստեր: Դրանք պետք է ունենան բացատրող և, եթե հնարավոր է, կանխատեսող ուժ: Պատմական փաստերը պետք է բանականորեն, օպերացիոնալ կերպով վերարտադրելի, ամբողջական, ընդունելի ձևով ներկայացնելի լինեն: Դրանք պետք է ամրագրված լինեն տարածության ու ժամանակի մեջ, շարադրվեն հիմնավոր, անհակասական, հետևողական, պարզ, ճշգրիտ, հստակ, գեղեցիկ, ունենան ներքին իմաստային ամբողջականություն, լրիվություն, ավարտվածություն, համակարգվածություն, կարգավորվածություն: Պատմական աղբյուրներից բխող իրողությունների մասին պետք է ոչ թե կամայական ենթադրություններ անել, այլ կռահումներ, վարկածներ առաջադրել՝ հարազատ մնալով միայն դրանց ներքին իմաստային ամբողջականությանը:

Վարկածի ըմբռնումը

Վարկածը գիտական հետազոտության կարևոր օղակներից մեկն է: Գնահատության, հատկապես գիտական-ճանաչողության, գիտական հետազոտության գործընթացում, երբ ձևակերպված է հիմնահարցը (ենպիրիկ կամ տեսական) կամ հիմնահարցերի ամբողջությունը, անհրաժեշտություն է զգացվում փնտրել դրա լուծումը: Որոշ դեպքերում հիմնահարցի լուծումը ենթադրում է նոր դիտարկումների, գիտափորձերի անցկացում, փաստերի որոնում, նոր հայեցակարգային միջոցների առաջադրում: Սակայն մինչև նոր դիտարկումներ և գիտափորձեր անցկացնելը անհրաժեշտ է առաջադրել որոշակի հիպոթեզ (հունարենից թարգմանած՝ հիմք, ենթադրություն), վարկած՝ գիտության այդ ոլորտը ներկայացնելու, բացատրելու համար:

Մեթոդաբանական գրականության մեջ առկա են վարկածի նեղ և լայն ըմբռնումներ²⁰: Վարկածի նեղ ըմբռնման դեպքում

²⁰ Տե՛ս **Գևորգյան Զ. Ա.**, Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ, Եր., 1959, **Բրուտյան Գ. Ա.**, Տրամաբանության դասընթաց, Եր., 1987, **Русакин Г. И.**, Ме-

պնդումը վարկած է համարվում այն դեպքում, երբ, *առաջին*՝ վերաբերում է դիտարկելի փաստերին, *երկրորդ*՝ կարող է ճշգրտվել դիտարկման և գիտափորձերի արդյունքների միջոցով: Սակայն վարկածի այդպիսի մեկնաբանման դեպքում գիտական գիտելիքի ոլորտից դուրս կմնան պատմության, մաթեմատիկայի, նույնիսկ էմպիրիկ բնագիտության այն բնագավառները, որոնք անմիջականորեն դիտարկելի կամ ստուգելի չեն գիտափորձերի միջոցով: Առավել ընդունելի է վարկածի լայն ըմբռնումը: Որպես այդպիսին հասկանում են ցանկացած ենթադրություն, կռահում, կանխատեսում, որոնց ճշմարտությունն անորոշ է, անհայտ: Դրանք ծառայում են նոր երևույթների, դեպքերի, փաստերի բացատրմանն ու կանխատեսմանը: Երբեմն դրանց թվին է դասվում նաև տեսությունը, երբ խոսքը վերաբերում է վարկածների համակարգին:

Տրամաբանությունում վարկածային համարում են ցանկացած ասույթ, որի ճշմարտության նշանակությունը գնահատվում է հավանականության ցանկացած աստիճանով: Այն կարող է տատանվել հավանականության (ճշմարտության) և անհնարիմության (ստի, կեղծիքի) միջև: Ի տարբերություն դասական տրամաբանության սովորական ասույթների, որոնք բնութագրվում են կամ ճշմարիտի կամ կեղծի միջոցով, հավանական ասույթները սկզբունքորեն բնութագրվում են անթիվ նշանակություններով:

Վարկածն այնպիսի դատողություն է, որը տարբերվում է էմպիրիկ տվյալներից, փաստերից: Թեև վարկածը կառուցվում է տվյալների հիման վրա, սակայն իր բովանդակությամբ և իմաստով դուրս է գալիս էմպիրիկ տվյալների, փաստերի շրջանակներից: Վարկածն ունի ավելի մեծ բովանդակություն, ավելի մեծ տրամաբանական ուժ, քան այն տվյալները, որոնց վրա նա հիմնվում է: Վարկածը պետք է լինի այնպիսին, որ հնարավոր լինի նոր փաստերի առկայության դեպքում այն ճշգրտել: Իմացաբանա-

тоды научного исследования, М., 1974, **Баженов Л. Б.**, Структура и функции естественнонаучной теории. М., 1978, **Меркулов И. П.**, Гипотетико-дедуктивная модель и развитие научного знания, М., 1980:

կան ասպեկտով վարկածը նախորդում է տվյալների հավաքման ցանկացած գործունեության: Տվյալներ, փաստեր հավաքելն անհմաստ է, եթե չկա ղեկավար վարկած: Նկատենք, որ առօրեական կյանքում ևս մեր գործունեությունն ուղեկցվում է բազմաթիվ վարկածների ընդունմամբ:

Գիտության և փիլիսոփայության պատմության մեջ վարկածի եզրակացության անորոշ, հավանական բնույթը պայմանավորել է ճանաչողական այդ ձևի նկատմամբ փիլիսոփաների և գիտնականների թեական վերաբերմունքը: Սկսած Արիստոտելի ժամանակներից, երբ նա գտավ, որ վարկածը չի կարելի օգտագործել որպես սիլլոգիստական ապացուցման նախադրյալներ (քանի որ նախադրյալները պետք է մտածվեն որպես զուտ, ընդհանուր, անհրաժեշտ և բացարձակ ճշմարտություններ), մինչև XIX դարի վերջը այն օգտագործվել է թաքնված ձևով: Անտիկ գիտությունում հիպոթետիկ կամ ճշմարտաման եզրակացությունները դուրս են մղվել «էպիստեմայի» կամ հավաստի գիտելիքի բնագավառից՝ ներմուծվելով «դոկսայի»՝ կարծիքի ոլորտը:

Վերածննդի և Նոր ժամանակների դարաշրջանում որպես վարկածներ օգտագործել են տարբեր տիպերի բնափիլիսոփայական ենթադրություններ և սպեկուլյատիվ կառուցվածքներ: Նույնիսկ XVIII դարում ֆիզիկական տարբեր երևույթների բացատրության համար հնարել են ծանրություն չունեցող հեղուկներ և թաքնված ուժեր: Հենց այդ հանգամանքը Նյուտոնին ստիպել է իր «Բնության փիլիսոփայության մաթեմատիկական սկզբունքներ» հիմնարար աշխատությունում գրել է, որ «վարկածներ ես չեմ հնարում», (*hypothesis non fingo*), թեև հենց այդ աշխատությունում նա փաստորեն օգտվել է վարկածներից: Նյուտոնը մեխանիկայի համար կառուցել է հիպոթետիկ-դեդուկտիվ համակարգ:

Սկսած Ֆ. Բեկոնից, այդ թվում՝ նաև պոզիտիվիզմի կողմնակիցները, հուսալի էին համարում միայն գիտության այն պնդումները, որոնք հենվում են զգայական ընկալումների, անմիջականորեն տրվածի, դրանց պարզ ընդհանրացումների վրա: Ուստի

նրանք կասկածանքով էին վերաբերվում վարկածներին: Վերջիններս համարում էին հետազոտության ժամանակավոր միջոցներ:

Դա առանձնապես վերաբերում էր ոչ դիտարկելի, տեսական օբյեկտներին: Այդպիսի օբյեկտների ներմուծման դեմ հանդես է եկել ավստրիացի ֆիզիկոս և փիլիսոփա Է. Մախը:

Ռացիոնալիստները ևս, համծին Ռ. Դեկարտի, քննադատաբար են վերաբերվել վարկածներին, քանի որ, ըստ նրա, վարկածները հենվում են անհուսալի և անհավաստի հիմքերի (զգայությունների) վրա: Մինչդեռ մաթեմատիկական ճանաչողությունը սկսվում է ակնհայտ աքսիոմներից և հետագայում ծավալվում է դեդուկտիվորեն՝ առանց էմպիրիկ իրականությանը դիմելու: Սակայն, նկատում է Գ. Ի. Ռուզավինը, նման մոտեցումը ծայրահեղորեն պարզեցված և ոչ ադեկվատ է նույնիսկ մաթեմատիկայում: Որևէ թեորեմ ապացուցելու համար սկզբում անհրաժեշտ է այն կռահել, ենթադրություն անել, վարկած առաջադրել: Երբ այդ ենթադրությունն ապացուցվի, այն բխեցվի աքսիոմներից կամ ապացուցված թեորեմներից՝ կվերածվի թեորեմի: Այսպիսով, մաթեմատիկայում ևս հնարավոր չէ ճիշտ ուղղությամբ շարժվել առանց վարկածների առաջադրման²¹:

Վարկածներն առաջադրվում են ինչպես նոր երևույթների և փաստերի նախնական բացատրման, այնպես էլ նոր փաստերի և հին տեսական պատկերացումների միջև առաջացած հակասությունների հաղթահարման համար:

Առաջին դեպքում խոսքը համեմատաբար մեկուսացված երևույթների բացատրության և նախնական ինֆորմացիայի կուտակման մասին է, երկրորդ դեպքում՝ այն փաստերի բացատրության, որոնք չեն տեղավորվում գոյություն ունեցող տեսությունների շրջանակներում:

Հին տեսություններին և հարացույցին (պարադիգմային) հակասող փաստերի կուտակումն ի վերջո հանգեցնում է ճգնաժամային իրավիճակի առաջացմանը, որը կարող է հանգեցնել ավե-

²¹ Տե՛ս **Рузавин Г. И.**, Методология научного исследования, М., 1999, էջ 64-66:

լի ընդհանրական տեսական համակարգերի առաջացմանը²²: Այդ դեպքում վարկածը հանդես է գալիս որպես գիտական գիտելիքների զարգացման և որոնման ձև:

Մեթոդաբանական և տրամաբանական գրականության մեջ առաջին հերթին առանձնացնում են վարկածի հիմքը: Այն բաղկացած է նախադրյալներից, որոնք լինում են էմպիրիկ և տեսական դատողություններ:

Երկրորդ՝ զատում են եզրակացությունը, որը, ի տարբերություն դեդուկտիվ մտահանգման, ամբողջովին չի բխում նախադրյալներից: Վերջիններս միայն այս կամ այն հավանականության աստիճանով հաստատում են եզրակացությունը կամ այն դարձնում են հավանական: Ուստի իր տրամաբանական կառուցվածքով վարկածը համանման (անալոգիկ) է ճշմարտանման մտահանգմանը: Տրամաբանությունում վերջինիս թվին սովորաբար դասում են ինդուկցիան, անալոգիան և վիճակագրական եզրակացությունները: Դրանք թեև տարբերվում են ճանաչողությունում ունեցած իրենց գործառույթներով և ձևերով, այնուամենայնիվ օժտված են այն առանձնահատկությամբ, որ դրանց եզրակացությունները ճշմարտանման կամ հավանական բնույթի են: Վարկածի սկզբունքային տարբերությունը ճշմարտանման կշռադատություններից այն է, որ նրա նախադրյալների ճշմարտությունն անորոշ է, բացի այդ, իրենց նախադրյալները փոփոխվում են վարկածի մշակման ընթացքում:

Վարկածի հիմքերի կամ նրա նախադրյալների, այսինքն՝ էմպիրիկ փաստերի, տվյալների, վկայությունների և եզրակացության միջև գոյություն ունի որոշակի տրամաբանական հարաբերություն: Դրա էությունն այն է, որ որոշակի վարկածին վերաբերող փաստերն ու վկայություններն այս կամ այն աստիճանով հաստատում են եզրակացությունը: Ակնհայտ է, որ հաստատման այդ աստիճանը ժամանակի ընթացքում փոփոխվում է:

²² Տե՛ս **Кун Т.**, Структура научных революций, М., 1977:

Տրամաբանական և մեթոդաբանական գրականության մեջ վարկածի նախադրյալների, հիմքերի և եզրակացության միջև փոխհարաբերության առանձնահատկությունն ակնհայտ դարձնելու համար այն համեմատում են դեդուկտիվ բխեցման նախադրյալների և եզրակացության տրամաբանական հարաբերության հետ: Վերջին կշռադատություններում նախադրյալների ճշմարտությունն ամբողջովին տեղափոխվում է եզրակացության վրա, ուստի այն միանշանակ է, ճշգրիտ, հավաստի: Դեդուկտիվ կշռադատությունների դեպքում թեորեմները իմպլիցիտ ձևով պարունակվում են աքսիոմներում: Ապացուցման դեպքում մենք միայն բացահայտում ենք այդ բովանդակությունը: Այն դարձնում ենք ակնհայտ: Այդ կշռադատությունների ամենահիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանց եզրակացություններն ունեն հավաստի, ավարտուն բնույթ, օժտված են հարաբերական ինքնուրույնությամբ, ուստի կարող են առանձնացվել նախադրյալներից: Օրինակ՝ թեորեմները, որոնք ապացուցվում են աքսիոմներից դեդուկցիա կատարելու միջոցով, հետագայում կարող են կիրառվել առանց այդ աքսիոմներին դիմելու: Բոլորովին այլ է վիճակը վարկածի և, ընդհանրապես, ճշմարտանման կշռադատությունների դեպքում, քանի որ դրանց ճշմարտանմանության աստիճանն ուղղակիորեն կախված է այն փաստերից կամ տվյալներից, որոնք հաստատում են եզրակացությունները: Այդ եզրակացությունները չեն կարող բաժանվել իրենց նախադրյալներից: Սակայն դա չի նշանակում, որ վարկածի և նրա հիմքերի միջև չկա տարբերություն, հատկապես երբ խոսքը էմպիրիկ և ֆակտուալ գիտությունների վարկածների մասին է:

Այն փաստերը, դեպքերը, վկայությունները և այլ տվյալներ, որոնք կազմում են վարկածի հիմքերը, սովորաբար մանրակրկիտ ուսումնասիրվում և ամրագրվում են, կարող են հաստատվել հետազոտման օբյեկտիվ միջոցների օգնությամբ, լինեն հուսալի: Եզրակացությունը կամ վարկածը, որը հիմնվում է դրանց վրա, իրենից ներկայացնում է ենթադրություն, հետևաբար միան-

շանակ չի բխում փաստերից, վկայություններից և այլն: Կարող է լինել ոչ դիտարկելի օբյեկտների մասին տեսական կառուցվածք: Վարկածը ստեղծվում է այն բանի համար, որպեսզի բացատրի հայտնի փաստերը և կանխատեսի անհայտները: Ուստի բնական է, որ այն իր ծավալով պետք է ավելի լայն լինի գոյություն ունեցող փաստերից, իսկ բովանդակությամբ՝ ավելի խորը այն էմպիրիկ գիտելիքներից, որոնց վրա կառուցվում է:

Վարկածի և դրա հիմքի հետ կապը հաճախ ձևակերպվում է պայմանական դատողության տեսքով. «Եթե E, ապա H», որում E-ն հիմքն է, իսկ H-ը՝ վարկածը: Կարելի է ասել, որ պայմանականությունը վարկած լինելու բավարար հատկանիշ է: Երբեմն վարկածը կարող է ձևակերպվել հասարակական դատողության տեսքով: Օրինակ՝ «Գոյություն ունի կյանք այլ մոլորակներում»:

Ինչպես արդեն նշել ենք, վարկածի հիմքը կամ նախադրյալները տարբերվում են իրենց եզրակացությունից ընդհանրությամբ և տրամաբանական ուժով: Քանի որ նախադրյալները տրամաբանորեն բխում են եզրակացությունից, ուստի դրանք տրամաբանորեն ավելի թույլ են եզրակացությունից²³:

Պատմական վարկածի առանձնահատկությունները

Գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում վարկածների առանձնահատկությունների պարզաբանումը: Մեթոդաբանական գրականության մեջ վարկած գիտելիքի ձևը քննարկելիս հիմնականում նկատի են առնվում բնագիտական վարկածները, որոնց հիմնական տարբերությունը պատմական վարկածներից այն է, որ դրանց գիտափորձի պայմանները, տեղը, հիմքերը վերատադրելի են: Այսինքն՝ ցանկացած չափով և անգամներ կարելի է

²³ Տե՛ս **Рузавин Г. И.**, Методология научного исследования, М., 1999, էջ 64-89:

վերարտադրել այդ կարգի վարկածների հիմքերը, տեղը, ստուգել դրանք, ապա դրանց հիման վրա ճշգրտել հին վարկածները և առաջադրել նորերը: Ի տարբերություն այդ կարգի վարկածների՝ սոցիալ-հումանիտար բնագավառը և, առանձնապես, պատմական գիտելիքի ոլորտը զրկված են այդ հնարավորություններից: Պատմական իրողությունները, հատկապես սոցիալական պատմությանը վերաբերող իրադարձությունները, հիմնականում հնարավոր չէ վերականգնել, վերստեղծել այնպես, ինչպես դրանք եղել են: Ինչպես ասում են՝ սոցիալ-հումանիտար ոլորտի օբյեկտները, երևույթները հիմնականում յուրատեսակ, ունիկալ են: Սակայն չպետք է մոռանալ, որ բնության մեջ նույնպես կան չկրկնվող, առանձնահատուկ երևույթներ: Ստորև կփորձենք պատմական մի վարկածի առաջադրման ու լուծման պատմության օրինակով անդրադառնալ այն վարկածների հավաստիության յուրահատկություններին, ընդունման առանձնահատկություններին, որոնք վերաբերում են ունիկալ երևույթներին: Այն երևույթներին, որոնք հնարավոր չէ գիտափորձի օգնությամբ վերարտադրել, վերստեղծել:

Ծանոթանանք հայոց պատմական գանձերից մեկի՝ «Աշխարհացոյցի» և Մովսես Խորենացուն նրա հեղինակը ճանաչելու պատմության հետ: Հիմնահարցը հետևյալն է. ո՞վ է գրել «Աշխարհացոյցը», ո՞ր թվականին: Հարցի պատմությունը հատվածաբար կշարադրենք ըստ անվանի պատմաբան, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» գրքի²⁴:

Խնդիրը, իհարկե, պատմաբանին վերաբերող իրողությունն է: Սակայն, եթե նույն հիմնախնդիրը դիտարկում ենք գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության տեսանկյունից, ապա հարց է ծագում՝ ինչպե՞ս է պատմական գիտելիքում առաջադրվում վարկածը, ապա քննարկվելով դառնում ընդունելի, համընդհանրական գիտական հանրության և հանրության կողմից առ-

²⁴ Տե՛ս **Յ. Մանանդյան**, Խորենացու առեղծվածի լուծումը, Եր., 1934: (Այսուհետ տեքստում կնշվի միայն էջը):

հասարակ: Այսինքն՝ մենք գործ ունենք գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության համար հետաքրքրական հիմնահարցի առաջադրումից մինչև գիտելիքի ընդունման առանձնահատկությունների բացահայտման հետ:

Հայտնի է, որ «Աշխարհացոյցի» առաջին հինգ հրատարակությունները լույս են տեսել XVII և XVIII դարերում և, համաձայն ավանդական վերնագրի, համարվել են Մովսես Խորենացու աշխատությունը (էջ 27):

Այս կարծիքը երկար ժամանակ եղել է միակ ընդունվածը: Սակայն 18-րդ դարավերջից սկսած գրականության մեջ կասկած առաջացավ, և աստիճանաբար մուտք գործեց մի նոր տեսակետ, որ այս աշխատությունն անկարելի է վերագրել V դարի մատենագիր Մովսես Խորենացուն (տե՛ս՝ նույն տեղը):

Ահա և պատմական հիմնահարցը. արդյոք «Աշխարհացոյց» աշխատության հեղինակը Մովսես Խորենացի¹⁰ն է, թե՞ ոչ: Եթե ոչ Խորենացին, ապա՝ ով:

Ի՞նչ հիմքեր են ունեցել հետազոտողներն այսպիսի հարցադրման համար: Հիմքերը, իհարկե, «Աշխարհացոյց» աշխատության բազմաթիվ հրատարակություններն են: Նրանցում տեղ գտած հակասությունները, անախրոնիզմները: Փաստն այս է. եթե Մովսես Խորենացին 5-րդ դարի հեղինակ է, և «Աշխարհացոյցը» նրա աշխատությունն է, ապա այդ աշխատությունում պետք է տեղ գտնեին այն փաստերը, տեղանունները, որոնք հայտնի են եղել մինչև այդ: Սա ակնհայտ է: Բայց ահա, 1789 թ. ֆրանսիացի գիտնական Սենտ Կրուան նկատում է, որ «Աշխարհացոյց»-ում հիշատակված Բասրա քաղաքը հիմնվել է Օմար Խալիֆի հրամանով Հիջրայի 14 թվականին, այսինքն՝ Քրիստոսից հետո 635 թվականին: Հետևաբար, եզրակացրել է Սենտ Կրուան, աշխարհագրական այս անվանման հեղինակը ոչ մի դեպքում չէր կարող լինել, ինչպես մինչև այդ ընդունել են, Մովսես Խորենացին, որն ապրել է V դարում (տե՛ս նույն տեղը): Նրա կարծիքով, «Աշխարհացոյցը» կարող էր կազմված լինել միայն VII դարի սկզբներին,

երբ Բասրան գտնվել է ծաղկուն վիճակում: Սենտ Կրուայի առաջադրած վարկածի հիմքը «Աշխարհացոյց»-ում նկատված հակասող փաստն է կամ, ինչպես ստորև կտեսնենք, փաստերը, որոնց հիման վրա տարբեր հեղինակներ եզրակացրել են, վարկածներ առաջադրել, որ «Աշխարհացոյցը» գրվել է ավելի ուշ շրջանում:

Հիմնահարցը հետևյալն է. եթե Մովսես Խորենացին հինգերորդ դարի հեղինակ է, ապա «Աշխարհացոյցը» ինքը չի գրել, իսկ եթե ինքն է գրել, ապա նա ավելի ուշ շրջանում ապրած հեղինակ է: Այդպիսի մի վարկածի հեղինակ է Սեն Մարտենը, ով «Աշխարհացոյցի» իր հրատարակության և ֆրանսերեն թարգմանության սկզբում զետեղել էր ընդարձակ մի առաջաբան, որի մեջ «Աշխարհացոյցի» հորինման ժամանակը նա ենթադրում էր իններորդ դարի վերջը կամ տասներորդ դարի կեսը (մոտավորապես 950 թ.) (էջ 28): Վարկածը հիմնավորող հիմքերից, օրինակներից մեկն այսպիսին է. «Աշխարհացոյցի» մեջ որպես Գալլիայի բնակիչներ հիշատակված են ֆրանկները, ովքեր անվանված են «հզոր ազգ», իսկ Սեն Մարտենի կարծիքով՝ հինգերորդ դարում ֆրանկները դեռևս հզոր ազգ չէին, և նրանց անունը դժվար թե հայտնի լիներ Խորենացուն: Բացի այդ՝ ֆրանկների բնակության տեղն այդ ժամանակ գլխավորապես Գերմանիան էր և ոչ թե Գալլիան (էջ 29):

Հետագայում Սեն Մարտենի թե՛ առանձին դատողությունները և թե՛ ընդհանուր եզրակացությունն ամենախիստ քննադատության ենթարկվեցին Վենետիկի Մխիթարյանների կողմից, որոնք շարունակում էին պնդել, որ «Աշխարհացոյցը» Խորենացու աշխատությունն է և գրված է հինգերորդ դարում: Հակադրվելով Սեն Մարտենին՝ Ա. Ինճիճյանը փորձել է իր «Հնախօսության» մեջ ապացուցել, որ Սեն Մարտենի մատնանշած օտարոտի խորթությունները մեծ մասամբ Խորենացու գրածը չեն և չկան «Աշխարհացոյցի» ընտիր ձեռագրերում, իսկ մի քանիսը սխալ են մեկնաբանված Սեն Մարտենի առաջաբանում: Այս վեճը, Հ. Մանանդյանի կարծիքով, ունեցավ այն դրական արդյունքը, որ Վենետիկի

Մխիթարյանները, նկատի ունենալով Սեն Մարտենի հրատարակած բնագրի ընդմիջարկություններն ու աղճատումները, վեց ձեռագրի բաղդատությամբ տվեցին «Աշխարհացոյցի» քննական մի նոր հրատարակություն, որը խորենացուն վերագրված մյուս երկերի հետ միասին տպագրված է Վենետիկում 1843 թ.: Սակայն քննական այս հրատարակությունից երևաց, որ Սեն Մարտենի մատնանշած աշխարհագրական մի քանի անուններ հանդիպում են համառոտ այս խմբագրության բոլոր ձեռագրերում: Այստեղից Յ. Մանանդյանը եզրակացնում է, որ Սեն Մարտենի հիմնական եզրակացությունը, թե «Աշխարհացոյցը» գրված պետք է լինի ոչ թե հինգերորդ դարում, այլ շատ ավելի ուշ, միանգամայն հավանական է ու իրավացի (էջ 31):

Ինչպես նկատելի է, տվյալ եզրակացության կամ վարկածի հիմքն այն է, որ «Աշխարհացոյցի» բոլոր ձեռագրերում հանդիպում են ընդհանրություններ, որոնք հակասության մեջ են գտնվում նախնական ենթադրության հետ: Վերևում մենք արդեն այդպիսի հակասական կարծիքների օրինակներ բերել ենք: Պատմական այս գիտական բանավեճն ունեցել է իր շարունակությունը: Պատմաբան Գուտշմիտը և աշխարհագիր Կիպերտը 1873 թ. իրենց զեկույցում ենթադրել են, որ «Աշխարհացոյցը» խորենացու աշխատությունն է՝ գրված հինգերորդ դարում: Կիպերտի կարծիքով, «Աշխարհացոյցը» կարելի է վերագրել խորենացուն՝ բացառությամբ որոշ հատվածների և մի քանի աննշան հավելվածների (էջ 32):

Հետագայում Բ. Պատկանյանը, ընդունելով Սեն Մարտենի հիմնական եզրակացությունը, որ «Աշխարհացոյցը» չի կարող լինել խորենացու աշխատությունը, համաձայն չի եղել նրա այն կարծիքի հետ, որ իբր «Աշխարհացոյցը» գրված է իններորդ դարի կեսերին: Որպես նոր ապացույց, որ «Աշխարհացոյցը» խորենացու հեղինակածը չէ, Պատկանյանը նոր դատողություններ է անում վեցերորդ դարի մատենագիր Կոնստանդին Կոսմոս Յնդկացու մասին, որից քաղվածքներ է արել «Աշխարհացոյցի»

հայ հեղինակը: Պատկանյանի կարծիքով՝ «Աշխարհացոյցը» լեզվաճական առումով ևս ոչ մի նմանություն չունի Խորենացու աշխատությունների լեզվական առանձնահատկությունների հետ: Նա «Աշխարհացոյցը» համարում է յոթերորդ դարի առաջին կեսին գրված գործ և համոզված է, որ հենց այդ ժամանակաշրջանի համար բնական ու հասկանալի են դառնում կասկածահարույց այն փաստերը, որոնք հիշատակված են Սեն Մարտենի գրքում և քննության են առնված ռուսերեն իր առաջաբանում: Ավելին, կարծիք հայտնելով, որ «Աշխարհացոյցի» թարգմանման և հորինման համար անհրաժեշտ էր իմանալ և՛ հունարեն, և՛ մաթեմատիկա, եզրակացրել է, որ նրա հեղինակը Անանիա Շիրակացին է, որը և՛ հունաբան մատենագիր է, և՛ հայտնի մաթեմատիկոս (էջ 33):

Հետագայում բանասերներից շատերը՝ հիմնվելով Պատկանյանի եզրակացության վրա, «Աշխարհացոյցի» հեղինակ համարել են Անանիա Շիրակացուն:

Գուտշմիտը Խորենացու «Պատմություն հայոցը» և «Աշխարհացոյցը» համարել է նույն հեղինակի գործը, որն ապրել է յոթերորդ դարում: Իսկ Խալաթյանը ենթադրել է, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը» աղբյուր է ծառայել Խորենացու «Պատմություն հայոցի» համար: Հ. Մանանդյանը, հատված առ հատված մանրամասն ուսումնասիրելով «Աշխարհացոյցի» և «Պատմություն հայոցի» նմանություններն ու տարբերությունները, ոճը, բազմաթիվ դարձվածքները, մատենագրելու բնորոշ ձևը, բառամթերքը, համեմատելով առանձնահատուկ բառերը, հանգել է այն եզրակացության, որ «Աշխարհացոյցի» հեղինակը Մովսես Խորենացին է, և Վենետիկի Մխիթարյաններն այդ հարցում կատարելապես իրավացի են (էջ 74): Եվ որ Խորենացին ապրել է իններորդ դարում (էջ 46):

Մասնավորապես, նա՝ որպես իր վարկածի հիմնավորման միջոց, մատնանշում է «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրության բոլոր ձեռագրերում արաբական բառերի առկայությունը:

Ավելի ուշ Ստ. Մալխասյանցն իր «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատությամբ հակադրվում է Հ. Մանանդյանի փաստարկներին: Նա մանրամասն վերլուծել է դրանք և ցույց տվել, որ Մովսես Խորենացին «Պատմություն հայոցի» հեղինակն է և այդ աշխատությունը գրել է հինգերորդ դարում: Այդ նույնը Ստ. Մալխասյանցը հիմնավորել է նաև «Աշխարհացոյցի» կապակցությամբ²⁵:

Հետաքրքրական է պատմաբան Բ. Հարությունյանի մոտեցումը: Նա գրում է. «Սկզբնապես մենք ևս կանգնած էինք քաղաքացիություն ստացած այն տեսակետների վրա, որ «Աշխարհացոյցը» յոթերորդ դարի ստեղծագործություն է, պատկանում է Անանիա Շիրակացու գրչին, իսկ ըստ աշխարհների վարչական բաժանումն անմիջականորեն կապվում է Մավրիկիոս կայսեր վերականգնումների հետ: Աստիճանաբար մեր պատկերացումները խարխվեցին, իսկ այնուհետև փաստական նյութի նոր իմաստավորումը մեզ հանգեցրեց այն մտքին, որ աշխարհները կամ նահանգները, որպես վարչական միավորներ, ծնունդ են առել առաջին դարում, ամենայն հավանականությամբ, Տրդատ Ա թագավորի գահակալության շրջանում»²⁶:

Այնուհետև նա եզրակացրել է. «Մանրակրկիտ պատմա-աշխարհագրական և բանասիրական քննությունը մեզ բերեց այն եզրակացության, որ «Աշխարհացոյցը» գրվել է հինգերորդ դարում և հեղինակը, մեր կարծիքով, Մովսես Խորենացին՝ հանճարեղ Պատմահայրը, տուրք տալով իր ժամանակների վարչաքաղաքական որոշ փոփոխությունների, վերջիններս մուծել է «Աշխարհացոյցի» մեջ, որով և Մեծ Հայքը մեզ է ներկայացնում արդեն դասական դարձած իր տասնհինգ աշխարհներով»²⁷:

Հարց է առաջանում, ինչո՞վ է պայմանավորված նույն խնդրի, հիմնահարցի նկատմամբ վարկածների այսպիսի առատությունը, բազմազանությունը: Եթե նշված հիմնահարցը դասա-

²⁵ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Եր., 1940:

²⁶ Բ. Հարությունյան, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Եր., 2001, էջ 51:

²⁷ Նույն տեղում, էջ 52:

կան էմպիրիկ բնագիտության խնդիր լինեն, ապա մասնագետները գիտափորձերի միջոցով կվերարտադրեն ուսումնասիրվող խնդրի նախնական վիճակը, ընդ որում՝ բազմաթիվ անգամներ, բազմաթիվ տեղերում, վեր կհանվեն նրա հիմքերը, կստուգվեն, կառաջադրվեն վարկածներ, կհիմնավորվեն այդ վարկածները, կճշգրտվեն և, ի վերջո, բավարար հիմքերի, հիմնավորվածության, համոզականության առկայության պայմաններում վարկածներից մեկը կհամարվեր հավաստի, ընդունելի գիտելիք։ Գիշտ է, այդ դեպքում ևս հնարավոր է բազմաթիվ վարկածների առաջադրում, բայց դրանց թիվն անհամեմատ փոքր է։

Այլ է վիճակը պատմական գիտելիքում, որտեղ մենք գործ ունենք անցյալի, անվերարտադրելի, ունիկալ գիտելիքի հետ։ Բնական է, որ նմանատիպ վարկածների հիմքերը վերարտադրելի, անմիջականորեն ստուգելի չեն։ Մենք այդ հիմքերին կարող ենք հասնել միջնորդավորված եղանակով, օրինակ՝ «Աշխարհացոյցի» կամ «Պատմություն հայոցի» դեպքում մեզ հասած օրինակների միջոցով, որոնք բնագրեր չեն։ Դրանք տարբեր ժամանակներում բազմիցս ազատ խմբագրվել և արտագրվել են։ Այդ պատճառով դրանցում առկա են բազմաթիվ պատմական շերտեր, հակասություններ, անախրոնիզմներ։

Նույնն է վիճակը Մովսես Խորենացու ապրած ժամանակաշրջանի հարցը որոշելիս։ Մենք դրա մասին կարող ենք կռահել միայն թռուցիկ հատվածների միջոցով։ Ուստի հետազոտողների շրջանում վարկածները շատ են։ Սակայն, ինչպես ցույց է տալիս նշված հիմնահարցերի պատմության քննությունը, ի վերջո մասնագետները հանգել են մեկ ընդունելի տեսակետի։ Ո՞րն է պատճառը։ Մեր կարծիքով, «Աշխարհացոյցի», Խորենացու «Պատմություն հայոցի» և Խորենացու ժամանակաշրջանի քննողներից յուրաքանչյուրը հարցին մոտեցել է որոշակի տեսանկյունից։ Եվ, ըստ այդմ, բացահայտվել են տարբեր հիմքեր, առաջադրվել են տարբեր վարկածներ։ Ժամանակի ընթացքում այդ խնդիրները մանրակրկիտ ու բազմակողմանի քննվել են։ Հետազոտվել,

պարզվել են նշված աշխատությունների նմանություններն ու տարբերությունները, ոճը, դարձվածքները, մատենագրելու ձևը, բառամթերքը, դրանց տարբեր շերտերը և այլն: Ի վերջո, մասնագետները, կարծես սպառելով փաստարկները, նոր փաստերի բացահայտումը, հանգել են դրանց ստույգության, անհակասականության, ամբողջության, լրիվության, ամփոփության, կանոնավորության, կարելի է ասել՝ բնականության մի որոշակի ըմբռնման: Ե՛վ հայաստանցի պատմաբանների, և՛ բանասերների համար ընդունելի է դարձել այն վարկածը, որ «Աշխարհացոյցը» և «Պատմություն հայոց»-ը միևնույն հեղինակի՝ հինգերորդ դարում ապրած Մովսես Խորենացու աշխատություններն են:

Այս տեսակետը, ինչպես ասել ենք, բավականին երկար ժամանակ, ավելի քան հազար տարի տիրապետող է եղել հայ պատմագրության մեջ: Ուստի հարց է առաջանում՝ արժե՞ր այդքան ջանքեր ու եռանդ վատնել, երկար ժամանակ քննել ու քննադատել և ի վերջո հանգել այն տեսակետին, ինչն արդեն ընդունված է եղել գրականության մեջ: Մեր կարծիքով, մի բան է, երբ գիտելիքն ընդունելի է լինում հեղինակության շնորհիվ, այլ բան է, երբ վարկածն ընդունելի է դառնում գիտական հասարակայնության և, առհասարակ, հասարակության կողմից, նրա հիմքերի ուղղակի կամ անուղղակի, բազմակողմանի քննարկումների, ստուգումների, դրանց սպառիչ, բավարար լինելը պարզաբանելու շնորհիվ: Այդ դեպքում գիտելիքը դառնում է ավելի համոզիչ:

Կարելի է արձանագրել, որ XVIII դարի վերջից մեր պատմագրության մեջ ներթափանցված քննադատական ոգին անգնահատելի դեր է կատարել հայ պատմագրության, նրա մեթոդաբանության զարգացման, ճշգրտման մարզում:

Ասենք, որ պատմական տարբեր շրջանները ներկայացնող դեպքերը, երևույթները, իրադարձությունները կարող են ներկայացվել տարբեր հավանականություն ունեցող վարկածների միջոցով:

Պատմական նոր շրջանները ներկայացնող վարկածների հավաստի լինելու աստիճանն ավելի բարձր է, քանի որ այդ իրադարձությունների վերաբերյալ աղբյուրները, փաստերն ավելի շատ են ու ամբողջական: Բացի այդ՝ նշված շրջաններն ուսումնասիրող մասնագետների համար իրենց առավել մոտ ժամանակաշրջանի դեպքերն ավելի հասկանալի են, և դրանք զգալու և դրանց մեջ ներթափանցելու հնարավորություններն ավելի մեծ են: Ուրեմն հավաստի պատմություն ունենալու համար պետք է ունենանք հնարավորինս ստույգ ու բազմազան փաստեր, դրանց ազատ տարաբնույթ քննարկումներ ու մեկնաբանություններ: Դրանից շահում է ոչ միայն պատմական գիտությունը, այլև հասարակությունը և ազգը: Չէ՞ որ պատմությունը կարծրացած, ամրագրված մշակույթ է, հասարակական-քաղաքական փորձ, հոգեբանություն: Եվ մենք պետք է առաջ շարժվենք մեր փորձը քննադատաբար յուրացնելու և դրանից դասեր քաղելու ճանապարհով:

Գիտական տեսություն

Գիտական տեսության ստեղծումը գիտական հետազոտության արդյունքն է, դրա նպատակը: Գիտական տեսությունն ամենահասուն, հավաստի, ճշմարիտ, ընդունելի մարդկային գիտելիքի ձևն է: Կարելի է ասել, որ այն տվյալ սոցիալ-մշակութային համակարգում բավարար հիմքեր, հիմնավորվածություն, համոզչականություն ունեցող ինքնաբավ, ամփոփ գիտելիք է: Բնականաբար, հարց է ծագում, արդյոք գիտության բոլոր բնագավառներն ունեն գիտելիքի այդպիսի ձևեր, թե՞ այն բնորոշ է միայն բնագիտությանը: Օրինակ՝ պատմական գիտելիքն ունի՞ նման ձև, թե՞ ոչ, այսինքն՝ հավաստիության, ճշմարտության, ընդունված լինելու մի այնպիսի աստիճան, ինչպիսին հանդիպում ենք բնագիտական գիտելիքում: Այլ խոսքով՝ որոնք են սոցիալ-հումանիտար գիտելիքների առանձնահատկությունները, դրանց

հավաստիության, ճշմարտության, ընդունելի լինելու չափանիշները: Եթե այդ հարցերը բնագիտական գիտելիքներում քիչ թե շատ մշակված են, ապա սոցիալ-հումանիտար բնագավառում անհամեմատ քիչ են ուսումնասիրված:

«Տեսություն» տերմինը գրականության մեջ օգտագործվում է ամենատարբեր իմաստներով: Նրա հիմնական հատկանիշներ են համարվում տարբեր բնութագրեր: Լայն իմաստով «տեսություն» ասելով հասկանում են մտածողության ընդհանուր բնութագրությունը, որը, ի տարբերություն պրակտիկայի, իրականության հոգևոր, մտածական արտացոլումը, վերարտադրությունն է:

Տեսությունն օգտագործվում է նաև *դոկտրինա*, *ուսմունք* իմաստով: Նրա հիմնական բնութագրերն են գիտելիքի կազմակերպվածությունը և համակարգվածությունը:

Գիտական հետազոտության պրակտիկայում տեսությունը, որպես կանոն, համադրվում է գիտափորձի արդյունքներին, ուստի դրա հիմնական հատկանիշ է համարվում գիտափորձի արդյունքներն ավելի արագ ու պարզ հաշվելը:

Տեսությունն ինֆորմացիոն տեսակետից բնութագրվում է որպես էմպիրիկ ինֆորմացիոն ձևափոխող ալգորիթմ: Տեսության մուտքում ունենք փորձնական տվյալների համախմբություն, ելքում՝ տվյալներ, որոնք կանխատեսում են հետազոտվող համակարգի վարքը:

Գրականության մեջ տեսությունը բնութագրվում է նաև որպես առանձնահատուկ մշանային, ասույթային համակարգ: Սակայն ակնհայտ է, որ ոչ բոլոր ասույթային համակարգերը կարող են հավակնել տեսության դերի: Օրինակ՝ խոհարարական գրքերի տեքստերն ասույթների համակարգեր են, սակայն ոչ ոք դրանք չի համարում տեսություն:

Երբեմն տեսության այդ բնութագրին ավելացվում է բխեցման հարաբերության առկայությունը: Ասվում է, որ տեսությունն ասույթների այնպիսի համակարգ է, որը շաղկապված է բխեցման հարաբերությամբ²⁸:

²⁸ Տե՛ս **Баженов Л. Б.**, Структура и функции естественнонаучной теории, էջ 4-5:

Առանձնապես հետաքրքրական է «Փիլիսոփայական հանրագիտարանում» տեսության սահմանումը, «Տեսությունը որոշ օբյեկտների մասին հավաստի գիտական գիտելիք է: Այն պնդումների և ապացույցների համակարգ է: Պարունակում է տվյալ առարկայական բնագավառի երևույթների բացատրման ու կանխատեսման մեթոդները»²⁹:

Այս սահմանման առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն վարկածի, «տեսություն» գիտելիքի ձևը դիտվում է որպես հավաստի, մենք կավելացնենք՝ ճշմարիտ, ընդունելի գիտելիք: Բնականաբար, որպեսզի պարզաբանենք, թե ինչ առանձնահատկություններ ունի հավաստի, ճշմարիտ, ընդունելի գիտական գիտելիքը, պետք է նախապես սահմանել գիտական տեսությունը, այլև ուսումնասիրել տարբեր բնագավառների տեսությունների կոնկրետ առանձնահատկությունները, ցույց տալ դրանց ընդհանուր բնութագրերը և անցում կատարել գիտական գիտելիքի հավաստիության, ճշմարտության և ընդունման չափանիշների առանձնացմանը:

Գիտական տեսությունների հիմնական տեսակները

Տարբեր տեսակի և բնագավառների տեսություններն ունեն տարբեր կառուցվածք և գործառույթներ: Փիլիսոփայական և մեթոդաբանական գրականության մեջ ընդունված է բնագիտական տեսությունները բաժանել երկու մեծ խմբի՝ էմպիրիկ (փաստական) և տրամաբանական-մաթեմատիկական:

Էմպիրիկ են համարվում այն տեսությունները, որոնք անմիջականորեն ստուգելի են դիտարկմանն փորձական արդյունքների միջոցով: Էմպիրիկ տեսությունների հիմնական ելակետա-

²⁹ Попович М. В., Садовский В. Н., Теория // «Философская энциклопедия», т. 5, М., 1970, с. 205.

յին դրույթներն անուղղակիորեն կապված են դիտարկման և փորձի հետ, իսկ եզրակացությունները համադրելի են փորձական արդյունքներին:

Մաթեմատիկական գիտությունների տեսությունների դրույթները միայն պատմական վաղ շրջանում են կապված եղել դիտարկումների և էմպիրիկ արդյունքների հետ: Մաթեմատիկայի հիմնական առանձնահատկությունն այն է, որ հենց ինքն է ներքնապես կառուցում իր վերացական օբյեկտները և դրանք ուսումնասիրում առանց փորձին դիմելու³⁰:

Ռուս անվանի գիտնական Ա. Ա. Լյապունովն առանձնացրել է բնագիտական տեսության չորս տեսակ.

1) նկարագրական բնագիտական տեսություններ, 2) դրանց մաթեմատիկական մոդելները, 3) բազմության տեսության մակարդակի աքսիոմատիկ տեսություններ, 4) տրամաբանական-մաթեմատիկական տեսություններ, որոնցում նկարագրվում են գիտական օբյեկտները և դրանց հետազոտման գործառնությունները³¹:

Այս դասակարգմանը մոտ է «Փիլիսոփայական հանրագիտարանում» տրված դասակարգումը. 1) նկարագրական տեսություններ (դրանց երբեմն անվանում են էմպիրիկ), 2) գիտական մաթեմատիզացված տեսություններ, որոնցում օգտագործվում են մաթեմատիկական ապարատն ու մոդելները, 3) դեդուկտիվ տեսություններ, որոնք սովորաբար կառուցվում են առանձնահատուկ ձևական լեզվով: Վերջին բաժնում առանձնացվում է տեսության երեք տեսակ՝ ա) աքսիոմատիկ, բ) կոնստրուկտիվ և գ) հիպոթետիկ-դեդուկտիվ³²:

Առավել ամբողջական ու ընդգրկուն է Գ. Յ. Ռուզավիինի առաջադրած գիտական տեսությունների տեսակների դասակարգու-

³⁰ Տե՛ս **Баженов Л. Б.**, նշվ. աշխ., էջ 8:

³¹ Տե՛ս **Ляпунов А. А.**, О некоторых особенностях строения современного теоретического знания // «Вопросы философии», 1966, N 5, էջ 39-42:

³² Տե՛ս **Попович М. В., Садовский В. Н.**, նշվ. աշխ., էջ 205-206:

մը³³: Մանրամասն դիտարկենք այդ բաժանումը: Առաջին՝ գոյություն ունեցող բոլոր տեսությունները նա բաժանում է երկու մեծ դասերի: Առաջին դասի մեջ ներառում է տրամաբանական-մաթեմատիկական տեսությունները, որոնց հաճախ անվանում են նաև ձևական կամ վերացական: Դրա մեջ ամփոփվում են մաթեմատիկական բոլոր տեսությունները՝ սկսած թվաբանական և երկրաչափական տեսություններից, վերջացրած բազմությունների և հանրահաշվական կատեգորիաների տեսություններով: Բացի այդ, այնտեղ ընդգրկվում են նաև ձևական-տրամաբանական տեսությունները, որոնք ներկայացվում են տարբեր տեսակի հաշիվների միջոցով:

Երկրորդ դասի մեջ հետազոտողը ներառել է այն տեսությունները, որոնք անմիջականորեն կապված են կոնկրետ էմպիրիկ նյութի հետ: Բացի բնագիտական և տեխնիկական տեսություններից՝ այս դասի մեջ մտնում են սոցիալական և հումանիտար գիտությունների շատ տեսություններ: Քանի որ այդ տեսությունները հենվում են դիտարկումների, փորձի, փաստերի վրա և հիմնականում օգտագործում են հետազոտության էմպիրիկ մեթոդներ, ապա դրանց հաճախ անվանում են կոնկրետ, բովանդակային, նկարագրական, փաստագրական, ֆակտուալ:

Ջուտ տրամաբանական տեսակետից Գ. Ռուզավինը տեսությունները դասակարգում է դեդուկտիվների և ոչ դեդուկտիվների: Ընդունված է դեդուկտիվ մտահանգումներ անվանել այն մտահանգումները, որոնցում նախադրյալների ճշմարտությունից տրամաբանական անհրաժեշտությամբ բխում է եզրակացության ճշմարտությունը: Դրանցում նախադրյալների ճշմարտությունը ամբողջովին տեղափոխվում է եզրակացության ճշմարտության վրա: Այդպիսի եզրակացություններ հիմնականում օգտագործում են մաթեմատիկայում և մաթեմատիկական բնագիտությունում, որում բոլոր թեորեմները ստացվում են քսիոմներից՝ դեդուկցիայի միջոցով:

³³ Стів Рузавин Г. И., Методология научного исследования:

Փորձնական գիտություններում դեդուկցիան օգտագործվում է այն չափով, որքանով նրանցում կիրառվում են մաթեմատիկական մեթոդներ: Սակայն այդ գիտություններում էական արդյունքներ ստանում են կա՛մ պրոբլեմատիկական ինդուկցիայի, կա՛մ անալոգիայի և որոշ այլ մտահանգումների միջոցով: Հաճախ այդ մտահանգումները լայն իմաստով անվանում են ինդուկտիվ: Այդպիսի մտահանգումների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դրանց նախադրյալները ոչ լրիվությամբ են հիմնավորում եզրակացությունը, այն դարձնում են հավանական կամ՝ այս կամ այն իմաստով ճշմարտաման:

Գիտական տեսությունների հաջորդ դասակարգումը դրանք ֆեմոմենոլոգիականի և ոչ ֆեմոմենոլոգիականի բաժանելն է: Այդպիսի մոտեցումն արտացոլում է համապատասխան տեսության հասունության աստիճանը: Հաճախ այդ տեսությունները անվանում են նաև նկարագրականներ և բացատրականներ: Ընդ որում, տարբեր տեսություններում այդպիսի բացատրությունը տարբեր ճշգրտություն և խորություն ունի:

Փորձնական, փաստագրական գիտությունների զարգացման վաղ շրջանում դրանցում գերակայում են այն տեսությունները, որոնք նկարագրում և համակարգայնացնում են անմիջականորեն դիտարկելի երևույթների հատկությունների միջև գոյություն ունեցող փոխազդեցությունը: Դրանցում ճանաչողությունը հեռու չի գնում երևույթների ոլորտից: Ահա թե ինչու այդ տեսություններն անվանում են ֆեմոմենոլոգիական (հունարենից՝ *phainomenon* - երևույթ բառից):

Սակայն գիտական ճանաչողության խնդիրը չի սահմանափակվում փաստերի պարզ սիստեմավորմամբ ու նկարագրմամբ: Գիտնականները երևույթներն ավելի խորը հասկանալու համար վարկածներ են առաջադրում, որպեսզի բացատրեն տեղի ունեցող գործընթացների ներքին մեխանիզմները: Նրանք ոչ դիտարկելի օբյեկտները բնութագրելու համար ներմուծում են վերացական հասկացություններ, օբյեկտներ՝ ատոմ, քվանտ և այլն, օպ-

տիկական օրենքներ և կանխատեսում են որոշ նոր արդյունքներ: Այսպես, Նյուտոնի կորպուսկուլյար վարկածը և ավելի մանրակրկիտ մշակված Յուզենս-Ֆրենելի լույսի ալիքային բնության տեսությունը ըստ էության օպտիկական երևույթների ֆիզիկական բացատրության առաջին փորձերն են: Այդ երևույթների բացատրական տեսությունների փնտրտուքը դրանով չավարտվեց: Մաքսվելի էլեկտրամագնիսական տեսությունում լույսը դիտարկվեց որպես էլեկտրամագնիսական ճառագայթման լայն դիապագոնի փոքր մաս: Ժամանակակից քվանտային տեսությունը նորից վերադարձել է օպտիկական երևույթների կորպուսկուլյար մեխանիզմի գաղափարին: Այդ դեպքում լույսը դիտարկվում է որպես արագ թռչող ֆոտոնների հոսք: Հայտնի է, որ ո՛չ կորպուսկուլները, ո՛չ լույսի ալիքները, ո՛չ ֆոտոնները չի կարելի անմիջականորեն դիտարկել փորձում: Ֆիզիկայում այդպիսի ոչ դիտարկելի օբյեկտները ներմուծվում են այն նպատակով, որ բացատրեն դիտարկելի երևույթների վարքը՝ արտացոլում, բեկում, լույսի ինտերֆերենցիա, ֆոտոէֆեկտ և այլն:

Այդ տեսակետից ավելի ակնհայտ է դասական թերմոդինամիկայի համեմատությունը մոլեկուլյար-կինետիկական տեսության հետ: Պատմականորեն թերմոդինամիկական տեսությունն առաջացել է այն ժամանակ, երբ գիտությունն ավել կամ պակաս ճշգրտությամբ բացահայտել է նյութի կառուցվածքը: Թեև նյութի շատ հատկանիշներ, օրինակ՝ ջերմաստիճանը, ճնշումը և այլն, կարելի է ուսումնասիրել՝ չիմանալով դրանց կառուցվածքը: Այդպիսի մոտեցումը բնորոշ է հենց թերմոդինամիկային: Դրա բոլոր արդյունքները պարունակվում են որոշ պարզ պնդումներում: Դրանք անվանում են թերմոդինամիկայի օրենքներ: Դրանք են՝ էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը, թերմոդինամիկայի երկրորդ սկզբունքը կամ օրենքը, որի համաձայն՝ ջերմությունը առանց աշխատանք կատարելու չի կարող անցում կատարել սառը մարմիններից տաքին: Երկրորդ սկզբունքը հաս-

տատում է, որ անշրջելի փոփոխությունների դեպքում համակարգի էնտրոպիան աճում է:

Ելնելով այդ սկզբունքներից՝ ջերմային երևույթների մասին կառուցվել է բավականին զարգացած ֆենոմենոլոգիական տեսություն: Այն նկարագրում է նյութի դիտարկելի մակրոսկոպիկ հատկությունների միջև օրինաչափ կապերը: Սակայն այդ տեսությունը չի բացատրում, թե ինչու գոյություն ունեն այդ օրինաչափությունները, օրինակ՝ ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս մեծանում է դրա ճնշումը: Այդ և այլ հարցերի պատասխանները առաջին անգամ հաջողվեց ստանալ մոլեկուլյար-կինետիկական տեսության միջոցով: Նրանում ջերմային և այլ գործընթացների մեխանիզմները բացահայտելիս առաջադրվեց նյութի ատոմամոլեկուլյար կառուցվածքի գաղափարը: Այդպիսով, այդ տեսության միջոցով դիտարկելի ֆիզիկական հատկությունները և մեծությունները բացատրվում են ոչ դիտարկելի այնպիսի օբյեկտների միջոցով, ինչպիսիք են ատոմները և մոլեկուլները:

Այսպիսով, ֆենոմենոլոգիական, նկարագրական, սիստեմավորող տեսությունների և ոչ ֆենոմենոլոգիական տեսությունների միջև, որոնք բացահայտում են հետազոտվող գործընթացների ներքին մեխանիզմները, կապերն օրինաչափ են: Նոր երևույթների ուսումնասիրությունը միշտ սկսվում է փաստերի վերլուծությունից, երևույթների միջև կապերի բացահայտումից, դրանց նկարագրումից և սիստեմավորումից: Իհարկե, ֆենոմենոլոգիական տեսություններում օգտագործվում են աբստրակցիաներ և ներմոծվում են իդեալիզացիաներ: Նույնիսկ լուսային ճառագայթը կամ իդեալական գազն ըստ էության իդեալիզացիա են, թեև դրանց կապն էմպիրիկ նյութի հետ բավականին ակնհայտ է:

Եթե գիտության մեջ ներմոծել են ատոմ, մոլեկուլ, ֆոտոն և նման կարգի այլ հասկացություններ, ապա դրանք ծառայում են ֆենոմենոլոգիական տեսություններում նկարագրվող երևույթները բացատրելու համար: Հենց այսպիսի ըմբռնման դեմ հանդես են եկել ֆենոմենոլոգիզմի և պոզիտիվիզմի այնպիսի կողմնա-

կիցներ, ինչպիսիք են Վ. Օսովալդը, Պ. Դյուհենը, Է. Մախը և ուրիշներ: Նրանք մերժեցին ատոմների և մոլեկուլների օբյեկտիվ գոյությունը: Գիտության, տեսության խնդիրը էմպիրիստները հանգեցնում են անմիջական դիտարկմանը, զգայական արդյունքների ամրագրմանը և սիստեմավորմանը:

Գ. Ի. Ռուզավինը տեսությունների դասակարգման հաջորդ տեսակը կապում է դրանց կանխատեսման առանձնահատկությունների հետ: Հայտնի է, որ որոշ տեսություններ տալիս են հավաստի, մյուսները՝ հավանական կանխատեսումներ: Ըստ այդմ՝ բոլոր տեսությունները բաժանում են ունիվերսալ բնույթի դինամիկական և հավանական, վիճակագրական տեսությունների: Հավանական-վիճակագրական տեսությունները երբեմն անվանում են ստոխաստիկական, դինամիկական տեսությունները՝ դետերմինիստական, հավանական տեսությունները՝ ինդետերմինիստական: Անշուշտ, հավանական բնույթի տեսությունները չեն բացառում դետերմինացիան:

Դինամիկական տեսություններում կանխատեսումների բնույթը ճշգրիտ է, միանշանակ, հավաստի: Դրանց թվին դասվում են երկրային և երկնային մեխանիկայի, աստղագիտության, դասական ֆիզիկայի, քիմիայի շատ տեսություններ: Ի տարբերություն այդ տեսությունների՝ կենսաբանության, հոգեբանության, հումանիտար գիտությունների, ինչպես նաև քվանտայի ֆիզիկայի, քիմիայի այլ տեսությունների կանխատեսումների բնույթը ստոխաստիկական է, տալիս են միայն հավանական կանխատեսումներ:

Դինամիկական և ստոխաստիկական տեսությունների միջև հիմնական տարբերությունը նրանց հիմքում ընկած օրենքների և սկզբունքների մեջ է: Դրանք տեսությունների հիմնական նախադրյալներն են: Դինամիկական տեսություններում այդ նախադրյալների համակարգին բնորոշ է ճշգրիտ որոշակի եղանակը: Այսպես, մեխանիկայում եթե հայտնի է մարմնի շարժման օրենքը և տրված է նրա շարժման դրությունը (վիճակը) և արա-

գությունը ժամանակի որոշակի պահի, ապա կարելի է ճշգրտորեն որոշել նրա վիճակը և արագութիւնն ապագայի ցանկացած այլ պահի: Իհարկե, այդ դեպքում մենք վերացարկվում ենք շարժման վրա ազդող մի շարք կարևոր գործոններից: Ուստի նման օրենքները և դրանց վրա հիմնված տեսությունները ունեն համեմատաբար սահմանափակ կիրառություն: Այլ խոսքերով, խիստ դետերմինացիան միանշանակ կապված է հետազոտվող իրական գործընթացների սխտեմատիզացման և իդեալիզացման հետ:

Ստոխաստիկական տեսություններում հիմնական օրենքները վիճակագրական օրենքներ են կամ դրանց որոշ մասը վիճակագրական է: Այդպիսի օրենքները բնութագրում են հետազոտվող երևույթների դասի ոչ թե յուրաքանչյուր օբյեկտի վարքը, այլ օբյեկտների դասին բնորոշ որոշ հատկանիշներ: Քանի որ վիճակագրական օրենքներն ունիվերսալ չեն, իսկ դրանց վրա հիմնված կանխատեսումներն ունեն հավանական բնույթ, ուստի այդ օրենքները դասվում են ոչ խիստ պատճառականության տիպի օրենքների շարքը: Այդ տեսակի օրենքներ պարունակող տեսությունները անվանում են հավանական-վիճակագրական կամ ստոխաստիկական: «Ստոխաստիկա» տերմինը լատիներենից բառացի թարգմանությամբ նշանակում է «նպատակին ընկնել, հասնել», ընդգծում է կանխատեսման անորոշ, հավանական բնույթը:

Ստոխաստիկական տեսությունների կանխատեսման հավանական բնույթը պայմանավորված է մեծ թվով դեպքերի, պատահական գործոնների համախմբված գործունեությամբ: Դրանք ընդունված է անվանել վիճակագրական կոլեկտիվներ կամ անսամբլներ: Թեև այստեղ յուրաքանչյուր օբյեկտի վարքը անորոշ է և պատահական, սակայն այդպիսի կոլեկտիվների պատահական տարբեր գործոնների հավասարակշռման և փոխադարձ մարման հաշվին առաջանում են առանձնահատուկ վիճակագրական օրենքներ:

Ի տարբերություն դինամիկական տիպի օրենքների՝ վիճակագրական օրենքները որոշակի, ընդգծված սխեմայով չեն պայմանավորում գործընթացի ուղղությունն ու միտվածությունը: Շատ դեպքերում, հատկապես կենսաբանական և սոցիալական գիտություններում, այդ միտումների բնույթն առաջնային է: Քանի որ ստոխաստիկական տեսությունները չեն տալիս հավաստի կանխատեսումներ, ուստի դրանք երկար ժամանակ չեն գնահատվել գիտությունում, համարվել են հետազոտության օգնական միջոցներ: Բանն այն է, որ երբ գործ ունենք մեծ թվով գործոնների հետ, ապա դրանք հնարավոր չէ նկարագրել և բացատրել խիստ դինամիկական տեսությունների միջոցով: Դրանք չափից ավելի պարզեցնում, սխեմատիզացնում են իրականությունը³⁴:

Գիտական տեսության կառուցվածքային առանձնահատկությունները

Մաթեմատիկական տեսություններում առավել ակնհայտ դրսևորվում է տեսության տրամաբանական կառուցվածքը: Դրանք դեդուկտիվ տեսություններն են (կառուցված են դեդուկտիվ մեթոդով) և ներկայացվում են հետևյալ կերպ. նախ առանձնացվում են նախնական (չսահմանվող) տերմինները (հասկացությունները), որոնք օգտագործվում են առանց իրենց իմաստը բացատրելու: Համակարգի մեջ մյուս բոլոր տերմինները ներմուծվում են սահմանումների միջոցով՝ չօգտագործելով այլ տերմիններ, բացի նախնականներից կամ այնպիսիներից, որոնց իմաստը նախկինում արդեն պարզաբանված է: Տվյալ բնագավառի բոլոր պնդումները նույնպես բաժանվում են երկու մեծ խմբի: Նախ և առաջ առանձնացվում են այն ասույթները, որոնք ընդունվում են առանց ապացուցման: Դրանց անվանում են առաջնային

³⁴ Տե՛ս Рузавин Г. И., Научная теория, М., 1978, էջ 29-38:

ասույթներ կամ աքսիոմներ (պոստուլատ): Որպես կանոն՝ դրանք ձևակերպվում են առաջնային տերմինների օգնությամբ, սակայն դրանց մեջ կարող են ներառվել նաև ածանցյալ տերմինները: Աքսիոմները կարող են դիտարկվել որպես առաջնային տերմինների միջոցով ձևակերպված թաքնված սահմանումներ: Մնացած բոլոր ասույթները պետք է ստացվեն առաջնայիններից՝ որոշ տրամաբանական կանոնների համաձայն (ակնհայտորեն ամբողջված կամ ենթադրվող): Ասույթների այդ համախումբը ստեղծում է բխեցված (ապացուցված) նախադասությունների կամ թեորեմների դասը: Նման ձևով կառուցված դեդուկտիվ տեսության համար չափազանց կարևոր է անհակասականության, լրիվության, անկախության տեսակետից դրա հետազոտությունը: Այդպիսի հետազոտությունը մաթեմատիկայի, այսինքն՝ մաթեմատիկական տեսության կառուցվածքի և հիմնական հատկությունների մասին գիտության կարևոր խնդիրներից է:

Պատմականորեն դեդուկտիվ տեսության հաջորդ փուլը ելակետային տերմինների ցանկացած իմաստից վերացարկելն է (դրանք փոփոխականներով փոխարինելը) և դեդուկտիվ տեսության ձևական մոդել ստեղծելը: Այդ եղանակով կառուցված տեսությունը ձևայնացված բնույթի է, և դրա հիմքում ընկած աքսիոմների համակարգի համար խնդիր է դառնում դրանց բովանդակային մոդելի կառուցումը և մեկնաբանությունը: Միևնույն աքսիոմների համակարգը և դրանից բխող թեորեմների համախումբը (սինտակտիկական կառուցվածքը) կարող են ունենալ (և որպես կանոն ունեն) տարբեր մեկնաբանություններ (իմաստաբանական մեկնաբանություններ):

Աքսիոմատիկական տեսություններում աքսիոմները չեն ապացուցվում, քանի որ դրանք համարվում են ակնհայտ ճշմարտություններ: Օրինակ, երբ այս կամ այն դրույթը կասկած չի հարուցում, անվանում են աքսիոմ: Սակայն այն, ինչը թվում է ակնհայտ, պարզ, կասկած չհարուցող մեկի դեպքում, կարող է ակնհայտ չլինել մյուսի դեպքում: Ժամանակակից տեսություններում

աքսիոմները չեն ապացուցվում ոչ թե այն պատճառով, որ համարվում են ակնհայտ, այլ այն պատճառով, որ դրանց ապացույցը կպահանջեր դիմել այլ պնդումների և, վերջ ի վերջո, կհանգեցներ անսահմանության ռեգրեսի: Այն, թե տեսության որ պնդումներն են ընտրվում որպես աքսիոմներ, հաճախ կախված է հետազոտության խնդրից և պրոբլեմի դրվածքից: Որպեսզի աքսիոմը բխեցման համար նախադրյալ ծառայի, այն պետք է տրամաբանորեն ուժեղ լինի բոլոր այն հետևանքներից, որոնք կարելի է դրանից բխեցնել: Այսինքն՝ տեսության աքսիոմների համախումբը պետք է ամբողջապես պարունակի հնարավոր բոլոր այն թեորեմները, որոնք աքսիոմների միջոցով կարելի է ապացուցել: Այլ խոսքերով, աքսիոմներում պետք է կենտրոնացված լինի տեսության ողջ բովանդակությունը:

Սովորաբար բնագիտական տեսություններում աքսիոմների դերում հանդես են գալիս հիմնական օրենքները կամ սկզբունքները: Շատ հաճախ այդ օրենքներն անվանում են տեսական՝ դրանք տարբերելով էմպիրիկներից: Տեսական օրենքների մեջ էական դեր են խաղում հիմնարար օրենքները, որոնք երբեմն անվանում են գիտության համապատասխան բնագավառի սկզբունքներ: Օրինակ՝ ողջ դասական մեխանիկան հիմնվում է չարժման երեք սկզբունքների կամ աքսիոմների վրա, որոնք են՝ 1. իներցիան, 2. մարմնի արագացման համեմատականությունն ազդող ուժին, 3. ազդեցության հավասարությունը հակազդեցությանը: Հետագայում պարզվեց, որ այդ երեք սկզբունքների փոխարեն կարելի է վերցնել մեխանիկայի վարիացիոն սկզբունքներից մեկը, օրինակ՝ ամենափոքր ազդեցության Համիլտոնի սկզբունքը: Դա նշանակում է, որ ինչպես սկզբունքների, այնպես էլ աքսիոմների բնույթը բացարձակ չէ: Այն, թե ինչպիսի պնդումներն ընդունել որպես աքսիոմներ, կախված է հետազոտության համատեքստից:

Եվ այսպես, աքսիոմատիկ տեսության կառուցվածքում առանձնացնում են հետևյալ բաղադրամասերը.

1) նախնական կամ չսահմանվող հասկացությունները, 2) աքսիոմները կամ պոստուլատները, 3) սահմանումները, որոնց օգնությամբ ներմուծվում են ածանցյալ հասկացությունները, 4) տրամաբանական աքսիոմները և բխեցման կանոնները, որոնց օգնությամբ թեորեմները բխեցվում են աքսիոմներից (սովորաբար վերջիններս ակնհայտ չեն նշվում, թեև ենթադրվում են):

Մաթեմատիկայի բնույթի մասին այդ տեսակետն իր ամբողջությամբ և մասնավորապես դրա աքսիոմացումը միանգամից չեն առաջացել: Բավական է նշել, որ երկրաչափությունից հայտնի էվկլիդեսի աքսիոմատիկական համակարգը հետազոտողները դիտարկել են որպես գոյություն ունեցող ֆիզիկական տարածության հատկությունների և հարաբերությունների իդեալիզացված արտացոլում: XX-րդ դարի սկզբում մաթեմատիկայի աքսիոմների նկատմամբ վերաբերմունքն էապես փոփոխվեց. դրանք սկսեցին դիտարկվել որպես վերացական այնպիսի սխեմաներ, որոնք կարող են ամենատարբեր մեկնաբանություններ ունենալ: Ի տարբերություն մաթեմատիկայի՝ էմպիրիկ գիտությունների զարգացումը անմիջականորեն կապված է դիտարկումների և գիտափորձերի հետ: Ուստի հետազոտողները ստիպված են պարբերաբար վերանայել հին հասկացություններն ու սկզբունքները՝ փոփոխություններ մտցնելով տեսության կառուցվածքի և բովանդակության մեջ: Ահա թե ինչու էմպիրիկ գիտություններում աքսիոմատիկական համակարգերը երբեք չեն կարող փակ լինել բխեցման համար: Նույնիսկ մաթեմատիկայում օգտագործվում են ոչ լրիվ աքսիոմատիկ համակարգեր, օրինակ՝ խմբերի տեսությունում: Դրա շնորհիվ լայն հնարավորություններ են բացվում նոր կիրառումների համար: Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ոչ մի աքսիոմացում և ձևայնացում չեն կարող ամբողջությամբ սպառել բովանդակային տեսության ողջ հարստությունը:

Այդ թեզն իր հաստատումը գտավ Կ. Գյոդելի ոչ լրիվության մասին հայտնի թեորեմներում: 1930-ական թվականներին նա իր

ապացուցած թեորենում պնդում է, որ ցանկացած բավականին հարուստ աքսիոմատիկ համակարգ եթե անհակասական է, ապա ոչ լրիվ է: Դա նշանակում է, որ այդպիսի համակարգում միշտ կարելի է գտնել այնպիսի պնդում, որը տրամաբանորեն չի բխում աքսիոմներից: Իհարկե, աքսիոմների նախնական համակարգը կարելի է ուժեղացնել՝ ավելացնելով նոր աքսիոմներ կամ դրանցից որևէ մեկը փոխարինելով ավելի ուժեղ աքսիոմով: Այդ դեպքում ստացված համակարգում կարելի է ապացուցել նախկինում չապացուցված պնդումը, սակայն այդ համակարգում ևս, եթե այն անհակասական է, կարելի է գտնել նոր պնդում, որը չի բխում աքսիոմներից և այլն: Դա նշանակում է, որ գիտության զարգացման յուրաքանչյուր շրջանում աքսիոմացումը չի կարող լրիվ սպառել աքսիոմատիկ համակարգի ողջ բովանդակությունը:

Էմպիրիկ գիտություններում լրիվ աքսիոմատիկ համակարգերը միանգամայն անօգուտ են, քանի որ դրանց չի կարելի ավելացնել և ոչ մի օգնական վարկած կամ պնդում: Իսկ դա նշանակում է, որ այդպիսի համակարգերը չի կարելի ո՛չ ստուգել և ո՛չ էլ կիրառել: Աքսիոմատիկ մեթոդն առանձնապես արդյունավետ է այնտեղ, որտեղ հասկացությունները հարաբերականորեն կայուն են, իսկ ելակետային հասկացությունների և պնդումների (օրենքների) թիվը համեմատաբար մեծ չէ: Դրանք ենթարկվում են հետազոտողի հսկողությանը:

Խիստ աքսիոմատիկ համակարգերում աքսիոմներն ընտրվում են այնպես, որ դրանք տրամաբանորեն անկախ լինեն միմյանցից:

Սակայն այդ պահանջը չի կարող այնքան պարտադիր լինել, ինչքան անհակասականության չափանիշն է: Իրոք, եթե տեսության ելակետային նախադրյալներում հայտնաբերվի ձևական հակասություն, ապա ողջ համակարգը կլինի ոչ պիտանի, քանի որ դրանից կարելի է բխեցնել ամեն ինչ: Այդ դեպքում A պնդման և նրա ժխտման $\bar{A}$ (ոչ A -ի) կոնյուկցիան կլինի տրամաբանորեն կեղծ ասույթ ($A \& \bar{A}$):

Ձևական տրամաբանությունում, ըստ իմպլիկացիայի կանոնի, կեղծ նախադրյալից հետևում է ինչպես ճշմարիտ, այդպես էլ կեղծ եզրակացություն: Ահա թե ինչու տրամաբանությունը պահանջում է պահպանել անհակասականության օրենքը, այսինքն՝ միմյանց հակասող երկու պնդումները չեն կարող միաժամանակ ճշմարիտ համարվել (A&A): Աքսիոմների անկախության պահանջի պահպանումը ցանկալի է այն պատճառով, որ այն նվազագույնի է հասցնում աքսիոմների թիվը և հնարավորություն է տալիս վերահսկելու դրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած: Օրինակ, եթե աքսիոմներից թեորեմների բխեցման գործընթացում հայտնաբերվում է հակասություն, ապա դիտարկվող համակարգը ամբողջությամբ դուրս չի գցվում, այլ մոդիֆիկացվում է համապատասխան աքսիոմի ձևափոխման, փոխարինման միջոցով և վերացվում է այդ հակասությունը: Բացի այդ, տեսության հիմնական տարրերի կամ նախադրյալների թիվը նվազագույնի հասցնելու միջոցով կարելի է տրամաբանական ճանապարհով ստանալ հնարավորին չափ մեծ արդյունքներ: Դա գիտական հետազոտության կարևորագույն պահանջներից մեկն է:

Գիտական գիտելիքի այդպիսի կարգավորումը և աքսիոմացումը կարևոր էվրիստիկական եղանակ է հետազոտության համար: Մի աքսիոմը փոխարինելով մյուսով կամ բացառելով որոշ աքսիոմներ՝ կարելի է հանգել չափազանց կարևոր տեսական հետևությունների կամ նոր տեսության կառուցմանը: Ինչպես հայտնի է Լոբաչևսկու և Բոյայի նոր երկրաչափության ստեղծումը իրականացվել է Էվկլիդեսի ուղիղների զուգահեռության աքսիոմը փոխարինելով նրա հակառակ հարթության պոստուլատով: Դրա համաձայն՝ հարթության վրա գտնվող ուղիղին տրված կետից կարելի է տանել անթիվ բազմությամբ զուգահեռներ:

Դժվար չէ տեսնել, որ ցանկացած գիտական տեսության աքսիոմատիկ տեսքով ներկայացում պահանջում է հասկացությունների ու պնդումների ճշգրտում, դրանց միջև առկա փոխազդեցությունների նախնական վերլուծություն: Սովորաբար դա ավելի

հեշտ է իրականացնել ճշգրիտ բնագիտական տեսություններում, որոնք արտահայտված են մաթեմատիկայի լեզվով: Այնտեղ, որտեղ այդ կապերն անբավարար են բացահայտված և գիտակցված, իսկ տեսության ընդհանրացումներն ու պնդումները բավարար չափով կարգավորված չեն, աքսիոմացումը ժամանակավրեպ է և անօգուտ³⁵: Էմպիրիկ տեսությունները տարբերվում են մաթեմատիկականներից:

Էմպիրիկ տեսությունները կապված են դիտարկման, փորձնական տվյալների հետ: Դրանք պետք է գնահատվեն այդ տվյալներին համապատասխան: Էմպիրիկ տեսություններում առկա տերմինների հիմնական մասն ունի առանձնահատուկ մեկնաբանություն՝ էմպիրիկ մեկնաբանություն: Դրանք անվանում են հիպոթետիկ-դեդուկտիվ տեսություններ, որոնք աքսիոմատիկորեն կառուցված տեսություններից տարբերվում են այն բանով, որ որպես ելակետային դրույթներ են դիտարկվում ոչ թե աքսիոմները, այլ վարկածները: Սակայն, ինչպես նկատել է Լ. Բաժենովը, հիպոթետիկ-դեդուկտիվ տեսությունները հիմնականում տարբերվում են աքսիոմատիկական (մաթեմատիկական) տեսություններից ոչ թե այն բանով, որ ելակետային դրույթները վարկածներ են, այլ որ պետք է ունենան համապատասխանության կանոններ (էմպիրիկ մեկնաբանություն), որոնց բազիսային մասը չափողական գործառույթներ են³⁶:

Նկատենք, որ հիպոթետիկ-դեդուկտիվ տեսությունը մաքուր ձևով ավելի շուտ ժամանակակից գիտության իդեալ է, քան նրա փաստական վիճակը, սակայն այն չափազանց կարևոր է գիտական գիտելիքի տրամաբանության համար:

Որպեսզի տեսության պոստուլատներից (նախադրյալներից, հիմնական, հիմնարար սկզբունքներից) կարելի լինի բխեցնել ասանցյալ օրենքներ, հիպոթետիկ-դեդուկտիվ տեսությունը պետք է ունենա բխեցման ապարատ: Այդպիսի ապարատի դեր կատա-

³⁵ Տե՛ս **Рузавин Г. И.**, Научная теория, М., 1978, էջ 40-61:

³⁶ Տե՛ս **Баженев Л. Б.**, նշվ. աշխ., էջ 14:

րում են տարաբնույթ խիստ դեդուկտիվ տեսությունները, մաթեմատիկան: Ընդ որում՝ մաթեմատիկայի դերը չի հանգում միայն բխեցման ապարատի գործառույթին: Ֆիզիկայում առանձնապես մեծ է մաթեմատիկայի՝ որպես ելակետային հասկացությունների և ելակետային պոստուլատների ձևակերպման միջոցի դերը:

Ժամանակակից մեթոդաբանական գրականության մեջ առկա է այն տեսակետը, որ տեսության կառուցման համար անհրաժեշտ է անցում կատարել «դիտարկման լեզվից» տեսական կոնստրուկտներին: Առանց դրանց չի կարող լինել ոչ մի տեսություն: Սակայն, որպեսզի տեսական կոնստրուկտների ստեղծումը չհանգեցնի սպեկուլյացիայի, պետք է լինի այն սահմանափակելու, մերժելու հնարավորություն³⁷:

Այսպիսով, թեև փորձարարական բնագիտության տեսությունները խիստ բաձազան են, այդուամենայնիվ դրանց կառուցվածքներն էլ ընդգծված չեն գրականության մեջ, և առանձնացվում են բոլորի համար տիպական հետևյալ բաղադրամասերը.

1) *տեսության էմփիրիկ հիմքը*. Որա հիմնական տվյալները, փաստերը, դրանց պարզագույն տրամաբանական-մաթեմատիկական մշակումները,

2) *ելակետային տեսական բազիսը*. հիմնական ենթադրությունները, իդեալիզացիաները, հիմնարար օրենքները կամ սկզբունքները,

3) տեսության տրամաբանական ապարատը, հիմնական հասկացությունների սահմանման, բխեցման կամ ապացուցման տրամաբանական կանոնները,

4) տեսության հնարավոր բոլոր հետևությունները:

Պետք է նկատել, որ գիտական տեսությունների բազիսը կամ, ինչպես անվանում են կոնցեպտուալ միջուկը, ակնհայտ դրսևորվում է հասուն բնագիտական տեսություններում: Այսպես,

³⁷ Տե՛ս **Карнап Р.**, *Философские основания физики*, М., 1971, -Й. 10, 23, 24, **Попович М. В.**, *О философском анализе языка науки*, Киев, գլ. IV, 1966, **Ракитов А. И.**, *Лекции по логике науки*, М., 1971, **Баженов Л. Б.**, նշվ. աշխ., էջ 24:

դասական մեխանիկան հիմնվում է շարժման երեք հիմնական օրենքների, Ա. Էյնշտեյնի հարաբերականության հատուկ տեսության՝ երկու սկզբունքների, դասական թերմոդինամիկան՝ երեք սկզբունքների վրա: Սովորաբար կենսաբանական, հոգեբանական, աշխարհագրական, սոցիալական, հումանիտար տեսություններում հիմնական սկզբունքներն ու վարկածներն ակնհայտորեն առանձնացված չեն: Գիտական տեսության հիմնական նպատակն է որոշակի բնագավառում կուտակված գիտելիքների՝ առանձին ընդհանրացումների, էմպիրիկ օրենքների միավորումը, կարգավորումը, դասակարգումը, համադրումը, լրացումը, ճշգրտումը, համակարգումը: Ինչպես նկատել է Ա. Էյնշտեյնը. «Ցանկացած տեսության կարևորագույն նպատակը այն է, որ այդ միմյանց չհանգող հիմնական տարրերը լինեն որքան հնարավոր է ավելի քիչ ու պարզ այնպես, որ դրանք չբացառեն այն բանի ճշգրիտ արտապատկերումը, ինչը պարունակում է փորձում»³⁸:

Գիտական տեսության հիմնական գործառույթները

Գիտական տեսության բնույթի բացահայտումը սերտորեն կապված է գիտության մեջ դրա կատարած գործառույթների հետ: Մեթոդաբանական գրականության մեջ հիմնականում նշվում են ինֆորմատիվության, համակարգայնացման, բացատրության, կանխատեսման գործառույթները³⁹:

Հայտնի է, որ գիտական հետազոտության հիմնական խնդիրներից մեկն իրականությունից անհրաժեշտ ինֆորմացիայի ստացումն է: Ե՛վ դիտարկումների, և՛ գիտափորձերի, և՛ չա-

³⁸ **Эйнштейн А.**, Собрание научных трудов, Т. IV, с. 183.

³⁹ **Стів Никитин Е. И.**, Объяснение — функция науки, М., 1970. **Печенкин А. А.**, Функции научной теории.- В кн.: Философия. Методология, М., 1972, с. 202-218. **Баженов Л. Б.**, Строение и функции естественнонаучной теории, М., 1978, с. 155-180, **Рузавин Г. И.**, Научная теория, М., 1978, с. 20-27.

փումների, և՛ դրանց ընդհանրացումների, էմպիրիկ փաստերի, օրենքների ձևակերպման նպատակն աշխարհից ինֆորմացիայի կորզումն է: Սակայն գիտական տեսությունը տարբերվում է գիտելիքի այլ ձևերից այն բանով, որ այն ունի ավելի մեծ ինֆորմատիվ բովանդակություն ու ավելի խորքային է: Այն հիմնվում է ոչ միայն դիտարկումների և գիտափորձերում առկա ինֆորմացիայի վրա, այլև ունի լրացուցիչ ինֆորմացիա, որը թույլ է տալիս ավելի խորագնին բացատրություններ տալ արդեն հայտնի փաստերին և կանխատեսել նորերը:

Գիտական տեսության հաջորդ գործառույթը նրա համակարգող հատկությունն է: Տեսությունները չեն սահմանափակվում էմպիրիկ նյութի նկարագրմամբ, այլ ձգտում են այդ բովանդակության մեծ մասը բխեցնել փոքր թվով, հիերարխիկորեն դասավորված, հիմնարար օրենքներից և սկզբունքներից՝ հնարավորինս քիչ «ad hoc» վարկածներ օգտագործելով: Գիտական գիտելիքի այդպիսի միասնականության ձգտումը գիտական ճանաչողության սիստեմավորման կարևորագույն արդյունքներից մեկն է: Գիտական գիտելիքի պրակտիկայում երբեմն էմպիրիկ գիտելիքի ողջ բովանդակությունը բխեցվում է որևէ ընդհանուր սկզբունքից: Դասական մեխանիկայում այդպիսի սկզբունք է օրինակ՝ ամենափոքր գործողության սկզբունքը, երկրաչափական օպտիկայում՝ Ֆերմի սկզբունքը: Ընդ որում, որքան ավելի բարդ է հետազոտվող երևույթների բնագավառը, այնքան այն ավելի մեծ դժվարությամբ է ենթարկվում այդպիսի բացատրության: Գիտելիքի համակարգման հնարավորությունները կախված են գիտության համապատասխան բնագավառի տեսական հասունության աստիճանից:

Հայտնի է, որ էմպիրիկ օրենքները կարգավորում են մեծ թվով դիտարկման և գիտափորձնական ճանապարհով հաստատված փաստեր: Տեսությունը, սիստեմավորելով, միավորելով, ամբողջացնելով, ընդհանրացնելով այդ բնագավառի էմպիրիկ օրենքներն ու վարկածները, դրանք բխեցնում են ավելի ընդ-

հանրական տեսական օրենքներից, սկզբունքներից, ենթադրություններից: Ինչպես նշվում է մեթոդաբանական գրականության մեջ, տեսական-սիստեմավորումը հնարավորություն է ընձեռում ցույց տալու ավելի թույլ ընդհանրացումների, վարկածների, էմպիրիկ օրենքների կիրառման սահմանները:

Երկրորդ՝ այդ գործընթացի շնորհիվ ճշգրտվում են նախկինում գտնված ընդհանրացումներն ու օրենքները: Օրինակ, երբ առաջադրվեց գազերի մոլեկուլար-կինետիկական տեսությունը, ապա ոչ միայն նշվեցին էմպիրիկորեն գտնված Բոյլ-Մարիոտի, Գեյ-Լյուսակի և Շարլի օրենքների կիրառման սահմանները, այլև ցույց տրվեց, թե ինչպիսի ճշգրտումներ է անհրաժեշտ կատարել, որպեսզի նկարագրեն ռեալ գազերի վարքը:

Երրորդ՝ տեսությունների համակարգի մեջ այս կամ այն էմպիրիկ ընդհանրացման կամ օրենքի ներառումը հաճախ կապված է դրանց ձևափոխման հետ, քանի որ դրանք պետք է համաձայնվեն տեսության այլ պնդումներին: Ուստի բնական է, որ, դառնալով տեսական համակարգի տարր, այդպիսի ընդհանրացումներն ու օրենքները կհաստատվեն անմիջականորեն դրանց վերաբերող էմպիրիկ տվյալների միջոցով, նաև միջնորդավորված ձևով՝ դրանց հետ տրամաբանորեն կապված հաստատող ասույթներով:

Չորրորդ՝ սիստեմավորումը նպաստում է ոչ միայն գոյություն ունեցող գիտելիքների կարգավորմանն ու կազմավորմանը, այլև նոր գիտելիքների ստացմանը, դրանով իսկ ընդլայնմանն ու զարգացմանը: Տեսությունը կառուցվում է ոչ միայն այն բանի համար, որ կարգավորի ու խտացնի գոյություն ունեցող գիտելիքը, այլև դրանից բխեցնի բազմաթիվ հետևություններ, այդ թվում ինչպես նախկինում հայտնի էմպիրիկ օրենքներ, այդպես էլ նորերը:

Հինգերորդ՝ տեսությունն օգնում է ուղղորդելու և վերահսկելու գիտական հետազոտության գործընթացը: Նախքան որևէ գիտափորձ ձեռնարկելը կամ փաստ բացահայտելն անհրաժեշտ է ունենալ որևէ տեսություն կամ վարկած: Այսպես, եթե պարզա-

գույն փաստերն ու անմիջականորեն դիտարկելի երևույթները կարելի է բացահայտել նաև պատահականորեն, ապա բոլորովին այլ են անմիջականորեն մարդու կողմից չընկալվող երևույթները: Ո՛չ ռադիոալիքները, ո՛չ գենետիկական կոդը չեն կարող բացահայտվել առանց նախնական գաղափար, վարկած, տեսություն ունենալու: Այն դեպքում, երբ հետազոտության գործընթացում բացահայտվում են այնպիսի փաստեր, որոնք չեն բացատրվում նախկին տեսությամբ, պահանջվում է առաջադրել նոր պրոբլեմներ և ստեղծել միանգամայն նոր տեսություն⁴⁰:

Տեսության խնդիրը չի սահմանափակվում փաստերի և տեսական դրույթների պարզ նկարագրմամբ, այլ նպատակաուղղված է ապագա դեպքերի ընթացքի, դրանց միտումների և օրինաչափությունների կանխատեսմանը: Այդ միտքը Օ. Կոնտն արտահայտել է այսպես. «Գիտենալ՝ կանխատեսելու համար»: Անշուշտ, կանխատեսումներ կարելի է անել և՛ էմպիրիկ ընդհանրացման, և՛ վարկածի, և՛ օրենքի միջոցով: Սակայն իրենց ընդգրկմամբ, ապագա դեպքերի բնութագրման ճշգրտության աստիճանով նման կանխատեսումները էապես տարբերվում են տեսականներից: Դրանց օգնությամբ հաջողվում է կանխատեսել ոչ միայն նոր անհայտ փաստեր, այլև էմպիրիկ օրենքներ: Որոշ դեպքերում տեսություններից կարելի է բխեցնել նաև կարևոր տեսական օրինաչափություններ: Այսպես, զանգվածի և էներգիայի փոխազդեցության բանաձևը ($E=mc^2$) ստացվել է տրամաբանական-մաթեմատիկական մեթոդներով՝ Ա. Էյնշտեյնի հարաբերականության տեսության ընդհանուր սկզբունքների հիման վրա:

Ի տարբերություն բացատրության, որը հետազոտում է արդեն հայտնի երևույթները, դեպքերը և փաստերը, կանխատեսումն ուղղված է այն երևույթների ճանաչմանը և գնահատմանը, որոնք տվյալ պահին հայտնի չեն, գոյություն չունեն: Թեև բացատրությունը և կանխատեսումը ունեն այդպիսի տարբերություն, այդուամենայնիվ դրանք ներքնապես կապված են: Կանխատես-

⁴⁰ Տե՛ս **Рузавин Г. И.**, Научная теория, էջ 23-24:

ունը և բացատրությունը նույնաման, կարելի է ասել՝ իդենտիկ ձևեր են: Դրանք դեդուկտիվ կշռադատություններ են, որոնց նախադրյալներն ունիվերսալ օրենքներ են, իսկ հետևությունները՝ կոնկրետ երևույթներ, դեպքեր կամ փաստեր: Եթե կանխատեսման օրենքները, որոնք նախադրյալներ են ծառայում, նշանակենք $L_1, L_2, \dots, L_k$ -ով, պայմանները՝ $C_1, C_2, \dots, C_k$ -ով, եզրակացությունը՝ E -ով, այդ դեպքում մոմոլոգիական կանխատեսումը կներկայանա հետևյալ տեսքով.

$$\frac{L_1, L_2, \dots, L_k \\ C_1, C_2, \dots, C_k}{E}$$

Նկատենք, որ այս բանաձևն իդենտիկ է դեդուկտիվ-մոմոլոգիական բացատրությանը: Տարբերությունն այն է, որ բատրության եզրակացությունը վերաբերում է գոյություն ունեցող, հայտնի երևույթներին, իսկ կանխատեսման եզրակացությունը՝ անհայտ, գոյություն չունեցող երևույթներին: Սակայն իր բնույթի և մեթոդաբանական գործառնությունների տեսանկյունից կանխատեսումն էականորեն տարբերվում է «բացատրությունից». առաջին ժամանակի մեջ ունեցած ուղղվածությամբ, քանի որ վերաբերում է կամ ապագայի, կամ անցյալի դեպքերին և երևույթներին: Այստեղից բխում է երկրորդ հատկանիշը, ըստ որի՝ դրանց նկատմամբ օրենքների կիրառման կոնկրետ պայմանները հայտնի լինել չեն կարող նույնքան լրիվ ու ճշգրիտ, որքան առկա դեպքերի բացատրության դեպքում: Երրորդ՝ կանխատեսման եզրակացությունը վերաբերում է առանձին, անհատական դեպքերին, այն դեպքում, երբ բացատրել կարելի է մաև մասնավոր օրենքները, օրինակ՝ էմպիրիկ օրենքները տեսության միջոցով: Չորրորդ՝ հաճախ կանխատեսման նախադրյալներ են դառնում այն վարկածները, որոնք հիմնված են ճշմարտանման կշռադատությունների (ինդուկցիայի, անալոգիայի, վիճակագրական եզրակացությունների) վրա: Հիմնգերոդ՝ կանխատեսումների մեծ մասի բնորոշ գիծը դրանց ճշմարտանման կամ հավանական բնույթն է: Իրոք,

շատ կանխատեսումներ հիմնվում են վիճակագրական օրենքների վրա, որոնց եզրակացությունը միայն հավանական բնույթի է: Օգտագործելով դեդուկտիվ եզրակացությունները՝ մենք միայն դրանց հավանականությունը տեղափոխում ենք եզրակացության վրա:

Ըստ կանխատեսումների համար հիմք ծառայող ինֆորմացիայի բնույթի գրականության մեջ առանձնացնում են կանխատեսման երեք տեսակներ:

Առաջին տեսակին պատկանում են այն կանխատեսումները, որոնք հենվում են ինդուկցիայի, անալոգիայի, վիճակագրության եզրակացությունների վրա: Դրանք իրականացվում են դիտարկումների և գիտափորձերի վրա հիմնված վարկածների միջոցով:

Երկրորդ տեսակին պատկանում են մոմլոգիական կանխատեսումները: Դրանք այն կանխատեսումներն են, որոնց նախադրյալներում գոյություն ունի գոնե մեկ ունիվերսալ օրենք: Այդ կանխատեսումները եզրակացության տեսանկյունից ամենահուսալին ու ճշգրիտն են, քանի որ բխում են այնպիսի օրենքներից, որոնք ընդգրկում են տվյալ երևույթների ողջ ոլորտը:

Երրորդը՝ կանխատեսումների այն տեսակն է, որոնց նախադրյալների մեջ առկա են ոչ միայն ունիվերսալ, այլև վիճակագրական օրենքներ:

Մեթոդաբանական գրականության մեջ ավելի հաճախ գիտության պատմությունից բերվում են կանխատեսման հետևյալ օրինակները: Հայտնի է, որ Արեգակնային համակարգի առաջին անհայտ մոլորակը՝ Նեպտունը, հայտնագործվեց Ուրան մոլորակի ոչ կայուն շարժման վերլուծության միջոցով: Սովորաբար մոլորակների շարժումը մեծ ճշգրտությամբ նկարագրվում է ձգողականության նյուտոնյան տեսության միջոցով: Ուրան մոլորակի ոչ կայուն շարժումը ֆրանսիացի գիտնական Լևերյեն բացատրեց մինչև այդ անհայտ մեկ այլ մոլորակի գոյության փաստով և տեսության միջոցով հաշվարկեց դրա տեղը: Եվ իրոք, ավելի ուշ գերմանացի աստղագետ Հալեն Լևերյեի նշած տեղում նկատեց այդ մոլորակը: Հետագայում այն անվանեցին Նեպտուն:

Կանխատեսումների շատ տեսակներ կատարվում են համապատասխան բնագավառի օրենքներն առանձին երևույթների, դեպքերի, օբյեկտների վրա տարածելու միջոցով:

Հայտնի է, որ Դ. Ի. Մենդելեևը նախքան նոր քիմիական տարրերի գոյության կանխատեսումը պետք է բացատրեր, թե ինչով են պայմանավորված դրանց հատկությունները, և ձևակերպեր պարբերականության օրենքը՝ այդ տարրերի կախվածությունը ատոմային զանգվածից (ժամանակակից պատկերացմամբ՝ ատոմի միջուկի լիցքից): Հենվելով պարբերականության օրենքի վրա Մենդելեևը կարողացավ ոչ միայն կանխատեսել պարբերականության աղյուսակում գոյություն ունեցող տարրերը, այլև նկարագրել դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները: Մենդելեևի կանխատեսած վեց տարրերն իրոք հայտնաբերվեցին: Ընդ որում՝ դրանց հատկությունները մոտ էին կանխատեսվածին:

Եթե տեսական կանխատեսումը հենվում է վիճակագրական օրենքների վրա, կամ նախադրյալներում պարունակում է վիճակագրական ինֆորմացիա, ապա այդպիսի կանխատեսումը հավանական բնույթ է: Եթե նույնիսկ վիճակագրական օրենքների հետ օգտագործում են ունիվերսալ օրենքներ, ապա կանխատեսումները ևս հավանական բնույթի են: Որպես օրինակ բերվում է եղանակի կանխատեսումները: Դրանք հենվում են ոչ միայն վիճակագրական ինֆորմացիայի, այլև մթուղորտի և ջրուղորտի ֆիզիկայի ունիվերսալ օրենքների վրա:

Երբ ներկայից եզրակացություն է կատարվում ոչ թե ապագայի, այլ անցյալի վերաբերյալ, ապա այդպիսի կանխատեսումն անվանում են ռետրոկանխատեսում: Օրինակ՝ այդպիսի կանխատեսումներ են արվում պատմական գիտելիքում:

Շզգրիտ գիտություններում, օրինակ՝ մաթեմատիկայում, կանխատեսումն անվանում են էքստրապոլյացիա: Դա մի ոլորտի օրինաչափությունների, քանակական հարաբերությունների տարածումն է մեկ այլ ոլորտի վրա⁴¹:

⁴¹ Տե՛ս **Рузавин Г. И.**, Методология научного исследования, М., 1999, էջ 216-221:

Գիտական գիտելիքը նպատակ ունի ոչ միայն կանխատեսել փաստերը, դեպքերն ու երևույթները, այլև բացատրել, թե դրանք ինչ պատճառներով են առաջացել:

Սովորաբար ընդունված է տեսության ասույթները բաժանել երկու մեծ դասերի՝ ելակետային և ածանցյալ: Բացատրությունը ելակետային ասույթներից՝ ընդհանրացումներից, օրենքներից, ինչպես տրամաբանության մեջ ասում են՝ էքսպլանանսից (լատիներեն՝ *explanans*-բացատրող) ածանցյալ ասույթների՝ էքսպլանանդումի (լատ. բացատրվողի) բխեցումն է: Բացատրության տրամաբանական կառուցվածքը ներկայացվում է հետևյալ տրամաբանական սխեմայի միջոցով.

$$\forall(x) P(x) \rightarrow Q(x) \\ \frac{P(x)}{Q(x)}$$

Գիտության տեսության մեջ ունենք տարբեր աստիճանի, հիերարխիկ դասավորված օրենքներ: Վերևում գտնվում են առավել ընդհանուր, հիմնարար տեսական օրենքներն ու բացատրության առավել հզոր ձևերը, իսկ ներքևում՝ էմպիրիկ օրենքները, ընդհանրացումների և դիտարկումների, փորձնական արդյունքների, երևույթների, դեպքերի, էմպիրիկ փաստերի բացատրությունները: Իհարկե, տարաբնույթ տեսություններում դրանք տարբեր են: Օրինակ՝ նկարագրական, ֆենոմենոլոգիական տեսություններում օրենքների հիերարխիկ կարգն ավելի թույլ է արտահայտված:

Երբ բացատրությունը ճիշտ է, ապա նրա բաղադրամասերը պետք է բավարարեն որոշակի տրամաբանական և էմպիրիկ պայմանների:

Տրամաբանականին դասվում են հետևյալ պայմանները.

Էքսպլանանդումը պետք է էքսպլանանսի տրամաբանական հետևանքը լինի, այսինքն՝ պետք է պարունակի այնպիսի ինֆորմացիա, որը բխում է էքսպլանանսից: Էքսպլանանսը պետք է պա-

րունակի այն ընդհանուր օրենքները, որոնք իրոք անհրաժեշտ են էքսպլանանդումը բխեցնելու համար:

Եթե էքսպլանանդումը նկարագրում է որոշակի էմպիրիկ երևույթ, ապա էքսպլանանսը պետք է պարունակի էմպիրիկ ինֆորմացիա, քանի որ էքսպլանանդումը տրամաբանորեն հետևում է էքսպլանանսից:

Նկատենք, որ որքան ավելի լրիվ ու խորը լինեն տեսության բացատրությունները, այնքան ավելի հուսալի և ճշգրիտ կլինեն դրա կանխատեսումները⁴²:

Ելնելով բնագիտական տեսությունների կառուցվածքի և գործառույթների կապի առանձնահատկություններից՝ առանձնացնում ենք գիտական գիտելիքի հավաստիության, ճշմարտության, ընդունման հետևյալ հիմքերը, չափանիշները. պնդումների ճշգրտությունը, միանշանակությունը, խստությունը, համակարգայնությունը, սիստեմատիկությունը, ամհակասականությունը, ավարտվածությունը, պարզությունը, էմպիրիկ (վերիֆիկացիա, ֆալսիֆիկացիա), տեսական (ներկառուցվածքի, աշխարհի գիտական պատկերի, հարացույցի, աշխարհացույցի, սոցիալ-մշակութային համակարգի մեջ ներգրավվածություն), պատմական, պրագմատիկական (բացատրման, կանխատեսման, կիրառման մեծությունը) հիմնավորումների ամբողջությունը:

* * *

Սոցիալ-մշակութային, հումանիտար ոլորտն էականորեն տարբերվում է բնագիտական օբյեկտների, տեսությունների ոլորտից: Եթե բնագիտության առարկան ֆիզիկական, նյութական աշխարհն է, «կույր», «անգիտակցական» ուժերը, համասեռ, միօրինակ, միատարր օբյեկտները, ապա սոցիալ-մշակութային ոլորտը «գոյություն չունի մարդկային գործունեությունից դուրս. այն

⁴² См. **Рузавин Г. И.**, Методология научного исследования, էջ 191:

ստեղծվում, վերարտադրվում է վերջինիս կողմից (կարելի է ասել, կառուցվում է մարդկային գործունեության միջոցով)»⁴³:

Այստեղ մենք գործ ունենք մարդ-մարդ հարաբերության, մարդու հոգևոր, նպատակադիր գործունեության, անհատական շահերի, մտադրությունների, էկզիստենցիալ արժեքների, ինքնիշխան անհատի ներաշխարհի, սուբյեկտիվ ռեալության, ազատ կամքով, ստեղծագործաբար գործող, ինքնաճանաչող էակի, մշակութային արժեքներ ստեղծողի, պահպանողի տարածողի հետ:

Հասարակական-հումանիտար գիտությունների առարկան հասարակությունն է, անհատը, սոցիալ-մշակութային կապերը, մարդկանց փոխհարաբերությունները, հոգևոր կյանքը և գործունեությունը: Դրանք երբեմն առանձնահատուկ են, միակտանի, անվերարտադրելի:

Յուրահատուկ է նաև սոցիալական ճանաչողության առարկան: Այն և՛ օբյեկտ է, և՛ սուբյեկտ: Սոցիալական ճանաչողության առարկայում ներառվածությունն այդ առարկայում մշակութային նշանակություն ունեցող անհատական իրականությանը (Մ. Վեբեր) հաղորդում է բացառիկ բարդություն: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ հումանիտար գիտություններում հեղինակի անհատական գործոնի դերը շատ մեծ է: Թեև անհատական և ընդհանրական բովանդակություն ունեցող հասկացությունները միասնության մեջ են, այդուամենայնիվ մշակույթի մասին գիտություններում ընդհանրականը, օրինաչափն ունեն յուրահատուկ նշանակություն: Այդ օրենքները ոչ դինամիկ օրենք-միտումներ են: Եվ դա բնական է: Մարդու ներաշխարհը, նրա հոգևոր միջավայրը, անհատական գործընթացները դժվար է այնպիսի ընդհանրացման, օրինաչափության ենթարկել, ինչպիսին առկա է բնագիտության մեջ: Բնականաբար, առանձնահատուկ են նաև սոցիալ-հումանիտար գիտություններում «տեսություն» գիտելի-

⁴³ **Лекторский В. А.**, Возможно ли интеграция естественных наук и наук о человеке? // Вопросы философии, 2004, N 3, с. 48.

քի ձևի կառուցվածքն ու գործառույթները: Տարբեր է մասնավոր գիտությունների տարբեր բնագավառների տեսությունների կառուցվածքների և գործառույթների դերը: Այսպես, սոցիոլոգիական և քաղաքագիտական այն գիտելիքներում, որոնցում առկա են էմպիրիկ հիմքեր, էմպիրիկ հիմնավորման անհրաժեշտություն, այդ տեսությունների սկզբունքները, հիմնարար հասկացությունների կառուցվածքներն ընդգծված չեն: Ըստ էության, բացակայում են բնագիտական տեսություններին հատուկ կոնցեպտուալ միջուկը, համապատասխանության կանոնները: Սոցիոլոգիական տեսություններում գործ ունենք ինդուկտիվ ընդհանրացումների, էմպիրիկ օրենքների, օրինաչափությունների հետ: Այդ կարգի տեսությունների կառուցվածքը հիմնականում նկարագրական է, թեև դրանցում առկա են մասնական կոնկրետ կոնցեպտուալներ: Մեր կարծիքով, այդպիսի տեսությունների ճշմարտության, հավաստիության, ընդունման հիմքերը, չափանիշներն են՝ պնդումների ճշգրտությունը, ներքին կառուցվածքային անհակասականությունը, համակարգայնությունը, ամբողջականությունը, պարզությունը, էմպիրիկ (վերիֆիկացիա, ֆալսիֆիկացիա), տեսական (աշխարհի գիտական պատկերի, հարացույցի, աշխարհայացքի, սոցիալ-մշակութային համակարգի մեջ ներգրավվածությունը), պատմական, պրագմատիկական (բացատրման, կանխատեսման, կիրառման մեծությունը) հիմնավորումների ամբողջականությունը: Նկատենք, որ թեև սոցիալ-հումանիտար տեսություններում առկա իդեալական տիպերը, տեսական տերմինները, կոնստրուկտները երբեմն անմիջականորեն չեն հանգում դիտարկումների, գիտափորձերի, էմպիրիկ տվյալների արդյունքներին, այնուամենայնիվ դրանք ներքնապես տեսանելի են, հայելի, զգայելի: Չէ՞ որ գիտելիքի այդ տեսակի օբյեկտները, հարաբերությունները և այլն, հայելի, բացահայտելի են ոչ միայն «դրսից», այլև «ներսից»: Դա առարկայական այդ ոլորտի անքակտելի մասն է և նրա հավաստիության, ընդունելիության գրավականներից մեկը:

Ասենք, որ այդ կարգի տեսություններուն բացատրական և կանխատեսման գործառնություններն առանձնահատուկ են: Բացատրություններն ուղեկցվում են հասկացմամբ, իսկ կանխատեսումների բնույթը հավանական է: Դրանք պայմանավորված են մեծ թվով պատահական, վիճակագրական գործոնների առկայությամբ: Տեսությունների տերմինների ճշգրտությունը, միանշանակությունը, խստությունը, համակարգայնությունը, կառուցվածքայնությունը ուղղակի ազդում են նրա բացատրման, կանխատեսման հնարավորությունների վրա:

Ժամանակակից սոցիոլոգիայում ընդունված է (Ռ. Մերտոն) առանձնացնել սոցիոլոգիական տեսությունների հետևյալ տեսակները:

1. Ընդհանուր սոցիոլոգիական տեսություն՝ «տեսական սոցիոլոգիա». այն տալիս է սոցիալական ռեալության ընդհանրացված, վերացական պատկերը՝ իր ամբողջականության, զարգացման պատմության տեսակետից: ճանաչողության այդ աստիճանում ամրագրվում է սոցիալական ռեալության զարգացման և գործառնման ընդհանուր օրինաչափության կառուցվածքը: Ընդ որում՝ ընդհանուր սոցիոլոգիական տեսության տեսական և մեթոդաբանական հիմք է ծառայում սոցիալական փիլիսոփայությունը:

2. Մասնավոր, «միջին աստիճանի» սոցիոլոգիական տեսություններ. դրանց տեսական մեթոդաբանական հիմքն ընդհանուր սոցիոլոգիան է: Հետազոտության օբյեկտների առանձնահատկություններով պայմանավորված՝ մասնավոր տեսությունները բաժանվում են երկու հարաբերականորեն ինքնուրույն դասի՝ հատուկ և ճյուղային տեսությունների:

ա) Հատուկ տեսություններն ուսումնասիրում են օբյեկտների, գործընթացների, ընդհանրությունների, հանրույթների զարգացման և գործառնման ընդհանուր օրինաչափությունները, հասարակական կյանքի ոլորտը: Վերջինս պետք է հասկանալ որպես հասարակական գործունեության հարաբերական ինքնուրույն բնագավառ, որը պատասխանատու է մարդու և անհատի անմիջական վերարտադրության համար: Այդպիսիք են սեռի,

տարիքի, ընտանիքի, քաղաքի, կրթության և այլ սոցիոլոգիաները: Դրանցից յուրաքանչյուրն ուսումնասիրելիս սոցիալական երևույթների հատուկ դասը հանդես է գալիս որպես երևույթների այդ դասի համար ընդհանուր տեսություն:

բ) ճյուղային տեսությունները հետազոտում են երևույթների այդ դասի սոցիալական ասպեկտները: Ի տարբերություն հատուկ տեսությունների՝ ճյուղային տեսությունները ընդհանրական չեն երևույթների այդ դասի համար, քանի որ դրանք հետազոտում են դրա դրսևորման միայն մեկ կողմը՝ սոցիալականը: Սակայն որոշ սոցիոլոգներ կարծում են, որ սոցիոլոգիական գիտության շենքը կազմված է հինգ հարկից: Ուրիշները կարծում են, որ թեև Մերտոնի սխեման որոշակի դեր է խաղացել սոցիոլոգիայի զարգացման գործում, այդուհանդերձ այն սպառել է իր հնարավորությունները: Ուստի ոչ թե պետք է կատարելագործել այն, այլ հրաժարվել դրանից⁴⁴:

Կրկենք նախկինում արդեն բարձրացված հարցը. հնարավո՞ր է արդյոք գիտելիքի «տեսություն» ձևը հասարակության պատմության գիտելիքում: Ռուսալեզու գրականության մեջ, ըստ էության նկատի ունենալով պատմական մատերիալիզմը, պատմական տեսության մասին առաջադրվել է այն տեսակետը, համաձայն որի՝ այլ բնագավառների կայացած տեսությունների համանմանությամբ ենթադրվում է այդպիսի տեսության հնարավորությունը նաև պատմական գիտելիքում⁴⁵: Այդ տեսության հիմնական բնութագրիչներից են համարվում էմպիրիկ ստուգելիությունը, տվյալ ժամանակաշրջանի մտածողության ոճի մեջ ներգրավվածությունը, կառուցվածքային ամբողջականությունը, համահավաքությունը, ինքնուրույնությունը, լրիվությունը, համակարգայնությունը⁴⁶:

⁴⁴ Տե՛ս **Кахановский В. Л., Лешкевич Т. Г., Матяш Т. П., Фатхи Г. Б.**, Основы философии науки, Ростов-на-Дону, 2007, էջ 193-194:

⁴⁵ Տե՛ս **Уваров А. И.**, Гносеологический анализ теории в исторической науке, Калинин, 1973.

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 14:

Սակայն, մեր կարծիքով, խոսքը պետք է վերաբերի ոչ թե պատմական մատերիալիզմի կարգի ուսմունքին՝ որպես պատմական ռեալության փիլիսոփայական հնարավոր մեկնաբանության, որը մաքսիստները համարում են սոցիալ-պատմական իրականության միակ ճշգրիտ տեսությունը, այլ կոնկրետ պատմական տեսություններին, որոնք առայժմ չկան:

Ասենք, որ ժամանակակից մեթոդաբանական գրականության մեջ ընդունված է տեսություն համարել գիտելիքի այն ձևը, որն ունի հետևյալ առանձնահատկությունները.

1. Տեսությունը ոչ թե առանձին հավաստի գիտական դրույթ է, այլ դրույթների համախումբ: Այն ամբողջական, օրգանական զարգացող համակարգ է: Տեսության մեջ գիտելիքների միավորումը տեղի է ունենում նախ և առաջ հետազոտող առարկայով, նրա օրինաչափություններով:

2. Հետազոտվող առարկաների ոչ բոլոր դրույթների համախումբն է տեսություն: Որպեսզի գիտելիքը վերածվի տեսության, այն պետք է իր զարգացման ընթացքում հասնի հասունության որոշակի աստիճանի: Այսինքն՝ այն պետք է ոչ միայն նկարագրի փաստերի որոշակի համախումբ, այլև բացատրի դրանք, բացահայտի երևույթների պատճառներն ու օրինաչափությունները:

3. Տեսության համար պարտադիր է դրա մեջ մտնող դրույթների հիմնավորումը, ապացուցումը. եթե չկա հիմնավորում, չկա նաև տեսություն:

4. Տեսական գիտելիքը պետք է ձգտի ընդգրկելու երևույթների հնարավորինս լայն շրջանակ, ավելի խորացնի դրանց մասին գիտելիքները:

5. Տեսության բնույթը պայմանավորված է տվյալ առարկայական ոլորտի հիմնարար սկզբունքների հիմնավորման աստիճանով:

6. Գիտական տեսությունների կառուցվածքը բովանդակորեն «սահմանված է իդեալիզացված (վերացական) օբյեկտների (տեսական կոնստրուկտորներ) համակարգված կազմակերպվա-

ծությամբ: Տեսական լեզվի ասույթներն անմիջականորեն ձևակերպվում են տեսական կոնստրուկտորների միջոցով և միայն հարաբերական ձևով, շնորհիվ արտալեզվական ռեալության նկատմամբ ունեցած հարաբերության, նկարագրում են այդ ռեալությունը»⁴⁷:

7. Տեսությունը ոչ միայն պատրաստի, ձևավորված գիտելիք է, այլև դրա ստացման եղանակ, ուստի այն «մերկ արդյունք» չէ, այլ պետք է դիտարկվի դրա առաջացման ու զարգացման հետ միասին:

Ինչպես նկատելի է ասվածից, «տեսություն» գիտելիքի ձևի կարևորագույն հատկանիշներից է ընդհանրական տեսական տերմինների, կոնստրուկտորների, օրենքների, օրինաչափությունների, բացատրությունների, կանխատեսումների առկայությունը: Կարո՞ղ ենք պնդել, թե ժամանակակից պատմական գիտելիքում առկա են այդպիսի տերմիններ, օրենքներ, օրինաչափություններ: Չէ՞ որ, ինչպես ընդունված է ասել, դրա փաստերը անհատական, եզակի, անկրկնելի, անվերարտադրելի դեմքեր, դեպքեր, իրադարձություններ են, որոնք նշանակություն են ստանում, երբ հարաբերակցում ենք համընդհանրական արժեքներին (Յ. Ռիկերտ): Իհարկե, այդ համակարգում, ըստ Ռիկերտի, գոյություն ունեն էմպիրիկ ընդհանրացումներ և ընդհանրական տերմիններ, օրինաչափություններ, սակայն դրանք ոչ թե պատմական, այլ սոցիոլոգիական, հոգեբանական ընդհանրացնող գիտություններին պատկանող տերմիններ և օրինաչափություններ են⁴⁸:

Թերևս այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ունենք Փալստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և այլ հեղինակների պատմությունների և ոչ թե պատմության այս կամ այն ժամանակաշրջանին վերաբերող տեսություններ: Սակայն մենք, ի տարբերություն Յ. Ռիկերտի, չենք բացառում, որ ապագայում սոցիալ-հումանիտար, պատմական գի-

⁴⁷ Кахановский В. Л., Лешкевич Т. Г., Матяш Т. П., Фатхи Г. Б., նշվ. աշխ., էջ 194-195:

⁴⁸ Տե՛ս Րիկերտ Գ., Науки о природе и науки о культуре, М., 1998.

տության և մեթոդաբանության զարգացման շնորհիվ կարող են ձևավորվել յուրահատուկ, ընդունելի պատմական օրինաչափություններ և տեսություններ: Չէ՞ որ պատմությունն անցյալի եղելությունների մասին գիտություն է: Իսկ հասարակությունը բաղկացած է միայն անհատական, եզակի դեմքերից, դեպքերից և իրողություններից: Դրանում մենք գործ ունենք նաև մարդկային, հասարակական տիպական, ընդհանուր, երբեմն կրկնելի գործընթացների հետ: Այն, ինչով այժմ հետաքրքրվում են սոցիոլոգիան և մարդու մասին հասարակական այլ գիտություններ, ապագայում կարող են հետաքրքրել պատմաբաններին, դառնալ պատմական հետազոտության առարկա: Պատմաբաններին պետք է մղել պատմական եղելությունների կապերի, հարաբերությունների, պատճառների, օրինաչափությունների բացահայտմանը: Դա ավելի կբարձրացնի նրանց հետազոտությունների, գիտելիքների հավաստիության, ընդունելի լինելու աստիճանը: Պատմական տեսությունները կլինեն առանձնահատուկ գիտելիքի ձևեր: Դրանք իրենց մեջ կմիավորեն եզակին, անկրկնելին և տիպականը, ընդհանուրն ու օրինաչափը:

Առայժմ մեթոդաբանական գրականության մեջ լայնորեն քննարկվում է առավել ընդունելի տեքստ ըմբռնումը: Այն չափազանց լայն ընդգրկում ունի՝ սկսած գրականության տեքստից և վերջացրած պատմագիտական տեքստով:

Հարց է ծագում, թե ինչ չափանիշներ պետք է ունենա պատմագիտական տեքստը, որպեսզի համարվի ընդունելի, հավաստի: Չտարվելով մտահայեցողական կշռադատություններով, դիտարկենք այն հարցը, թե մեթոդաբանական ինչ առանձնահատկություններ ունի այնպիսի ընդունված, ճանաչում գտած պատմագիտական տեքստը, ինչպիսին Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցն» է⁴⁹:

Այն հայ պատմագրության ամենաքննարկված, վերլուծված, ստուգված աշխատություններից է: Ըստ այդմ՝ բացահայտելով «Պատմություն Հայոցի» ընդունված, ճանաչված լինելու չափա-

⁴⁹ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Եր., 1997:

նիշները, մեզ կհաջողվի պարզաբանել պատմական տեքստի գիտական, ընդունված, հավաստի, ճշմարիտ լինելու չափանիշները:

Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության մեթոդաբանական առանձնահատկությունները

Մովսես Խորենացուն շատ բարձր են գնահատել հայ և օտարերկրացի պատմիչներն ու պատմաբանները: Այդքան լայն տարածման և հետաքրքրության պատճառներից մեկը, անշուշտ, այն հանգամանքն է, որ պատմահայրն իր ժողովրդի պատմությունը դիտարկել է համաշխարհային պատմության շրջանակներում: Նրա տեսադաշտում է գտնվել ողջ քաղաքակիրթ աշխարհը՝ Բրիտանիայից մինչև Չինաստան⁵⁰:

Մովսես Խորենացին լավ գիտակցել է «Պատմություն Հայոցի» նշանակությունը: Մասնավորապես, նշված աշխատության սկզբում նա հարկ է համարում անդրադառնալ աշխատության ստեղծման նախապատմությանը: Շատ բարձր գնահատելով «Պատմություն Հայոցը» ստեղծելու իշխան Սահակ Բագրատունու նախաձեռնությունը՝ նա գեղեցիկ ու ճոխ լեզվով ներկայացրել է ինչպես նրա կերպարը, այնպես էլ նրա մտադրությունը: Միաժամանակ, պարսավել է հայոց այն ցեղապետերին ու իշխաններին, որոնք անփույթ են գտնվել նման հիշատակարաններ գրելու նախաձեռնության հարցում:

Խորենացին «Պատմություն Հայոցի» մեջ խնդիր է ունեցել ի մի բերելու հայ ժողովրդի ամբողջական քաղաքական պատմությունը՝ նախապատմական, անհիշելի ժամանակներից մինչև իր օրերը՝ համառոտ ներկայացնելով նաև Հայաստանի հայտնի նախարարների ծննդաբանությունը:

⁵⁰ Տե՛ս **Սարգսյան Գ. Խ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Եր., 1991, էջ 88:

Խորենացու ձեռքի տակ եղել են նշանակալից, սակայն, այնուամենայնիվ, սահմանափակ քանակով պատմական սկզբնաղբյուրներ: Նա գերադասել է հիմնականում օգտվել ոչ թե պարսկական և քաղդեական աղբյուրներից, այլ իրեն հարազատ հունական պատմագիրներից: Խորենացին Հունաստանը համարել «գիտության մայր կամ դայակ», որովհետև հունաց թագավորները հոգ են տարել հունարեն թարգմանելու ուրիշ ազգերի թագավորների դիվանների և մեհյանների գրքերը: Մի բան, որ Խորենացուն հնարավորություն է տվել կարդալու այդ աղբյուրները, վիթխարի տաղանդի շնորհիվ օգտվելու իրեն հասած պատառիկներից, առասպելախառն զրույցներից, հայերի, հայկական պետության, նրա թագավորների և իշխանների վարքի ու գործունեության մասին պահպանված առանձին տեղեկություններից և, չունենալով որոշակի ուղենիշներ, հավաքել, քննական վերլուծության միջոցով մաքրել ու դասակարգել դրանք ժամանակի շղթայում, ստեղծել հայ ժողովրդի ամբողջական պատմությունը⁵¹:

Որոշ բանասերների և պատմաբանների կարծիքով՝ «Պատմահոր ներկայացրած գահակալների հաջորդականությունը հիմնված է ժողովրդական հին առասպելների վրա և գիտական արժեք չունի», որ հայոց պատմության վաղ շրջանի մասին մեր ունեցած նյութերը շատ կցկտուր են⁵²: Սակայն նկատենք, որ պատմիչի, պատմաբանի մեծությունը ոչ թե պատմական փաստերի ու տեղեկությունների պարզ վերարտադրությունն է, ժամանակի մեջ կողք կողքի դնելը, այլ դրանց հիման վրա ամբողջական, համակարգված ընդհանրացումներ կատարելու, օրինաչափություններ գտնելու կարողությունը: Ի՞նչ կլիներ, եթե այդ կցկտուր տեղեկությունները Խորենացին ի մի չբերեր: Դրանք

⁵¹ Տե՛ս Աբրահամյան Ա. Գ., Մովսես Խորենացի, Եր., 1959 էջ 33-34, Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության առաջաբանը), Եր., 1997, էջ 33-34 (այսուհետև այս գրքի հղումների փոխարեն տեքստում կնշվի միայն էջը):

⁵² Տե՛ս Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 41:

աստիճանաբար պարզապես կմոռացվեին ժողովրդի հիշողությունից, և այսօր այդ ամենը ևս չէինք ունենա:

Առաջին գրքում շարադրելով հայ ժողովրդի ծննդաբանությունը՝ Պատմահայրը այն սկսել է հայ և արմեն բառերի ստուգաբանությամբ: Հայ անվանումը կապել է նահապետ Հայկի, իսկ արմենը՝ Արամի հետ: Թեև այժմ մասնագետներն այդ ստուգաբանությունը ճշգրիտ չեն համարում, այնուամենայնիվ այն ժողովրդի հիշողության վրա հիմնված մեզ հասած առաջին վարկածն է:

Խորենացին իր խնդիրն է համարել «...ճշտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախարարական ցեղերի և տոհմերի մասին, թե ով ումի՞ց է ծագել, ի՞նչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, և ո՞րն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է, և որոնք եկվորներ են և հայացել, բնիկ են դարձել, ամեն մեկի գործերն ու ժամանակները գրով դրոշմել, անկարգ աշտարակի շինությունից սկսած մինչև ներկա ժամանակս, նկատելով այս քեզ համար գեղեցիկ փառք և բավականություն առանց նեղության (էջ 71)»:

Պատմահայրն առաջին հայ թագավոր համարում է Պարույր Սկայորդուն: Առաջին գրքում տեղեկություններ են տրվում հայմարական, հայ-պարսկական, հայ-ասորեստանյան հարաբերությունների, հայոց Արա Գեղեցիկ թագավորի և ասորական Շամիրամ թագուհու փոխհարաբերությունների, Վանի քարաժայռի վրա փորագրված սեպագիր արձանագրությունների, Երվանդյանների (Օրոնտեսների) Հայաստանում իշխանություն ունենալու, Արմավիր քաղաքի հիմնադրման մասին: Մեր կարծիքով, հետաքրքրականն այն է, որ Խորենացին ոչ միայն հաղորդում է այդ տեղեկությունները, այլև նշում է, որ նա դրանք վերցրել է Հանիի Ողյունյա քրմի աշխատությունից: (Բանասերների և պատմաբանների ենթադրությամբ՝ նա եղել է Անիի մեհենական քրմերից): Այս տեղեկությունը շատ կարևոր է պատմական գիտելիքի մեթոդաբանության տեսանկյունից: Մինչև Խորենացին հայ քրիստոնեա-

կան շրջանի մյուս պատմիչները պատմական տեղեկությունները շարադրել են իրենց տեսածի կամ ուրիշներից լսածի հիման վրա և հիմնականում իրենց աշխատություններում չեն նշել աղբյուրը, հիմքը: Խորենացին ոչ միայն նշել է աղբյուրները, այլև դա կատարել է մեծ բարեխղճությամբ: Դա հնարավորություն է տվել ստուգելի դարձնելու աղբյուրներից քաղված նյութը, որը շատ կարևոր է և՛ տվյալ ժամանակաշրջանում, և՛ հետագայում գիտելիքների արժանահավատության, հավաստիության նկատմամբ վստահ լինելու համար:

Պատմական և բանասիրական գրականությունից հայտնի է, որ պատմահոր բերած շատ տեղեկություններ հետագա պատմաբանների և հնագետների կողմից ստուգվել և ճշգրտվել են: Այսպես, Խորենացու կողմից մատնանշված Ույունյա քրմի աշխատությունից վերցված տեղեկությունները հաստատվել են Արմավիրում գտնված հունարեն ութ արձանագրությունների վերլուծությունից: Պարզվել է, որ վիմագիր արձանագրության տվյալները լիովին համապատասխանում են Խորենացու հաղորդած տեղեկություններին⁵³:

Նկատենք, որ Մովսես Խորենացին ոչ միայն խորաթափանց և բանիմաց մտածող է, որը նրան թույլ է տվել ներթափանցել իր ձեռքին եղած աղբյուրների էության մեջ, այլև լայն աշխարհայացքի տեր է: Նա կարողացել է դուրս գալ իր քրիստոնեական մտածողության, ժամանակի շրջանակներից, հայ ժողովրդի պատմագրության համար էական է համարել և դրական գնահատականներով նկարագրել նաև նրա հեթանոսական շրջանը, ավելին՝ նշել է օգտագործած աղբյուրի հեղինակի անունը, ցավոք, չնշելով, թե ինչ լեզվով է գրված եղել այդ աշխատությունը: Սակայն դա էլ բավական է եզրակացնելու, որ հայ ժողովուրդը մինչքրիստոնեական, հեթանոսական շրջանում ունեցել է իր պատմիչները և ազգային գրականությունը: Բացառված է, որ դատարկ տեղում այդքան կարճ պատմական ժամանակահատվա-

⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 44:

ծում ստեղծվեր պերճ ու ողորկ լեզվով գրված հայ քրիստոնեական կրոնական և պատմական գրականությունը: Դրա համար դարերի միջով անցած ազգային լեզվամտածողություն էր անհրաժեշտ: Միաժամանակ, ինչքան կշահեր հայ ներկա պատմագրությունը, եթե Խորենացին ավելի ամբողջական, մանրակրկիտ տեղեկություններ հաղորդեր ինչպես իր օգտագործած աղբյուրների, այդպես էլ դրանց հեղինակների մասին:

Պատմության համար մանրութենք չկան: Այն, ինչ տվյալ ժամանակի համար թվում է փոքրիկ դեպք, իրադարձություն, հետագա ժամանակների համար կարող է էական նշանակություն ունենալ: Խորենացու «Միջին պատմության» երկրորդ գրքում հիմնականում շարադրված է Ալեքսանդր Մակեդոնացու՝ դեպի Արևելք կատարած արշավանքի (331-323 թթ. Ք.ա), հայ թագավորների՝ Արտաշես I-ի (189-160), Տիգրան II-ի (95-55) և Արտավազդ II-ի (55-34) գործունեության մասին:

Խորենացու աշխատության այս բաժինը հետաքրքիր տեղեկություն է պարունակում Արտաշես I-ի մասին: Համաձայն դրանա՝ հրամայել է գծել գյուղերի ու քաղաքների սահմանները՝ կանգնեցնելով քառակուսի տաշած քարեր՝ պնակի նմանությամբ՝ փորվածքներով: Խորենացու քննադատներն այդ տեղեկությունները համարել են անարժեք՝ հարցնելով՝ եթե Արտաշեսը նման սահմանային քարեր կանգնեցրել է, ապա ուր են դրանք: Հետագայում Սևանի ափերին գտնվեց երեք այդպիսի քար՝ արամեատառ արձանագրություններով: Առաջինը ակադեմիկոս Հ. Օրբելին է կարծիք հայտնել, որ դրանք պատմահոր վկայած սահմանային քարերն են: Արամեատառ այդ արձանագրությունների վերծանությունից պարզվեց, որ, իրոք, դրանք հայոց Արտաշես I-ի արձանագրություններն են, և այնտեղ նշված է Արտաշեսի անունը⁵⁴:

Նկատենք, որ պատմական գիտելիքների ոչ բոլոր պնդումների ու վարկածների համար կարելի է փաստական հիմքեր գտնել:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 46-47:

Ժամանակի ընթացքում դրանք մոռացվում են մարդու պատմական հիշողությունից, իսկ նյութական արժեքները կարող են փոշիանալ և կորչել: Ուստի պատմական աշխատությունը պետք է գնահատել իր ամբողջականության մեջ: Եթե նրա հիմնական, առանցքային ըմբռնումները, պնդումները ստուգվում են և հաստատվում, ապա համանմանությամբ և այլ ձևերով եզրակացնում ենք նրա մյուս դրույթների և ամբողջ աշխատության մասին: Ասենք, որ բնագիտական գիտելիքում ևս ոչ բոլոր դրույթները, պնդումները անմիջական էմպիրիկ, փաստական հիմնավորում ունեն: Դրանք երբեմն պայմանավորված են տրամաբանական, կառուցվածքային, գեղագիտական, տեսական, ժամանակի հարացուցային (պարադիգմալ), աշխարհայացքային, պատմական, պրագմատիկական և այլ հիմքերով ու հիմնավորումներով: Պարզապես, քանի որ պատմական գիտելիքն ավելի փաստական է, ապա այդ բոլոր հարաբերություններն ավելի թույլ են դրսևորվում:

Խորենացու Երրորդ գիրքն ընդգրկում են 110 տարվա պատմություն: Այս գրքում ավելի հանգամանորեն խոսվում է Արշակունիների մասին: Գիրքն ավարտվում է հայ-պարսկական հարաբերություններով, երբ Պարսկաստանում սկսում է իշխել Սասանյան արքայատոհմը:

Այս բաժնում նա գրել է նաև քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու և այդ գործում Տրդատ Գ-ի և Գրիգոր Լուսավորչի դերի մասին:

Խորենացին նկարագրել է նաև Տրդատ Գ-ի (298-330 թթ.) շինարարական աշխատանքները Գառնիի ամրոցում, նրա կատարած կառուցումները: Տրդատը, գրում է նա, պարիսպ է քաշել տվել որձաքարերից, որոնք իրար միացրել են երկաթե գամերով: Նա շինել է տվել նաև տաճար («տուն հովանոց») մահարձաններով և սքանչելի քանդակներով և այդ ամենը նվիրել է իր քրոջը՝ Խոսրովդուխտին՝ իր հիշատակը գրելով հունարեն գրերով (տե՛ս էջ 203):

Եվ իրոք, Խորենացու նկարագրածը հայտնաբերվել է Գառնիի տաճարի և բերդի ավերակներում, նույնիսկ հունարեն այն արձանագրությունը, որը գրել էր տվել Տրդատ թագավորը: Այդ կապակցությամբ ակադեմիկոս Յ. Մանանդյանը եզրակացրել է, որ «Պատմահայրն ինքն անձամբ եղել է Գառնիում, տեսել է ու կարդացել հունարեն արձանագրությունը»⁵⁵:

Խորենացու աշխատությունը վերջանում է «Ողբ»-ով, որում նա վեր է հանել, քննադատել այդ շրջանի հայ հասարակության մեջ տեղ գտած մարդկային այն թերությունները, որոնք, նրա կարծիքով, հանգեցրել են հայկական պետականության անկմանը: Խորենացու աշխատության այդօրինակ կառուցվածքն անշուշտ քրիստոնեական ավանդույթին հետևելու արդյունք է: Այն սկսվում է պետականության սկզբի, ծննդի նկարագրությամբ և ավարտվում նրա անկման պատճառների շարադրմամբ: Խորենացին տեսել է ժամանակի հասարակության որոշ շերտերի թերությունները և մարդկային իդեալի տեսանկյունից վեր է հանել դրանք:

Թերևս, Խորենացին հայկական պետականության անկումից հետո խտացրել է հասարակական տարբեր շերտերում դրսևորվող մարդկային բացասական գծերը: Սակայն այդպիսի հատկանիշներ ունեցել են ոչ միայն այդ ժամանակաշրջանի հայ հասարակության տարբեր շերտերը, այլև դրանք գոյություն են ունեցել և ունեն բոլոր ազգերի մեջ, բոլոր պետություններում, տարբեր հասարակություններում, նույնիսկ ժամանակակից ամենաբարեկեցիկ, առաջատար պետություններում: Հայկական պետականության անկման համար դրանք, իհարկե, բացասական գործոններ են, բայց հիմնականները չեն: Բացի այդ՝ հայ պատմագիրների աշխատությունները լի են հայ հասարակության այդ նույն շերտերի դրական օրինակներով: Պարզապես մարդկանց և հասարակության տարբեր շերտերի բացասական գծերը պետութ-

⁵⁵ Մանանդյան Յ., Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանմամբ, Եր., 1946, էջ 14:

յան ու հասարակության շրջադարձային պահերին ավելի ակնառու են դառնում: Ուստի հայ պատմաբանները և հասարակագետները դեռևս պետք է խորը և բազմակողմանիորեն ուսումնասիրեն տարբեր ժամանակներում գոյություն ունեցած հայկական պետությունների անկումները պայմանավորող գործոնները, դրանց առանձնահատկությունները:

Այժմ փորձենք հասկանալ, պարզաբանել այն գործոնները, որոնք նպաստել են Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության հանրանշանակությանը: Այսինքն՝ կոնկրետ օրինակի միջոցով փորձենք բացահայտել գիտելիքի և ավելի որոշակի, պատմական գիտելիքի հանրանշանակության չափանիշները:

Մեր կարծիքով, Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցի» և ընդհանրապես պատմական գիտելիքի հանրանշանակության հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել հարաբերական ինքնուրույն չորս մասի՝ տրամաբանական, կառուցվածքային, աղբյուրների մեկնաբանման առանձնահատկություններ և պրագմատիկական:

Սկսենք առաջիններից: Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունը տարբերվում է իր ժամանակակից Կորյունի, Եղիշեի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու աշխատություններից նրանով, որ ընդգրկում է ժողովրդի պատմության ոչ թե մի փոքր հատվածը, այլ ներկայացնում է ազգի պարբերացված, համակարգված ծննդաբանությունը հնագույն ժամանակներից մինչև հեղինակի ժամանակաշրջանը: Ընդ որում, դա երկարաշունչ շարադրանք չէ: Աշխատությունը շարադրված է պարզ, ինչպես ինքն է նկատում՝ կոկիկ, համակարգված, ամբողջական, ներդաշնակ, հետևողական, պարբերացված, հետաքրքիր, համեմված գեղեցիկ պատկերներով: Ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանի գնահատմամբ՝ նշված աշխատությունը գրված է բացառիկ սահուն, ներքին հակասություններից զերծ, հետևողական ու կուռ շարադրանքով, միասնական, հատուկ հայեցակետով⁵⁶:

⁵⁶ Տե՛ս Սարգսյան Գ. Խ., նշվ. աշխ., էջ 23:

Պատմական աշխատության կառուցվածքային հիմքերը կարևոր են, և դա, մեզ թվում է, բովանդակության արտաքին կողմը է: Դրանք պատմական գիտելիքի համընդհանրական ճանաչման անհրաժեշտ բաղադրամասերից են:

Իհարկե, պատմական գիտելիքի բովանդակության համար ամենակարևորը պատմական աղբյուրներին առնչվող աշխատանքն է: Այդ տեսակետից Խորենացին տարբերվում է իրեն նախորդած հայ պատմիչներից: Նա ոչ թե իր նախորդների նման միայն նկարագրել է դեպքերը և իրադարձությունները՝ հենվելով իր տեսածի և ուրիշներից լսածի վրա, այլ տեղեկություններ է քաղել մի քանի աշխատություններից, որոնցից գլխավորները բարեխղճորեն հիշատակել է՝ նշելով դրանց հեղինակների անունները:

Ինչպես պարզել են Խորենացու պատմության ուսումնասիրողները, նա օգտվել է ավելի քան քառասուն հեղինակի պատմական նյութերից, դատողություններից, նկարագրություններից, պատկերավոր դարձվածքներից և այլն: Հայ պատմագրությունում կա տեսակետ, որ Մովսես Խորենացին առաջին գիրքը գրելիս օգտվել է Ս. Գրքից, Մար Աբաս Կատինայից, Հուլիոս Ափրիկանոսից, Լաբաբնա Եղեսացուց, Աբյուղինոսից, Խոռհոբուղից, Կեփաղիոնից, Եպիփանոս Կիպրացուց, Ողիմպիադորոս փիլիսոփայից և ուրիշներից: Այդ կապակցությամբ Գ. Սարգսյանը նկատում է. «Ընդհանուր հայացք նետելով Մովսես Խորենացու օգտագործած աղբյուրների կազմին՝ կարելի է զարմանալ, թե որքան բազմազան ու տարաբնույթ են դրանք եղել: Դեռևս V դարում նա պրպտել և «Հայոց պատմության» մեջ օգտագործել է սկզբնաղբյուրների ըստ էության այն բոլոր տեսակները, որոնց վրա հիմնվում են ժամանակակից պատմաբանները: Հիրավի, նա չի անտեսել գրավոր աղբյուրների և ոչ մի տարատեսակ՝ ընդգրկելով նաև վիմագրերը: Քննախույզ հայացքով հետազոտել է և իր նպատակին է ծառայեցրել բանավոր աղբյուրները: Ուժերի ներածին չափով դիմել է նյութական աղբյուրներին: Վերջապես, որ-

պես սկզբնաղբյուր է օգտագործել իրեն հայտնի լեզուները՝ հետևելով ժամանակի լեզվաբանական պատկերացումներին ու հետազոտական եղանակներին»⁵⁷:

Երկրորդ գիրքը գրելիս նա օգտվել է հույն և ասորի հեղինակներից՝ Յերոդոտոսից, Ողյումպ քրմից, Պողիկրատեսից, Արիստոն Փեղղացուց, Բարդաժանից, Հովսեփիոս Փլաբիոսից և ուրիշներից:

Երրորդ գիրքը գրելիս օգտվել է հայ պատմիչներ Ագաթանգեղոսից և Փավստոս Բուզանդից⁵⁸:

Պատմական աղբյուրների պակասը Խորենացին լրացրել է նյութեր քաղելով նաև ժողովրդական երգերից, զրույցներից, առասպելներից և ավանդություններից: Նկատենք, որ շատ դժվար է ոչ ճշգրիտ աղբյուրների, այլն էլ ժողովրդական հիշողության մեջ մնացած երգերի և ավանդությունների հիման վրա իրական, բնական դեպքեր շարադրել: Այն, որ որոշ դեպքերում նրան հաջողվել է ճշգրիտ կռահումներ կատարել, խոսում է պատմական դեպքերի մեջ ներթափանցելու նրա զարմանահրաշ ունակության, ինտուիցիայի, երևակայության, բարձր կուլտուրայի մասին:

Բացի այդ՝ պատմիչի և պատմաբանի մեծությունը ոչ միայն իր օգտագործած աշխատությունների հեղինակներին հղում կատարելն է, այլև այն, թե դա ինչպես է կատարում, ինչ որակով: Յուրաքանչյուր մարդ, այդ թվում պատմիչներն ու պատմաբանները որոշակի աշխարհայացքի, աշխարհզգացողության, աշխարհըմբռնման, շահերի, գիտելիքների կրող են: Ապրում են որոշակի տարածության և ժամանակի, ինչպես ասում են՝ որոշակի հարացուցային ոլորտում: Իսկ այդ ամենն իր կնիքն է թողնում պատմաբանի գրած աշխատության վրա: Որպեսզի ասվածն ավելի հստակ լինի, օրինակ բերենք Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց» աշխատությունը⁵⁹:

⁵⁷ Նույն տեղում, էջ 22-23:

⁵⁸ Տե՛ս Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 35:

⁵⁹ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983:

Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոցը» Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու պատմական անցքերի նկարագրությունն է: Ամբողջ գործընթացը ներկայացված է կրոնահրաշագործական ըմբռնումների և պատկերների միջոցով: Աշխատության մի մասն առհասարակ նվիրված է քրիստոնեական վարդապետության քարոզին: Հիմքեր չունենք կասկածելու, որ Ագաթանգեղոսը պատմական դեպքերն ըմբռնել է այնպես, ինչպես նկարագրել է:

Այժմ հայրենական աշխարհիկ պատմագրությունը այդ նույն պատմական դեպքերը նկարագրում ու գնահատում է բնականոն հիմքերով: Ինչպես երևում է, ժամանակի ընթացքում տեղի է ունեցել այդ նույն պատմական դեպքերի պատճառների, հիմքերի բացահայտման ու գնահատման աշխարհայացքային փոփոխություն: Դա է պատճառը, որ որոշ պատմաբաններ և փիլիսոփաներ համոզված են, որ ամեն մի ժամանակաշրջանում պատմաբանները գրում են նոր պատմություն: Հիմնավորումը այսպիսին է, քանի որ մենք չենք կարող ցանկացած ժամանակ նույն պատմական դեպքերը, երևույթները, գործընթացները վերարտադրել, ստուգել փորձնական ճանապարհով, ինչպես բնագիտության մեջ, ուստի դրանք, ըստ էության, մնում են անճանաչելի, ռեյատիվ, որոշ հեղինակների, ժամանակաշրջանի սուբյեկտիվ մեկնաբանությունների արդյունք: Նկատենք նաև, որ բնագիտության մեջ ևս էմպիրիկ փաստերն ունեն տեսական, աշխարհայացքային բեռնվածություն: Այնուամենայնիվ, ի տարբերություն բնագիտական գիտությունների օբյեկտների, սոցիալական, հումանիտար գիտությունների օբյեկտներն ու հարաբերությունները, որոնք բնույթով շատ ավելի բարդ ու նուրբ և անհատական են, կարելի է ավելի խորը հասկանալ ու ճանաչել ներսից: Ահա, մեր կարծիքով, Մովսես Խորենացին կարողացել է համադրել հայ ժողովրդի պատմության նկատմամբ կիրառված, պայմանականորեն ասած, ճանաչողության օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումները: Նա ոչ միայն օգտվել է որոշակի աղբյուրներից և հղում է

կատարել դրանց ստուգելի դարձնելով շարադրածը, այլև իր բարձր հոգեկան կերտվածքի ազնվության, շիտակության, խորաթափանցության, անկողմնակալության շնորհիվ կարողացել է ներթափանցել պատմական դեպքերի, հարաբերությունների մեջ, զգալ ու հասկանալ դրանք ներսից, լրացնել աղբյուրների տեղեկատվական բացերը: Նրան հետաքրքրել է ճշմարտությունը, թե ինչպիսին են եղել պատմական դեմքերն ու դեպքերը: Նա կարողացել է քննադատաբար ժամանակի շերտերից մաքրել, բյուրեղացնել արժանահավատը, դրանք ի մի բերել, դասակարգել և աստիճանակարգել: Խորենացին այնքան բանիմացորեն ու քննադատաբար է օգտվել պատմական աղբյուրներից, որ որոշ մասնագետներ իրավացիորեն ասում են, որ նա վեր է բարձրացել միջնադարյան պատմիչի աստիճանից և հասել է մինչև գիտուն պատմաբանի աստիճանի⁶⁰:

Այս տեսանկյունից հետաքրքրական է Մար Աբաս Կատինայի «Պատմություն»-ից Խորենացու օգտվելու օրինակը: Նա ոչ միայն օգտվել է այդ աղբյուրից և նշել հեղինակի անունը, այլև տեղեկություններ է հաղորդել, թե ինչպես է գրվել այդ աշխատությունը, որն անշուշտ, կարևոր է հետազայում աղբյուրի բովանդակությունը գնահատելու համար: Նշված աշխատությունը գրելու պատմությունն այսպիսին է: Պարսից և Պարթևաց թագավոր Արշակ Մեծի կողմից Չայոց աշխարհի վրա թագավոր կարգված Վաղարշակ թագավորը, կարգի բերելով իր թագավորությունը, կամեցավ իմանալ, թե ովքե՞ր և ինչպիսի՞ մարդիկ են տիրելիս եղել Չայոց աշխարհի վրա իրենից առաջ, արդյոք ինքը քաջերի՞ տեղն է գրավում, թե՞ ապիկարների: Նա գտնում է մի ուշիմ ասորու՝ քաղդեերեն և հունարեն գրության մեջ վարժ, և ուղարկում իր եղբոր՝ Արշակ Մեծի Մոտ՝ խնդրելով նրա առաջ բանալ արքունական դիվանը (տե՛ս էջ 81):

Արշակ Մեծը, Մար Աբաս Կատինայից ընդունելով գրությունը, հրամայում է ուղեկցել նրան արքունական դիվան, որ Նին-

⁶⁰ Տե՛ս Աբրահամյան Ա. Գ. մշվ. աշխ., էջ 36:

վելում էր: Մար Աբասը, աչքի անցկացնելով բոլոր մատյանները, գտնում է հունարեն մի մատյան: Այս մատյանն Ալեքսանդրի հրամանով քաղդեերենից թարգմանված է եղել հունարենի և պարունակել է հների ու նախնիների պատմությունները: Մար Աբաս Կատինան, այս մատյանից հանելով միայն հայերի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով, բերում է Մծբին, Վաղարշակ թագավորին: Վերջինս, ընդունելով այն, համարելով առաջինն իր զանձերի մեջ, հրամայում է մեծ զգացողությամբ պահել արքունիքում և մի մասը նրանից դրոշմել արձանի վրա (տե՛ս էջ 82): Խորենացու համար աղբյուր է ծառայել հենց այդ մատյանը, և, ինչպես ինքն է գրում՝ մեր բնիկ նախարարությունները հասցնելով մինչև քաղդեացոց Սարդանապալը (տե՛ս էջ 83):

Մենք, իհարկե, չենք անդրադառնա պատմական անցքերի մանրամասներին, քանի որ դրանք դուրս են մեր քննության շրջանակից: Մեզ հետաքրքրում են Խորենացու՝ պատմության կառուցման մեթոդաբանական կողմը և աղբյուրներից օգտվելու առանձնահատկությունները: Մեր կարծիքով, նույնիսկ Մար Աբաս Կատինայի մատյանի ստեղծման պատմության շարադրանքը Խորենացին պատահական չի արել: Նա դրանով վստահություն է ներշնչում այդ մատյանի բովանդակության նկատմամբ: Հետագա պատմությունները շարադրելիս նա ազատորեն հենվում է այս աղբյուրի վրա և նշված վստահությունը հաղորդում է իր ընթերցողներին: Այսպես, Հայկ Նահապետի սերունդների գործունեությունը նկարագրելիս Խորենացին բազմաթիվ տեղերում վկայակոչում է Մար Աբասի մատյանը՝ կարծես ցանկանալով նշել, որ ոչ թե կամայականորեն հորինել է այդ պատմությունը, այլ քաղել է ավելի վաղ գոյություն ունեցող վստահելի աղբյուրից: Ելնելով Խորենացու պատմության մեջ տեղ գտած տեղանունների ստուգումից մասնագետները կարծում են, որ Մար Աբաս Կատինայի մատյանն իր ժամանակի որակյալ աշխատություններից մեկն է եղել:

Բերենք այն հատվածը, թե ինչու Խորենացին Մար Աբասի ասածները գերադասում է Կեփաղիոնի պատմություններից: «Բայց մեզ ավելի հավանական է թվում Մար Աբաս Կատինայի կատարած քննությունը քաղղեական մատյանների, քան այս, որովհետև տեղին է պատմում և պատերազմի պատճառն էլ հայտնում է: Բացի սրանից՝ մեր աշխարհի առասպելներն էլ արդարացնում են բազմահարուստ ասորուն, թե այստեղ է պատահել Շամիրամի մահը, նրա հետիոտն փախչելը, ծարավելը, ջրի պակասելը, ջուր խմելը, այլև՝ սուսերավորների մոտենալիս հառութները ծովը նետելը և նրա ասած խոսքը: «Ուլունք Շամիրամայ ի ծով»: Բայց եթե առասպել ախորժում ես՝ Շամիրամը Նիոբեից առաջ քար դարձավ (էջ 97):

Նկատելի է, որ Խորենացին այնքան էլ բարձր չի դասում ժողովրդական հիշողությունների, զրույցների, առասպելների հիման վրա ստացված պատմական տեղեկությունները, սակայն այն դեպքում, երբ դրանք համընկնում, խաչաձևվում են օտար աղբյուրներից ստացված տեղեկատվությանը, ապա այդ ամենը նրա համար դառնում է ավելի վստահելի և արժանահավատ: Ինչպես ինքն է բնութագրում աղբյուրներից օգտվելու իր սկզբունքը, նա արդարաբար և ուղղամտորեն հնագրություններից հավաքել է ամենը՝ նրա մեջ չներառելով ոչ մի ինքնահնար կամ անպատշաճ բան՝ կարևորները տարբերելով ոչ կարևորներից (տե՛ս էջ 97):

Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցի» մարաբասյան աղբյուրը հետաքրքիր է նրանով, որ դրանում պատմահոր քննադատներն անճշտություն են հայտնաբերել: Բանն այն է, որ հայ Վաղարշակ թագավորի օրոք Նինվե քաղաքում արքունական դիվան գոյություն չի ունեցել:

«Պատմության Հայոցի» քննադատներն անգամ ժխտել են Մար Աբասի գոյությունը՝ համարելով նրան շինծու, Խորենացու կողմից հորինված անձնավորություն: Սակայն հետագայում պարզվել է, որ այդ հեղինակը պատմական անձնավորություն է:

Մեզ է հասել նրա մի այլ աշխատությունը՝ արաբերենով՝ ասորատառ, որն այժմ գտնվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում⁶¹:

Ցավոք, Խորենացու նշած Մար Աբասի աղբյուրը մեզ չի հասել, որպեսզի կարողանայինք համեմատության միջոցով գնահատել, թե պատմահայրը ինչքանով է օգտվել այդ աղբյուրից, սակայն պատմական աղբյուրների նկատմամբ նրա ընդհանուր մոտեցումը խոսում է Խորենացու ազնվության, բարեխղճության, խորաթափանցության մասին: Այսպես, խոսելով Սահակ Պարթևի՝ Պարսկաստանում արտասանած հրապարակային ճառի մասին՝ նա հրաժարվում է այն զետեղել իր պատմության մեջ այն պատճառաբանությամբ, որ այդ ճառի հավաստի բնութագիրը իր ձեռքի տակ չունի:

Զստուգված աղբյուրները Պատմահայրն անվանում է «անմիտ», «անհանճար» աղբյուրներ:

Այդ դեպքում ինչով է պայմանավորված այն հանգամանքը, որ Խորենացու «Պատմություն Հայոցի» մեջ հետագա ուսումնասիրողները հայտնաբերեցին որոշ անճշտություններ և, ինչպես ասում են, անախրոնիզմներ (ժամանակավրեպություններ): Բանն այն է, որ ինչքան էլ պատմաբանը ազնիվ, բարեխիղճ, գիտուն և խորաթափանց լինի, այնուամենայնիվ նրա ունեցած աղբյուրները սահմանափակ են, բացի այդ, նա սահմանափակված է նաև իր ժամանակաշրջանի գիտելիքների, պատկերացումների, համապատասխան մեթոդների, խնդիրների, զգացողության, արժեքների, աշխարհայացքի, մտածողության և այլ գործոնների շրջանակներով: Այսպիսով, Խորենացու «թերացումը» ոչ թե անբարեխղճության, պատմական փաստերի միտումնավոր խեղաթյուրման, այլ սկզբնաղբյուրների պակասության հետևանք է: Բացի այդ, նա, առաջինը լինելով, ստիպված է եղել կցկտուր աղբյուրներից, փաստերից ստեղծել, շարադրել շարունակական, ամբողջական պատմություն:

⁶¹ Տե՛ս նույն տեղը, էջ 37:

Պատմական աղբյուրների բացակայությունը, ինչպես ասացինք, Խորենացուն ստիպել է շատ դեպքերում պատմական տեղեկություններ քաղել ժողովրդական բանահյուսությունից⁶²:

Հեթանոսական շրջանի մշակութային գործերին որպես պատմական աղբյուրների դիմելը և դրանք նշելը, ինչպես ասել ենք, խոսում է Մովսես Խորենացու լայն աշխարհայացքի, իր ժամանակի «քարանձավից» դուրս գալու կարողության մասին: Ըստ Ստ. Մալխասյանի՝ պատմահայրը հետևել է Եվհեմիրյան փիլիսոփայական ուսմունքին, ըստ որի՝ մարդկանց կողմից պաշտվող աստվածները ո՛չ թե իրոք աստվածներ են, այլ եղել են սովորական մարդիկ, միայն թե աչքի են ընկել իրենց արտակարգ ուժով և ընդունակությամբ, ուստի աստվածացվել են ժողովրդական ավանդություններում⁶³:

Հետևելով այդ գաղափարին՝ Խորենացին աշխատել է քննադատորեն գունագարդումից մաքրել առասպելական հերոսներին: Ընդ որում, նա առասպելների մեջ էլ տարբերություն է դնում: Խորենացուն առանձնապես դուր չեն եկել պարսկական անհավանական, չափազանցություններով լի առասպելները: Այսպես, երբ Սահակ Բագրատունի իշխանը նրան պարտադրում է շարադրել նաև պարսկական առասպելները, Խորենացին Բագրատունուն հակադարձում է (տե՛ս էջ 113-114):

Ինչպես նկատելի է, Խորենացին իր խնդիրը համարել է ոչ միայն հայոց հների պերճ ու ողորկ, պատճառական պատմության շարադրումը, որը պատմական գիտելիքի կարևոր առանձնահատկությունն է, այլև պատմական անցքերը ստույգ, ճշմարիտ պատմելը: Իսկ դա պատմական գիտելիքի հիմքն է: Պատմահայրն իր աշխատությունում բազմաթիվ անգամներ ընդգծում է, որ իր նպատակը ոչ թե հայոց թագավորների, իշխանների ծննդաբանության, գործերի մասին հետաքրքիր պատմություն

⁶² Տե՛ս նույն տեղը, էջ 51-52:

⁶³ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն (Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության առաջաբանը), էջ 35:

հորինելն է, այլ դրանց ստույգ, ճշմարիտ շարադրումը: Դա, ինչպես նշեցինք, նրան հեշտ չի տրվել:

Խորենացին աշխատել է իր պատմության մեջ շարադրել դեպքերի և մարդկանց բնական ընթացքը՝ որպես երկրածին գործողություններ: Այսպես, Հայկի թոռան Պասքամից սերված Տորքի մասին ասում է. «Պոնտոս ծովի ափին պատահել է թշնամիների վրա է հարձակվել, նրանք հեռացել են խոր ծովը մոտ ութ ասպարեզ: Չկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրած Ժայռեր և շարտում նրանց հետևից: Ջրերի ալեկոծվելուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի ալիքները մնացած նավերը շատ մղոներ առաջ են քշում: Ո՛հ, չափազանց առասպել է այս, առասպելների առասպել: Բայց ի՞նչ կանես, որ մարդը սաստիկ ուժեղ էր և այսպիսի զրույցների արժանի» (էջ 127-128):

Չափազանցության մեկ այլ օրինակ է Երվանդ թագավորի մասին զրույցը (տե՛ս էջ 158-159):

Ժողովրդական ավանդության խորենացիական բնական մեկնաբանման օրինակ է Գողթան երգիչներից վերցված՝ Արտավազդի մասին զրույցը: Տիգրան IV-ի մասին գրելիս երևում է, թե Խորենացին որքան զգույշ է պատմական նյութի ընտրության հարցում: Նա իր առջև խնդիր է դրել գրելու միայն ճշմարտությանը վայել պատմություն: Քանի որ, ինչպես ինքն է նկատում, անպատշաճ, ավելորդ, անհավաստի պատմություններ շարադրելը կարող է ամբողջ աշխատությունն անպետք ու ավելորդ մի գործ դարձնել:

Ինչպես նկատելի է Խորենացու աշխատությունից, հեղինակի ձեռքին բազմաթիվ աղբյուրներ են եղել, որոնց միջև նա ընտրություն է կատարել: Լինելով համարձակ, իր գործի նշանակությունը լավ հասկացող անձնավորություն՝ նա ձգտել է զգուշությամբ և, ինչպես ինքն է գրում, ոչ անփութությամբ հավաքել հավաստին ու ստույգը, այն պատմությունները, որոնցում նշված են կոնկրետ անուններ և նրանց նահատակության տեղերը, այսինքն՝ այն ամենը, ինչը տարբեր աղբյուրների միջոցով կարելի է համեմատել, ստուգել:

Մովսես Խորենացին մեզ հայտնի առաջին հայ պատմիչն է, որը փորձ է արել պատմական դեպքերը ներկայացնել որոշակի ժամանակագրության մեջ: Նրանից առաջ հայ պատմիչներից և ոչ մեկը պատմական դեպքերի ժամանակագրության նկատմամբ ուշադիր չի եղել: Խորենացին այն կարծիքն է ունեցել, որ «Ո՛չ - պատմություն ստույգ, առանց ժամանակագրութեան (էջ 192):

Խորենացին հետաքրքիր եղանակ է գտել: Հայոց թագավորների ժամանակագրությունը կազմելիս նա զուգահեռներ է անցկացրել հայկական ու պարթև-սասանյան թագավորների և հռոմեա-բյուզանդական կայսրերի ժամանակագրության հետ: Ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը, նրա ժամանակագրական հենքը հայ ժողովրդի պատմության գիտական ժամակագրության կարևորագույն աղբյուրներից մեկն է⁶⁴:

Խորենացին ստեղծել է հայ Արշակունի գահակալների մի ցանկ՝ հայ թագավորներին ըստ գահակալության տարիների հաջորդականությամբ տեղավորելով այդ ցանկում՝ սկսած Վաղարշակ Առաջինից մինչև Արշակունիների արքայատոհմի անկումը (428 թ.):

Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության գիտական կարծիքով, նրա համար կարևոր հենակետ է եղել Տրդատ III-ի գահակալության առաջին տարին «...մանրամասն հետազոտելով գտանք, որ Տրդատը թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում, և այս կողմերն եկել է մեծ զորքով» (էջ 192):

Պատմահայրը գիտեր, թե Տրդատից հետո ո՞ր թագավորներն են գահակալել Հայաստանում և քանի՞ տարի, ուստի նրա համար դժվար չի եղել ժամանակագրական ցանկի մեջ տեղադրել նրանց: Միաժամանակ, Խորենացու քննադատների կարծիքով, նրա կազմած ժամանակագրական ցանկը ունի թերություններ, մանավանդ հնագույն շրջանի համար: Այնուամենայնիվ, անվիճելի է, որ ժամանակագրական այդ ցանկը որքան ավելի է մոտեցել

⁶⁴ Տե՛ս **Սարգսյան Գ. Խ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Եր., 1965, էջ 6:

հեղինակի ապրած ժամանակներին, այնքան ավելի ճշգրիտ է դարձել: Այսպես 287-ից 428 թվականների պատմությունը ամենից հավաստի ժամանակային տվյալներն է պարունակում: Այժմ այդ տվյալները փոքրիկ սրբագրությամբ աղբյուրներ են ծառայում հայ ժողովրդի պատմության դասընթացների մեծ մասի համար:

Այդ ամենը խոսում է Խորենացու՝ որպես պատմաբանի, ինչպես արդեն ասել ենք, ազնիվ, համարձակ ու բարեխիղճ լինելու մասին: Միայն նման հատկանիշներ ունենալու դեպքում կարելի է պատմական արժեքավոր, հանրաճանաչ աշխատություն գրել: Նշվածը հիմնավորելու համար բերենք հայտնի մի օրինակ ևս: Արևելագետների մեջ եղել են ուսումնասիրողներ, որոնք Խորենացու ցանկում կասկածի տակ են առել պարթևական թագավորների ժամանակագրությունը: Սակայն գերմանացի գիտնական Գուտշմիտը, համեմատական ուսումնասիրության ենթարկելով պարթևական դրամների և պատմական օժանդակ այլ նյութերի տվյալներ, ապացուցել է, որ Խորենացու նշած պարթևական թագավորների մահվան տարիները ճշգրիտ համապատասխանում են ժամանակակից դասական հեղինակների տվյալներին⁶⁵:

Պատմական լուրջ աշխատությունը ժամանակագրությունից տարբերվում է այն բանով, որ վերջինս ժամանակի մեջ դեպքերի պարզ, հայեցողական ընթացքի շարադրանք է, թեև նման աշխատություններում ևս առկա է որոշակի մոտեցում, ընտրողականություն: Խորենացու «Պատմություն Հայոցը» տարբերվում է այդօրինակ աշխատություններից այն բանով, որ հեղինակը, վերլուծելով, գնահատելով պատմական փաստերը, հասարակական, քաղաքական, եկեղեցական և մշակութային գործիչների ճիշտ կամ հոռի ընթացքը, ազգի, ժողովրդի ինքնաճանաչման միջոցով ուղղորդում, կողմնորոշում, դաստիարակում է գալիք սերունդներին: Նրա համար բարձրագույն արժեքներ, ուղեցույցներ, իդեալներ են եղել առողջ հայրենասիրությունը, ազգային, ինքնիշխան

⁶⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 74-75:

պետականությունը և ժողովրդի բարեկեցությունը: Նա անձամբ տեսել էր հայրենի պետականության կորուստն ու օտար տիրապետության հաստատումը, ուստի չափազանց բարձր էր գնահատում վերոնշյալ արժեքները:

Խորենացին բարձր է գնահատել ազատության և անկախության արժեքները: Նա սիրով է պատմում Հայկ Նահապետի մասին ժողովրդական ավանդապատումը՝ դրա մեջ բացահայտելով հիշյալ արժեքները: Այսպես, ըստ Խորենացու, Հայկը և Բելը իրենց զորքերով իրար են հանդիպում Վանա լճի հարավում գտնվող մի դաշտավայրում: Ճակատամարտից առաջ Հայկը հավաքում է իր զորքին և կոչով դիմում նրանց. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խումբ բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք» (էջ 85):

Այժմ դժվար է ասել՝ Հայկը նման կերպ արտահայտվել է, թե ոչ, սակայն, քանի որ ժողովրդական գրույցի, հիշողության մեջ այն այդպիսի տեսք է ստացել, ուրեմն դա հայ ժողովրդի հավաքական կամքի արտահայտությունն է: Խորենացին, լինելով իր ժողովրդի մի մասնիկը, նրա հոգում տեղ են գտել հենց այդ արժեքները, որոնք մարմնավորվել են Հայկի և Բելի պատմության մեջ: Այսպիսով, պատմահայրը ոչ թե իր կամայական արժեքներն ու գնահատականներն է պարտադրում պատմական նյութին, այլ այդ արժեքները քաղելով անցյալից՝ դրանք բյուրեղացնում և պատգամում է հաջորդ սերունդներին: Այսպես, խոսելով հայ նահապետներից Հայկյան Արամի մասին, Խորենացին նրան բնութագրում է որպես աշխատասեր և հայրենասեր մարդ, ով «լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա» (էջ 89):

Պատմահայրն առանձնապես բարձր է գնահատում այն իշխաններին ու թագավորներին, որոնք նպաստել են հայկական պետության ամրացմանը և հայրենիքի տնտեսական, քաղաքական, մշակութային առաջադիմությանը: Նրանք «մահկանացու ծնվում են, բայց անմահանում են», «անմահ հիշատակ են թողնում իրենց համար»: Նման հայ գահակալի տիպար է Տիգրան Մեծը. «... սա,- գրում է Խորենացին,- մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն է և նրանցից բոլորից քաջ» (էջ 103):

Տիգրան Մեծը ստեղծել է միասնական ուժեղ պետություն, կազմակերպել է մարտունակ բանակ, սանձել է տեղի կենտրոնախույս նախարարներին՝ պայմաններ ստեղծելով երկրի հարստության մեծացման համար:

«Եվ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական բարքի և խոհականության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ (օտարների) լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ, մթերքներ ոսկու և՛ արծաթի, և՛ պատմական քարերի, և՛ զգեստների, և՛ զանազան գույների, և՛ գործվածքները՝ տղամարդկանց և կանանց համար առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ դյուցազունների էին նմանվում» (էջ 103-104):

Խորենացին միանգամայն այլ՝ բացասական գնահատականներ է տալիս այն իշխաններին ու գահակալներին, որոնք չեն նպաստել հայկական պետականության ու ժողովրդի բարգավաճմանը: Նման կերպ է բնութագրում Տիգրանի որդուն՝ Արտավազդին: «Բայց ուրիշ ոչ մի արիություն և քաջության գործ ցույց չտվեց, այլ անձնատուր էր եղել կերուխումի, թափառում էր ճախճախոտ տեղերում, եղեգնուտներում, քարափներում, վայրի էշեր և խոզեր որսալով, անփույթ լինելով ուսման, քաջության և բարի հիշատակների, միայն իր փորի ծառան և ստրուկ դառնալով աղբանոցներն էր մեծացնում: Իր զորքից պախարակվելով իր ան-

գործ ծուլության և սաստիկ որովայնամոլության պատճառով...» (էջ 140):

Իսկ Տիգրան IV-ի մասին գրել է. «Նա երկար ապրեց, քառասուններկու տարի, բայց ոչ մի արիության գործ ցույց չտվեց, որ արժանի լիներ հիշատակելու, բայց մի հույն աղջկանից կալանավորվեց...» (էջ 177):

Պատմահայրն առանձնապես բացասական է գնահատել հայրենիքի դավաճաններին: Մասնավորապես դա դրսևորվել է Մերուժանի դավաճանական գործերը պատմելիս: Ըստ նրա՝ Մերուժանը փառասեր անձնավորություն էր: Հայաստանի թագավոր լինելու տենչով տարված՝ գործիք է դարձել պարսից Շապուհ թագավորի ձեռքին և պարսկական զորքերի գլուխ անցած՝ մտել է Հայաստան, ավերել երկիրը, կոտորել բնակչությանը: Բայց հայ մարտիկներին վերջապես հաջողվում է Ձիրավի ճակատամարտում բռնել այդ «չար և ամբարիշտ» իշխանին և դատել: Հայ զինվորականները կեռ օղ դարձրած շամփուրը կարմրացնում և իբրև պսակ դնում են Մերուժանի գլխին: Հայոց Սմբատ սպարապետը այսպես է ասում., «Քեզ պսակում են Մերուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա թագավորելու, և իմ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրենի իշխանության կարգով: Եվ կրակի նման կեծ (շամփուրը) դրեց Մերուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց» (էջ 241):

Անշուշտ, պատմաբանը որոշակի արժեքների տեսանկյունից է գնահատում, ուղղորդում պատմական դեպքերը: Սակայն հորենացու աշխատության մեջ պատմական աղբյուրների օբյեկտիվ բովանդակությունը համընկել է համապատասխան դեպքերի, անձնավորությունների նրա գնահատականներին: Պատմական չէ, որ նշված աշխատությունը, անցնելով դարերի միջով, արժանանալով բազմաթիվ պատմաբանների քննախույզ հայացքին, նոր հայտնաբերված, բացահայտված աղբյուրների, գիտելիքների ու պատկերացումների ծանրության տակ անգամ պահպանել է իր արժեքը, հանրանշանակությունը, վերածվել է արժե-

քավոր պատմական աղբյուրի: Ամբողջ աշխատության միջով անցնում է պատմահոր իդեալը՝ ազատ, անկախ, ուժեղ պետության գաղափարը, որի գլխին արի, խելացի, բանիմաց միապետն է, իսկ հենքը հլու-հնազանդ, նրա հետ համագործակցող նախարարներն են և հլու-հպատատակ, քաջարի, կարգապահ, աշխատասեր ժողովուրդը: Դա ավատատիրական պետականության հիերարխիկ աստիճանակարգության գաղափարն է, որն այդ ժամանակաշրջանում այլ կերպ հնարավոր էլ չէր պատկերացնել: Սակայն այդ գաղափարը ինքնանպատակ չէ: Նպատակը պետության բարեկեցությունն է և ժողովրդի բարօրությունը: Իսկ դրան հասնելու հիմնական միջոցը խորենացին համարել է գիտությունը և արվեստը, սիրելն ու հովանավորելը:

Նա ցանկացել է, որ իր հարազատ ժողովուրդը գիտության և արվեստի մարզում հետևի հույն լուսամիտ ժողովրդին:

Մասնագետների կարծիքով, նույնիսկ նրա հայրենասիրությունն ազնիվ, զգաստ հայրենասիրություն է, որը չունի հիվանդոտ երանգներ և չի փոխվում հայրենամոլության (շովինիզմի): Նա համարձակ քննադատել է իր հայրենքում եղած վատն ու արատավորված, ապականված բարքերը: Նպատակը մեկն է, որ ապագա սերունդները դաստիարակվեն, դասեր քաղեն իրենց հայրենի պատմությունից և կառուցեն իրենց երազած պետությունը, դառնան լուսավոր, առաջադեմ ազգ, իրենց արժանի տեղն ունենան ազգերի ներկայանալում:

Նկատելի է, որ խորենացու արժեքային կողմնորոշումը, գնահատականները ընդգծված համամարդկային են: Երկրի վրա չկա ազգություն, որն իր համար չերազի նման համամարդկային արժեքներ:

Ընդհանրացնելով կարող են ասել, որ խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության ընդունելի լինելը և, ընդհանրապես, պատմական գիտելիքի ընդունելի լինելը, մեր կարծիքով, պայմանավորված են հիմնականում մի քանի գործոններով, հիմքերով, չափանիշներով: Դրանք են՝ տրամաբանական, կառուց-

վածքային, գեղագիտական գործոնները, հիմքերը, էմպիրիկ հիմքերի ու հիմնավորվածության ճշգրտությունը, պատմական գիտելիքների գնահատականների ու արժեքների օբյեկտիվ մոտ լինելը, համամարդկային իդեալներով կողմնորոշված լինելը: Վերջիններս կանվանենք դրական պրագմատիկական հիմքեր: Այդ հիմքերից են նաև գիտելիքի բացատրման ու կանխատեսման, պրագմատիկ կիրառման ուժը, որոնք պատմական գիտելիքում, առավել ևս Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունում, թույլ են արտահայտված: Դա իր բացատրությունն ունի: Պատմական գիտելիքի օբյեկտներն անհամասեռ են, անհատական, առանձնահատուկ, անվերարտադրելի, նկարագրական, ինչը բնորոշ է բնագիտական գիտելիքին, որի օբյեկտները շատ ավելի համասեռ են, իսկ կառուցվածքը՝ դեդուկտիվ: Այսպիսով, պատմական գիտելիքը կարող է հավակնել համընդհանրականության, եթե ունի բավարար հիմքեր, հիմնավորվածություն, համոզականություն տվյալ հասարակական խմբում և առհասարակ հասարակությունում, սոցիալ-մշակութային համակարգում: Իհարկե, առաջնայինը պատմական գիտելիքի աղբյուրների ճշգրիտ հասկացումն է և էմպիրիկ հիմնավորումը: Սակայն հարկավոր է պահպանել նաև մեր նշած մյուս հիմքերի, հիմնավորման համամասնությունը, ինչը ինտուիտիվ կերպով իրականացվել է պատմահոր աշխատությունում:

Նկատենք, որ ավելի վաղ նման չափանիշներ, իհարկե, որոշ տարբերությամբ, մենք ստացել էինք բնագիտական գիտելիքի համար և անվանել ճշմարտության չափանիշներ⁶⁶:

⁶⁶ **Ղազարյան Ա. Ս.**, Գիտական ճշմարտության մի ըմբռնման մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», N 2, 1997, **Ղազարյան Ա. Ս.**, Գիտական գիտելիքի աճի և ճշմարտության Կ. Պոպերի ուսմունքը, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, 2002:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Հիմնահարց	4
Դիտարկում, գիտափորձ	10
Գիտափորձ	14
Պատմական աղբյուր	17
Պատմական փաստ	28
Վարկածի ըմբռնումը	38
Պատմական վարկածի առանձնահատկությունները	44
Գիտական տեսություն	53
Գիտական տեսությունների հիմնական տեսակները	55
Գիտական տեսության կառուցվածքային առանձնահատկությունները	63
Գիտական տեսության հիմնական գործառույթները	71
Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատության մեթոդաբանական առանձնահատկությունները	87

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԲԵՐՏ ԴԱԶԱՐՅԱՆ

**Գիտական
հետազոտության
մեթոդաբանական
առանձնահատկությունները**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլ 7:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1